




ԶՄԻԱԾԻՆ

1990
Ա



ԽԷ
ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՅԻՆԿԱՆՈՒՄ

1990





ԲՈՎԱՆԻԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգէն Ա. Հայրապետի Սուրբ Ծննդեան բարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում	3
Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդեան տոնների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծուքյուն Ս. Տ. Վազգէն Ա. Հայրապետի և թուր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	5
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհալորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդեան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանցայց Եկեղեցու նախապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	8
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրատիճան անձնատիրությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ	10
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հեռագիրը Ռուս Եկեղեցու Նորին Սրբոքյուն Պիմեն Պատրիարքին՝ Բաքվից ուս փախստականների օգնության ֆոնդին նախատվության առթիվ	14
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը գերաշնորհ Ս. Գյուտ արքեպիսկոպոս Նազաշյանին՝ Ամասերդամի հայոց եկեղեցու վերաբացման առթիվ	15
Վերաբացվեց Ամասերդամի հայոց եկեղեցին	16
Հաղորդագրություն թիւ 4	18
Հաղորդագրություն	20
Ամանորը Մայր Աթոռում	21
Խտալիայի Կարմիր խաչի պատվիրակության այցը Մայր Աթոռ	29
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	30
Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանի բարոզը Մայր տաճարում	32
Նորին Յակոբայ (Շամախեցույ) տաղ և դրուագ ի վերայ Սրբոյ Էջմիածնի, վասն ուրախութեան ասացեալ	34
ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ—Խոսք երախտիքի	36
ՄԱԿԱՐ ԱՐԳ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ—Ազոյ հանդէս Իրաքի հայոց թեմին մէջ	37
ՀԱՅՐ ՊՈՂՈՍ ԼԵՎՈՆ ԶԵՔԻՅԱՆ—Եղիշէի երկը որպէս վաղ հայկական եկեղեցու եկեղեցաբանության վկայություն	40
ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Էջմիածնի ավետարանը	50
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	61
«Etchmiadzine» official monthly of Holy Etchmiadzine	62
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ
«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտատրության 22.03.1990 թ.: Ստորագրված է տպագրության 20.04.1990 թ.:
Տպագրական 4 մամուլ +1 ներդիր, թուղթ 60×84/8, պատվեր 361:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1990 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.
 ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԳԵԱՆ ՔԱՐՈԶԸ՝
 ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
 (6 Յունուար 1990 թ.)

Յանուն Հօր եւ Որդույ եւ Հոգույն Սրբոյ. ամեն:
 «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
 հաճութիւն»:

Սիրելի հաւատացեալներ ի Հայաստան և ի սփիռս աշխարհի,
 Մեր Մայր Եկեղեցին առաքելական, այսօր աւետում է լոյս ծնունդը
 և աստուածաշաղկապութիւնը Յիսուսի, Որդույն Աստուծոյ, որ մարմնացաւ
 որպէս մարդ Սուրբ Կոյս Մարիամից, աշխարհին բերելու համար խօսքը
 Հօր Աստուծոյ, որի մասին վկայում է Ղուկաս աւետարանիչը, թէ՛ «Աստ-
 ոած Իր Որդուն ողորկեց յաւետարանելու աղքատներին, բժշկելու սրտով
 վիրատրներին, ազատելու գերիներին, քարոզելու կոյրերին տեսողութիւն,
 ազատ արձակելու կեղեքումներին» (Ղուկաս Գ 18—19):


Այս երազանքներով, այս սուրբ սպասումներով է, որ մարդիկ դիմա-
 տրեցին Ծնունդը Յիսուսի, հրաշալի պատկերացումներով:

Յիսուսի Ծնունդը աւետուել էր աշխարհին, պատգամովը հրեշտակ-
 ների՝ «Երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», երբ երկնքի բար-
 ձունքներից ծագել էր մի ճառագայթող աստղ իբրև մեծ ու սքանչելի խոր-
 հուրդ, ծանուցելու, թէ ծնուել էր Փրկիչը մարդկութեան:

Այսպէս է որ Յիսուս եղաւ ու մնաց մինչև այսօր Իշխան խաղաղու-
 թեան ու Արեգակ արդարութեան, ինչպէս գուշակել էր Եսայի մարգարէն,
 ինչպէս երգել էին հրեշտակները Բեթղեհէմի երկնքի բարձունքներից:

Արդարութիւնը և խաղաղութիւնը մահ մեր օրերին մնում են հրաշք
 երազանքներ, սուրբ սպասումներ աշխարհի ժողովուրդների համար, որոնք
 իրենց յուսացեալ հայացքները դէպի երկինք յառած, աղերսում են Աստ-
 ծուց, որ Յիսուսի ծնունդով ծանուցուած փրկարար պատգամները իրապէս
 կեանքի ուղեցոյց դառնան մարդկանց ու պետութիւններին:

Աշխարհում եղել են ու կան անարդարութիւններ անհատ մարդկանց
 նկատմամբ, եղել են ու կան անարդարութիւններ հաւաքականութիւնների
 և մանաւանդ ազգութիւնների նկատմամբ, որոնք պատճառում են այնքան



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻԶԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱՄ
ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Երուսաղեմի Ողղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԳՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի Ողղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս, Նորին Սրբու-
թյուն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՆՈՍ Ա-ԻՆ (Քոթայաւ),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

- Անտիոքի Ասորի հողափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԶԶԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
- Մանտրքի և Համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն ՄԱԶՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
- Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒՎՆ ՀԱՅԵՔ Բ-ին (Բեյրութ),
- Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Գ-ԻՆ (Դամասկոս),
- Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միա-
րոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Ռոբերտ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
- Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՅԻՄԻՆ (Աթենք),
- Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բեգրադ),
- Վարշավայի և համայն Լեհաստանի միաբնակցիտ, Նորին Գերաշնորհու-
թյուն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
- Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միաբնակցիտ, Նորին Գերաշնորհու-
թյուն ԴՈՐՈՅԵՅԻՆ (Պրագա),
- Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
- Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՐ ՆԱՍՐԱԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՅԵՅՐԻՆ (Բքերքե),
- Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԻՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
- Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
Գոկա. ՀԵՐՄԱՆ ԳՐՈՆՐԻՆ (Վիեննա),
- Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենա-
պատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲԲԱՆԳՍԻՆ (Վատիկան),
- Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍԻԺԵԻՆ (Փարիզ),
- Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԳԵԿՈՒՐՏՐԵԻՆ (Լիոն),
- Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու Արքեպիսկո-
պոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
- Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու Արքեպիսկո-
պոս, Նորին Գերազանցություն ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԱՅԻՆ (Տալլին),
- Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԿԱՐԼՈ ՉԵԿԿԻՏԵԼԼԻՆ (Երուսաղեմ),
- Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազ-
նություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
- Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար
դոկա. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
- Մխիթարյան ուխտի ընդհանուր քարտուղար Հայր
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
- Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապալծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Աստուծո ողորմությամբ և մեր Փրկիչ Հիսուս Բրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղում ենք Ձերդ Սրբությանը եղբայրական հարգալից սիրո Մեր ջերմ ողջույնը: Աստվածային Մանուկը, որի հրաշափառ Ծնունդը ցնծությամբ ենք տոնելու շուտով, թող քաղցրությամբ ընդունի մեր բարի մաղթանքները համայն մարդկության բարօրության, երջանկության և խաղաղության համար:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Երկնաբնակ հրեշտակների այս սքանչելի երգի բառերով մաղթում ենք պատմական ձեր սուրբ Եկեղեցուն անասաանություն և հոգևոր ծաղկում, իսկ Ձերդ Սրբությանը՝ քաջատողջություն և աստվածային առատ շնորհներ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ի պատասխան Ասենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԸՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Սիրեցյալ Եղբայր Մեր,

Նոր Տարվո լուսաբացին Մենք հուզումով ողջունում ենք մեծ ավետի-
սը Մեր Տիրոջ և Փրկչին Հիսուսի Քրիստոսի հրաշք Ծննդյան, հավատքով
և հույսով լի, որ մեր Սուրբ Եկեղեցին ու հավատացյալ մեր ժողովուրդը
վերստին լուսավորված շնորհներովը Սուրբ Ծննդյան, պիտի կարողա-
նան հոգեպես վերանորոգվել, զորանալ, պայծառանալ և մշտանորոգ
եռանդով բուժել իրենց վիրավոր մարմինը ու հասնել մեր ազգի արդար
սպասումների իրականացման ասին խաղաղությամբ:

Այս աղերսով շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և Սուրբ Ծննդյան
լուսաբաշխ տոնը, մաղթելով Ձերդ Ամենապատվության, տիրախնամ Սուրբ
Աթոռիդ հոգևոր դասուն, եկեղեցական վարչական մարմիններին և համայն
հավատացյալներին երկնային օգնականություն:

Ընորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ա. Էջմիածին




Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհա-
փառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգաց-
մունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ

մեր նվիրապետական երեք Սթոուների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի սուաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՄԵԾՍՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Երևան

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու ուրախ ենք շնորհավորելու Ձեզ Նոր տարվա լուսաբացին՝ մաղթելով Ձեզ խաղաղ տարիների կյանք Ձեր հայրենաշեն առաքելության ճանապարհին՝ ի բարօրություն մեր Մայր Երկրի ու ժողովրդի՝ խորհրդային բազմազգ ազգությունների համերաշխ ընտանիքում:

Թող 1990 տարին լինի բարի տարի և իր հետ բերի մեր ազգի արդար իղձերի իրականացում:

Ձեզ արևատ տարիներ քաջատողությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՄԵԾՍՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՎԱԳԻՄԻՐ ՄԱՐԳԱՐՅԱՆՅԻՆ

Երևան

Մրտանց ողջունում ենք Ձեզ նոր տարվա սեմին՝ մաղթանքով ջերմ, որ 1990 թվականը լինի բարիք ու խնդություն բերող տարի մեր Մայր Երկրի ու համայն մեր ժողովրդի համար:

Մաղթում ենք Ձեզ նաև քաջատոջ ու արևատ տարիներ Ձեր հայ-

րե՛նաշեն եռանդուն գործունեության ճանապարհին՝ ի բարօրություն մեր հայրենաքնակ ժողովրդի:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

ԽԱՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ
ՅՈՒՐԻ ԽՐԻՍՏՈՐԱԴՆՈՎԻՆ

Մոսկվա

Մեծահարգ Յուրի Նիկոլաևիչ, արտանց շնորհավորում եմ Ձեզ և ձեր աշխատակիցներին Նոր տարվա առթիվ: Անկեղծորեն ցանկանում եմ Ձեզ քաջատոլջություն և մեծ հաջողություններ Ձեր հայրենասիրական ազնիվ առաքելության ճանապարհին: Թող գալիք՝ 1990 թվականը լինի խաղաղության և հանգստության տարի մեր երկրի բոլոր ժողովուրդների համար:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ
ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Երևան

Սուրբ Էջմիածնից և Մեր արտից բերում եմք Ձեզ մեր ամենաչերմ մաղթանքները քաջատոլջության ու արևշատության նոր տարվա սեմին՝ աղոթքով արտեռանդ, որ 1990 տարին լինի շինարար, բարիք ու խաղաղություն բերող տարի մեր հայրենիքի ու ժողովրդի համար:

Շնորհավոր Նոր տարի Ձեզ և ձեր միլիոնավ գործակիցներին:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Մեծարգո Վեհափառ,

Ամանորյա սույն ուղերձը պայմանավորված է Ձեր իմաստուն, հավասարակշիռ, խաղաղասիրական անչափ կարևոր գործունեության գնահատմամբ, խորին հաքգանքի այն զգացումով, որ Ձեր նկատմամբ տածում է մեր ժողովուրդը, բոլորս:

1989 թվականին Դուք, Հայոց Հովվապետին վայել կեցվածքով, ինչպես միշտ ժողովրդի հետ էիք: Ավերիչ երկրաշարժից հետո գործնականորեն ձեռնամուխ եղաք աղետի գոտու վերականգնման աշխատանքներին:

Ձեր ամոքիչ խոսքը սպեղանի էր մարդկանց խռովահույզ մտքերին, ողջախոհության կոչ՝ հասարակական տարուբերումների պահերին:

Եվ ժողովուրդը մեկ անգամ ևս ըստ արժանվույն գնահատեց Ձեր ազանվեր գործունեությունը՝ Ձեզ ընտրելով Խորհրդային Միության ժողովրդական դեպուտատ: Հայրենանվեր Ձեր ջանքերը պսակվեցին կառավարական քարձր պարգևով:

Թույլ տվեք, Մեծարգո Վեհափառ, սրտանց շնորհավորել Ձեր Ամանորը, մաղթել քաջատղջություն, բեղուն աշխատանք՝ ի բարօրություն մեր ժողովրդի, Խորհրդային Հայաստանի այսօրվա և գալիքի:

ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ամանորի հաճելի առիթով ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորանքները: Ցանկանում եմ Ձեզ քաջատղջություն, երկար կյանք, մեր ժողովրդին՝ համբերություն ու տոկունություն, նրա իղձերին իրականացում:

ՎԱԳԻՄԻՐ ՄԱՐԳԱՐՅԱՆՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք սրտագին շնորհավորանքներ ձոր՝ 1990 թվականի առթիվ:

Լավագույն և անկեղծ մաղթանքներով՝

ՅՈՒՐԻ ԽՐԻՍՏՈՐԱԴՆՈՎ

ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ամանորի և Սուրբ Ծնունդի առիթով Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ, Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր սպասավորներին՝ մաղթելով երկար տարիների քաջատողջություն, ձոր հաջողություններ Ձեր ազգանվեր գործունեության ճանապարհին:

Դաժան փորձությունների դատապարտված մեր հինավուրց ժողովուրդը այսօր ավելի քան երբևէ կարիք ունի հոգեկան մխիթարության: Ահավոր երկրաշարժը և Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ճգնաժամային իրավիճակը խաթարել են նրա հոգու հավասարակշռությունը:

Այսօր չափազանց կարևոր է, որպեսզի ընդհանուր ջանքերով պայմաններ ստեղծվեն մեր ժողովրդին հատուկ ավանդական կենսասիրությունը պահպանելու և գորացնելու, նրա ստեղծարար ուժերը վերաշինության և արդարության նպատակներին ոգեկոչելու ազնիվ խնդիրների իրականացման համար:


Ծեշտելով Հայ Առաքելական Եկեղեցու կարևոր դերը, բարձր գնահատելով հոգևորականության և անձամբ Ձեր կողմից այդ ուղղությամբ տարվող աշխատանքը՝ մենք համոզված ենք, որ Դուք և Հայաստանյայց ամբողջական Եկեղեցին իր անփոխարինելի ներդրումը կունենան այդ բախտորոշ ձեռնարկումներում:

Կրկին անգամ շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծնունդի առիթով:

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՌՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ԲԱՔՎԻՑ ՌՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա

Խոր վշտով տեղեկանում ենք ամեն օր Բաքվից բազմահազար փախարտական ընտանիքների մասին ոչ միայն հայ ազգաբնակչությունից, այլ նաև խորհրդային բանակի ընտանիքների անդամների, որոնք ծանր վիճակում ապաստան են գտնում Մոսկվայում:

Մեր խղճի պարտքն ենք համարում տրամադրել երեք հարյուր հազար ռուբլի Ադրբեջանից խորհրդային բանակայինների փախարտական ընտանիքներին օգնելու համար:

Հաստատում ենք այս առթիվ Զեռդ Սրբության Մեր հղած 24 հունվարի թվակիր հեռագիրը և ցավակցություն ենք հայտնում և աղոթում Ադրբեջանում գոհված բանակայինների և նրանց ընտանեկան անդամների հոգիների համար: Թող Աստված ողորմությամբ ընդունի նրանց հոգիները և արժանի անի երկնային արքայության հավիտենական կյանքի:


Աղոթում ենք նաև խորհրդային երկրի ներքին խաղաղության ու ազգությունների միջև համերաշխ գոյակցության համար:

Երանի մեր Փրկիչ Հիսուս օգնության հասնի մեզ և «սաստի փոթորիկին և խռոված ջուրերին. հանդարտեցնի և լինի խաղաղություն» (Ղուկ. Ը 24):

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ




Գյուտ արքեպս. Նագգաշանը կատարում է Ամասերդամի վերաբնակեցված եկեղեցու օծումը

Դարերի պատմությունը՝ հայ գաղթաշխարհը: Հայահոծ գաղութներ են եղել աշխարհի տարբեր երկրներում, ևսև՝ Եվրոպայում: Հնագույն գաղութներից մեկն է Հոլանդիայինն է, ուր 1713 թվականին հիմնվեց հայոց եկեղեցի՝ արտաշխարհի հայ կյանքի սիրտն ու հոգին: Դժբախտաբար, սակայն, մայրենի հողից կտրված բազմաթիվ մեծ ու փոքրաթիվ գաղութներ նոսրացան նոր տեղաշարժի կամ տնտեսական-քաղաքական նոր պայմանների թելադրանքով: Նոսրացավ ևսև հոլանդահայ գաղութը և եկեղեցին գրկվեց հայի աղոթքից: Վերջին տասնամյակին, սակայն, նորից հոսք կա դեպի Արևմուտք, մանավանդ Մերձավոր Արևելքից, ուստի անհրաժեշտ էր վերականգնել հայի աղոթքի տունը: Եվ ևսև, փառք Աստուծո, 1989 թվականի նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ հանուն Սուրբ Հոգու օծումը հնամենի եկեղեցու, ուր կարող են դիմել աշխարհի ճանապարհներին մոլորված հայի հոգիները՝ վերագտնելու իրենց ինքնությունը և հաղորդվելու սեփական ժողովրդի ազգային և մշակութային արժեքներին:


Օծման արարողությունը գլխավորեց և կատարեց Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպս. Նագգաշանը:





Ալյուի Սոս ևի ցուխուսուսուսուս ցուխու





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 4

Մայր Աթոռիս Դիանը այսու սրտագին շնորհակալութեամբ հրատարակում է շարունակութիւնը Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսարանիս նուիրաբերուած գումարների, Հայաստանի երկրաշարժի աղէտեալների օգտին (Ծարունակութիւն նախորդ Ձև 1 և Ձև 3 հաղորդագրութիւնների):

	Dollars
1. Instituto delle opere di Religione (Roma)	100.000
(Նորին Սրբութիւն Պապի հրամանաւ)	
2. Diaconia—Sweden	150.000
3. Pontificium Consilium Cor Unum—Vaticano	100.000
4. Armenische Kirchengemeinde—Köln	91.092
5. Հայ-Ամերիկեան օգնութեան Կրթական Միութիւն—Նիւ Եորք	45.000
6. Հայ Կրթական Բարեգործական Միութիւն—Լոս Անճելոս	25.000
7. Erven A. Hagopian—Billthoven, U.S.A.	132.334
8. Armentian Relief Fund.—N. Y.	50.000
9. Arbeitsgemeinde Christlicher Kirite—Hamburg	10.577
10. Landesgirokasse—Stuttgard	16.437
11. Survival International Goettingen	7.138
12. Armenian Society South Africa	11.741
13. Il Nord pro terremotati Armenia—Novara	14.700
14. Armenian Missionary Assoc.—U.S.A.	50.000
15. Stadtverwaltung—Neuwied, Germany	32.321
16. Hilfswerk Evangelische Kirchen—Zurich	17.291
17. Contributors of Volusia—Florida	7.495
18. Armenische Kirche—Hanau	5.025

19. Lausanne	175
20. A. Joseph Schuytstraat—Graven Hag	450
21. A. Jcseph Schuytstraat—Graven Hage	150
22. Pfarramt St. Ulrici Braunschweig—Germany	558
23. Kristliche Kirche—Hamburg DM 5.300	2.870
24. Dr. K. Holloway £ 3,7	620
25. George Kurkjian-ի սիջոցաւ Ալմ—Armenia—London £ 10.000	15.680
26. Տ. Վիգէն վարդապետ Աքրագեան—Ժընն	931
27. Ս. Խաչ Դպրեվանքի Ծրջանաւարտաց Միութիւն—Նիւ Եորք	11.000
28. Հայ Ազգային Հիւանդանոց և Միութիւն Պոստոնի—Պելմոնդ— ԱՄՆ	11.710
29. Տէր և տիկին Ծորն Ներսէսեան—Չեստոնուտ Հիլլ—ԱՄՆ	1.000
30. Յակոբ Բամպակեան—ԱՄՆ	1.854
31. Արման Գորումճեան—Իսթանպուլ	600
32. Sovereain Ordre de Malta	500
33. Հայ Եկեղեցասէր Տիկիներ—Միտնէյ (700 austr.)	500

914.749

Նախորդ 29 Ապրիլ 1989 թ. № 3 հաղորդումից 1.044.445

Առ 1 Յունուար 1990 թ. Ընդհանուր գումար 1.959.194


Վերոհիշեալ 1.959.194 տոլլար գումարը պիտի յատկացուի աղէտեալ շրջաններում եկեղեցաշինական և այլ շինարարական ծրագրերի իրագործման, որի մասին իր ժամանակին Դիւանս պիտի հրատարակի յատուկ հաղորդագրութիւն:

Այսու, երախտապարտ արտով հաղորդում ենք մասնաւորապէս նրանք, որոնք վեց հարիւր հազար տոլլարի Ժըննի Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի՝ երկրաշարժի աղէտեալներին, գաղթականներին և որբեր պահող ընտանիքներին դրամական օգնութիւն կատարելու համար: Սոյն նիւթական օգնութիւնները Մայր Աթոռու կատարում է մէկ տարիէ ի վեր և տնտեսապէս շարունակում է կատարել:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

Ս. Էջմիածին,
12 Յունուար 1990 թ.





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախագահության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, իր 22 հունվարի 1990 թ. նիստում, ի շարունակություն Մայր Աթոռիս անցյալ երկու տարիների նյութական օգնությունների, որոշեց ներքոհիշյալ գումարները նվիրաբերել հետևյալ օգնության ֆոնդերին՝

1. Բաքվից փախստականների օգնության հաշվին	500.000 ռ.
2. «Վերածնունդ» հասարակական կազմակերպության՝ օգնելու Արցախի գաղթականների տեղավորման	500.000 ռ.
3. «Գթություն» ֆոնդին	200.000 ռ.
4. Մայրերի օգնության ֆոնդին (տարեկան)	120.000 ռ.
5 Արցախի եկեղեցիների միջոցավ օգնություններին	400.000 ռ.
Ընդհանուր գումարը	<u>1.720.000 ռ.</u>

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Ս. Էջմիածին,
25 հունվար 1990 թ.





ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1989 թվականի վերջին օրն է: Տարեմուտ: Եվս մի քանի ժամ, և կսկսվի նոր տարին՝ իր հետ բերելով նոր հույսեր, նոր ծրագրեր ու նոր իրագործումներ:

Ահա այս հույսով ու լավատեսությամբ է, որ 1989 թ. դեկտեմբերի 31-ի երեկոյան Մայր Աթոռի սեղանատուն էին հավաքվել տարբեր թեմերի սուաջնորդ սրբազան հայրեր, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևորականներ՝ տարբեր վանքերից ու եկեղեցիներից, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և այլ հյուրեր:

Հանդիսությունը ղեկավարում էր Վեհափառ Հայրապետը:

Ակավում է տարեմուտի երեկոն: Բոլորը միասին արտասանում են «Հայր մեր» աղոթքը: Նորին Սրբությունը օրհնում է բարիքներով լեցուն տոնական սեղանը:

Հնչում է ճեմարանի քայլերգը, որից հետո երեկոյի բացման ու շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը.

«Ձերո Սրբություն, Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի դասախոսներ հոգևոր ճեմարանի, սաներ և հարգելի ներկաներ.

«Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, փառք քեզ»: Մեծն Հովհանն Ոսկեբերանի սույն խոսքերով կուզենայի սկսել իմ շնորհավորական խոսքը, որովհետև ընդհանրական Եկեղեցու այդ մեծ Հայրապետը, չնայած կյանքում կրած իր բազում դժվարություններին ու հալածանքներին, այնուամենայնիվ իր մեջ ուժ գտավ ասելու. «Ամեն ինչի համար փառք քեզ»:

Այս նոր տարվա շեմին սույն ընդհանրացնող բառերով պիտի բնութագրեի իմ ժողովրդի հոգեվիճակը:

Արդարությանն նկատմամբ խոր հավատ, ապա՝ հուսախաբություն: Ահավոր ավերիչ երկրաշարժ ու բազում դատարկված տներ, որբեր ու կորուստ... կորուստ... կորուստ:

Ապա, մղձավանջային, անհասկանալի օրեր, ամիսներ ու տարի, անհասկանալի՝ իր կոպիտ անտարբերությամբ և ամեն ինչի նկատմամբ նույնաստիպ վերաբերմունքով... Ու թվում է մի պահ, թե անվերջանալի պիտի լինի գիշերը հայ ժողովրդի համար:

Սակայն աստվածային զարմանալի նախախնամությամբ նույնիսկ կործանման ամենածայրահեղ եզրին կանգնածը, վշտահարն ու թշվառը, տարեմուտի նախօրեին, կարողանում է ի մի հավաքել իր բոլոր ուժերը, բանականությունն ու կամքը՝ պատրաստ լինելու՝ ապագային ընդառաջ գնալու համար:

Այս իմաստով, զարմանալի ուժ ու խոր փիլիսոփայություն կա Նոր տարվա խորհրդի մեջ: Այն հավասարապես դրականորեն է ազդում թե՛ ծեր մարդու, թե՛ մանչուկի վրա, որբևայրի կնոջ ու երիտասարդ հարսի վրա: Այն բերում է մարդուն լույսի ու հավատի զգացում, լավագույն ապագայի ինչ-որ մի քաղցր անուրջ:

Վեհափառ Տեր,

Այս՝ 1990 թվականի տարեմուտը ևս, ինչպես շատ ու շատ տարիներ շարունակ, հավաքվել ենք Ձերդ Հայրապետության հովանու ներքո՝ դիմավորելու գալիք տարին: Չնայած անցած տարվա ընթացքում ունեցած դժվարություններին ու նեղություններին, մեր հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը իր մեջ ուժ ու եռանդ է գտնում անխոնջ՝ և՛ անխափան կերպով շարունակելու ուսումը հոգևոր ճեմարանի հարկից ներս:

Զգալով այն մեծ կարիքը, որ այսօր ունի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, շնորհիվ նոր, բարեփոխված պայմանների, Դուք միշտ շեշտել և այս օրերին առավելապես եք շեշտում հոգևոր ճեմարանի դերը ազգին նվիրված ու պատրաստակամ հոգևոր ծառայողներ պատրաստելու գործում: Մենք քաջ գիտակցում ենք ու կիսում Ձերդ Արքայության մտահոգությունները և աշխատում ենք անելու ամենակարելին: Մոտ օրերս, դեկտեմբերի 25-ին, հոգևոր ճեմարանի շուրջ 28 ուսանողներ ստացան դրպրության չորս աստիճաններ, իսկ 15 հոգի՝ ձեռնադրվեցին սարկավագ: Սա խոսում է այն մասին, որ 1989—1990 ուսումնական տարին առատ հունձք պիտի ունենա:

Մեծ ուրախություն է մեզ համար նաև հոգևոր ճեմարանի հարկից ներս ունենալ 5 ամերիկահայ՝ ուսանողներ, որոնցից մեկը՝ Հակոբ Դինգիլյանը, դեկտեմբերի 25-ին ստացավ սարկավագի, իսկ Ստեն Շեպեյանը՝ ուրարալի աստիճան: Մենք հպարտ ենք, որ հոգևոր ճեմարանի ամերիկահայ ուսանողների համար ստեղծված նորաբաց դասարանը իր համեստ դերն է խաղալու ամերիկահայ հոգևորականների պատրաստման գործում: Բացի այդ, ունենք նաև ճեմարանի նախապատրաստական դասարան շուրջ 20 ուսանողներով, որոնք պարարտ հող են հաջորդ՝ 1990—1991 թթ. ուս. տարվա առաջին լսարանի համար:

Արդեն պատրաստ է հրատարակության հոգևոր ճեմարանի ուսանողության ուժերով վերաստեղծված «Տաթև» եռամսյա պարբերաթերթը, ուր

լիովին կարտացոլվի հոգևոր ճեմարանի ուսանողության կյանքն ու քարքը: Սույն նկարագրություններից հետո, Վեհափառ Հայր, թույլ տվեք ի դիմաց հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության շնորհավորել Ձերդ Սրբության Ամանորը՝ ցանկանալով, որ գալիք՝ 1990 թվականը այլևս ծանր հոգսեր չբերի Ձեզ, այլ պարզևի արևշատ, երջանիկ օրեր հուրախություն մեզ և մեր ստեղծագործ ու հավատացյալ ժողովրդի:

Մեր Նոր տարվա շնորհավորանքները նաև մեր միաբանակից հայրերին և եղբայրներին՝ գալիք տարվա լավագույն մաղթանքներով:

Տեսուչ սրբազան հոր խոսքից հետո հնչում է «Հայրապետական մաղթերգ»-ը: Բոլորը միաբերան ստ Աստված են առաքում իրենց սրտերից բխած աղոթքը՝ Աստծուց «երկար կեանք» ու «երկար օրեր» խնդրելով Հայոց Հայրապետին:

Ապա հանուն միաբանության խոսք է ասում Ս. Արքահամ վրդ. Մկրտչյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր, սիրելի ներկաներ,

Հավերժության ակնթարթներից մեկն է այսօր, ակնթարթ՝ մտորումի, ակնթարթ՝ խորհրդածության, ակնթարթ՝ ետադարձ հայացքի, և ակնթարթ՝ աներկբա հավատքի նոր իրագործումների ու նոր հույսերի:

Ինքնավերլուծության ու աշխարհըմբռնման այս կենսական հարցերի պատասխանը գտնելու համար է, որ հավերժությունը բաժանվել է տարիների, օրերի, ժամերի ու վայրկյանների: Այս բաժանումներից յուրաքանչյուրն իր իմաստավորող սկիզբն ու վախճանն ունի, որ հնարավորություն է տալիս գործով ու հավատքով հավերժացնելու այն:

Սակայն տարիների ու դարերի ընթացքում լինում են պահեր, երբ ակնթարթը կանգ է առնում մի պահ, դառնում ոչ թե պատմություն, այլ դրոշմվում մարդկանց սրտերում ու արյան միջոցով փոխանցվում սերնդից սերունդ: Այդ ակնթարթները դառնում են սկիզբ կամ վախճան, մարդկության համար դառնում դարակազմիկ, մարդու համար՝ բախտորոշ: Այդ ակնթարթները լինում են լուսավոր կամ դժխեմ, կյանքն իմաստավորող կամ հուսահատության եզրագծին հասցնող: Հաստատուն կամք ու աներեր հավատք ունեցող մարդու համար ակնթարթը դառնում է աղբյուր նոր ծրագրերի ու նոր իրագործումների: Յուրաքանչյուր մարդու կյանքում ահա այդ ակնթարթային դադարի պահն է տարեմուտը, ակնթարթային դադար՝ ինքնավերլուծության ու առավել ևս ինքնանորոգման համար: Սկսվող տարին իմաստավորող ակնթարթն է դա, առաջին հիմնաքարը նոր տարվա ու նոր կյանքի: Եվ այդ հիմնաքարը հաստատուն դնելու համար պետք է մի պահ անդրադարձ հայացք նետել անցնող տարվա իրագործումների վրա՝ միշտ ի մտի ունենալով Հայտնության այն հայտարարությունը, թե «ահա գամ վաղվադակի և վարձք իմ ընդ իս՝ հատուցանել իրաքանչիւր ըստ գործս իրեանց» («Յայտ. ԻԲ 12):

Իսկ անցնող տարին եղավ որոնումների ու մտորումների տարի, ազգային ոգու վերխոյացման ու հոգևոր զարթոնքի տարի, բնության քերած չարիքները վերացնելու և ազգամիջյան թշնամությունը դիմակայելու տարի:

Անցնող տարվա այս վերջին պահին մեր հայացքի առջև մի պահ պատկերվում է նախորդ դեկտեմբերը, երբ մեկ ակնթարթում ողբի ու որբի հայրենիք դարձավ որջ Հայաստանը:

Ողբի ու որբի հայրենիք:

Չարի կողմից սանձազերծված տարերային աղետը եկավ սասանելու մեր ժողովրդի կամքն ու հավատը, եկավ՝ գերեզմանելու մեր արդար իրավունքներն ու երազանքները... Մեր սուրբ մատենագիրները մեկ անգամ ևս հայոց աշխարհի բախտը ողբացին: Հայոց պեհեր Հայրապետը աղոթեց առ Աստված՝ գորավիզ կանգնելու իր վիրավոր փոքրիկ հոտին: Նա ցուպը ձեռքն առած շրջեց աշխարհից աշխարհ՝ շուտափույթ օգնություն բերելու իր աղետյալ ժողովրդին:

Սակաշն աղետին եկավ ավելանալու նաև նոր ելք գտած դարավոր թշնամանքը: Թվում էր, թե հուսահատությունը պիտի կործաներ մեր ազգի ոգին, թվում էր, թե պիտի տատանվեր մեր գոյության հիմնաքարը: Սակաշն մեր նախնայաց աղոթքին միացած Հայոց Հայրապետի աղոթքը հասավ առ Աստված, և Հայաստան փոքրիկ աշխարհի կապույտ երկնակամարում առկաժող Հիսուսի աստղից հնչեց ուղեցույց խոսքն Աստվածային՝ «Մի երկնչիր, հոտ փոքրիկ, զի Աստված ընդ քեզ է»: Ժամանակը կանգ առավ մի պահ, ակնթարթը դարձավ հավերժություն, ու այդ հավերժության մեջ կուրացնող լույսով շողարձակեց շիրմաքարը Ս. Մաշտոցի: Մաշտոցի հետ ոգի առան Վարդան ու Նարեկացի, Կոմիտաս ու Անդրանիկ: Ու նորից շարունակվեց արդար իրավունքների Ավարայրը, որի դրոշակակիրն ու լուսե ճանապարհը դարձավ ազգի վերադարձը դեպի իր արմատները: Կանթեղված էր Հայկի ոգին Սուրբ Էջմիածնի կամարների ներքո, որ բոցավառվեց հանկարծ հուլիսի ու հաղթության լուսե շողերով: Եվ հայ ժողովուրդը դիմեց այնտեղ: Դիմեց այնտեղ, որտեղից դարեր շարունակ իր կյանքի ավիշն է ստացել և ուր պահ է տվել իր սիրտն ու հոգին: Դիմեց դեպի հայոց աշխարհի վրա կախված Լուսավորչի կանթեղը, որ վառ է պահվել մեր նախնիների ինքնազոհաբերման պատրույզով և հոգու կրակով: Այդ կանթեղը Մաշտոցի հզոր բարբառով ողջ հայությանը միասնության կոչեց՝ դիմակայելու ամեն տեսակի փորձությունների: Մեր նախնայաց կանչն է այն, որ առավելապես պարտավորեցնում է այսօրվա հայ հոգևորականին, ժողովուրդն առաջնորդելու դեպի ազգային արմատներ, դեպի հավերժություն ու դեպի Աստված: Որքան ցանկալի է այս կանչը, այնքան էլ պարտավորեցնող ու պահանջող, որից հրաժարվելու իրավունք չունենք:

Տարեմուտի այս խորհրդավոր պահին գալիս ենք վստահեցնելու Ձեզ, Վեհափառ Տեր, որ իր հոգու մեջ Սուրբ Էջմիածնի պատկերը կրող յուրաքանչյուր հայ հոգևորական իր ուժերն ամբողջովին ի սպաս կրնի հանուն մեր Սուրբ Եկեղեցու առավել պայծառացման ու մեր ժողովրդի հոգևոր կարիքների բավարարման: Միաժամանակ աղոթում ենք առ Աստված, որ քաջատղջություն ու երկար, արևշատ օրեր պարգևի մեր սիրելի Հայրապետին, իրեն տրված երկնառաք իմաստությամբ բազում պեկոծումների միջից դեպի խաղաղության նավահանգիստ առաջնորդելու իր բազմաչարչար ու քաջարի ժողովրդին: Սկսվող նոր տարում եփվելիք նոր մեռոնով թող մեկ անգամ ևս սրբազործվի հայոց Աստվածընկալ հողը և թող մեկ անգամ ևս հայոց երկիր իջնի ու հայ սրտերից ներս բնակվի Քրիստոս՝ քաջալերելու համար իր փոքրիկ հոտին: Սկսվող նոր տարին յուրաքանչյուր հայ ընտանիքի թող բերի նոր ուրախություն ու երջանկու-

թյուն, յուրաքանչյուր հայ հոգևորականի՝ առավել նվիրում, յուրաքանչյուր հայի՝ նոր հառաջդիմություն: Թող Տերը օրհնի նոր՝ 1990 թվականը, անսասան պահի յուսավորչանորոգ Հայ Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և թող էլ ավելի ծաղկի, շենանա ու հզորանա մեր Մայր Հայրենիքը:

Շնորհավոր Նոր տարի»:

Հայր սուրբի խոսքից հետո ճեմարանի ուսանողությունը կատարում է «Դարձեալ փայլեց», «Հինգալա» և գուսան Ծերամի «Անդրանիկ» երգերը, հոգևոր ճեմարանի ամերիկահայ ուսանողները կատարում են «Սուրբ Ծննդյան երգ»-ը: Դանիել Վարուժանի «Չոն» բանաստեղծության արտասանությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի ուսանող Սարգիս Կոպալյանը, իսկ բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանը արտասանում է իր գրած «Մեր վանքերը» բանաստեղծությունը: Ապա ուսանողության անունից Վեհափառ Հայրապետին ու ներկաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի Ե լսարանի ուսանող Գրիգոր սրկ. Տալյանը: Հոգևոր ճեմարանի ուսանողության կատարմամբ հնչում են նաև Մովսես Խորենացու «Չանճատեյի Լուսյ Մայր» և «Ճառագայթ և կերպարան», հոգևոր ճեմարանի Ա լսարանի ուսանող Հովհաննես Մարտիրոսյանի կատարմամբ՝ Հովհ. Թումանյանի «Հայոց լեռներում», «Լուռ գիշեր» և Կոմիտասի «Տէր, կեցո զհայս» (հոգևոր ճեմարանի ուսանող Սոեն Ծեպեճյան և երգչախումբ) ստեղծագործությունները: Երգչախումբը ղեկավարում էր հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Խորեն Պալյանը:

Ավանդական «Կաղանդչեքեր»-ից ու «Վիճակահանություն»-ից հետո իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում բոլորի Նոր տարին և մաղթում «հույսի ու լույսի նոր առավոտ» վերջին մի քանի տարում այնքան դժվարություններ ու դժբախտություններ տեսած մեր ժողովրդին:

Հաջորդ օրը, հունվարի 1-ին, Վեհարանում, Մայր Աթոռի միաբանությանը, քահանայից դասին և Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականությանը ընդունեց Վեհափառ Հայրապետը:

Ի դիմաց հոգևորականության, խոսք ասաց և Վեհափառ Հայրապետի Նոր տարին շնորհավորեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես սրբնապա. Պոզապալյանը:

«Վեհափառ Տեր,

Մեզ համար արդեն ավանդություն է դարձել ամեն Նոր տարվա Առանորի նորաբաց առավոտյան հոգեպարար պատարագի արարողությունից հետո գալ Վեհարան՝ ստանալու համար Ձերդ Սրբության օրհնությունն ու պատգամը:

Կարծեք երեկ էր, մեկ տարի առաջ, 1989 թվականի հունվարի 1-ին, եկել էինք այստեղ, երկրաշարժի ահավոր աղետից ցնցված, վշտաբեկ սրտով մխիթարություն ստանալու համար Ձերդ Վեհափառությունից: Այդ առթիվ հոգևոր մաղթեցինք, որ 1989 թվականը լինի ողջ հայ ժողովուրդի և հատկապես մեր աղետյալ գոտու համար վերաշինության, վերականգնումի տարի՝ նյութական և բարոյական առումով:

1989 թվականի ընթացքում մենք եղանք ականատես վկաները, թե

ինչպես աշխարհի չորս ծագերից, ավելի քան հարյուր երկրներից, ամեն տեսակի օգնություն փութացվեց Հայաստանին: Խորհրդային երկրի տարբեր հանրապետություններից շինչոկատներ եկան, ինչպես նաև արտասահմանյան բազում երկրներից եկած շինարարներ և մասնագետներ իրենց կարելին ի գործ դրեցին, մեր աղետի գոտին վերակառուցելու համար: Մենք խորապես երախտապարտ ենք և հոգևոր մխիթարված սույն եղբայրական օգնությանց համար:

1989 թվականը մեզ համար նաև եղավ, ազգային իմաստով, վերազարթոնքի մի տարի: Հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, միացավ, իր արմատներին վերադարձավ՝ ճանաչելու համար իր ինքնությունը: Այսպիսով ստեղծվեց միասնականության ոգի, ճակատագրակցության զգացողություն, որի արտահայտությունը եղավ գիտակցությունը՝ Հայաստանը ճանաչելու իբրև հարեհիքը ողջ աշխարհի հայության: Այն, ինչ որ կարճ ժամանակ առաջ մոռացության էր տրվել, նոր արժևորում ստացավ, հոգևոր զարթոնքի, հոգևորի վերագնահատումի մի նոր շրջան սկսվեց:

1989 թվականը նաև Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցու համար եղավ հոգևոր արթնության մի տարի, բազում փակված եկեղեցիներ վերաբացվեցին և դեռ վերաբացվում են: Աղոթքի, Աստծո հետ հաղորդության պահանջը մարդկանց մեջ ավելացավ, մարդասիրական նոր կազմակերպություններ ծնունդ առան, և եղբայրասիրության նոր շնչով տոգորվեցին մարդիկ: Հայաստանյայց եկեղեցին նոր թեմեր բացեց, մեր հոգևոր եղբայրների թիվը սուվարացավ, և այժմ զգում ենք, թե որքան կարիք կա նոր մշակների, որովհետև «հունձքերը բազում են, իսկ մշակները՝ սակավ»:

Անցած տարում էր, որ Հայաստանյայց Եկեղեցին իր ներքին միասնականությունը վերագտավ, ավելի քան երեսուն տարիներից ի վեր նրա ծոցում գոյություն ունեցող հակամարտությունները վերջ գտան, «խառնադրություն ձայն հնչեցաւ, սուրբ ողջոյնի հրաման տուաւ, թշնամութիւնն հեռացաւ, սէր յընդհանուրս սփռեցաւ...»: Իբրև մեկ ազգ և մեկ Եկեղեցի նոր ուխտ կնքվեց, և այսօր Հայաստանյայց Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, իր բոլոր թեմերով և հովվություններով միական է, միասնական ու անբաժանելի՝ ունենալով իբրև խորան միության Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Մեր պատմության այս ամենաբախտորոշ շրջանին մեր Եկեղեցին իր ժողովրդի հետ է, նրա ճակատագրով մտահոգ և պատրաստ ամեն զոհողության՝ արբազան իդեալների իրագործման ի խնդիր:

Վեհափառ Տեր, անցնող՝ 1989 թվականը Հայաստանյայց Եկեղեցու և հատկապես Ձեզ համար եղավ դժվար ու մտահոգություններով լեցուն մի տարի: Դուք իբրև Հովվապետ հանձն ստիք ցույց ի ձեռին այցելության գնալու մինչև Միացյալ Նահանգներ, ծեծելու համար, բացի՝ հայկական միությունների և կազմակերպությունների, նաև օտարների խղճի դռները: Այդ առթիվ այցելեցիք Միացյալ Նահանգաց նախագահ Ջորջ Բուշին և այլ կարևոր անձնավորությունների՝ տանելով հայ ժողովրդի երախտագիտությունը և գնահատանքի խոսքը նրանց:

Այսօր բարեբախտաբար տեսնում ենք, թե, հակառակ շատ դժվարին պայմանների, բավականին լուրջ աշխատանք տարված է աղետի գոտում, նոր դպրոցներ, հիվանդանոցներ, բնակարաններ կառուցվել են և կառուցվելու վրա են: Ծառերի համար կյանքի տանելի նվազագույն պայմաններ

եմ ստեղծվել: Վստահ ենք, գալիք տարիները ավելի երջանկաբեր կլինեն, գիտակցում ենք, որ դեռևս շատ գործ կա անելու:

Վեհափառ Տեր, Ամանորի խորհրդավոր այս առավոտյան մենք, Ձեր հոգևոր զավակները, եկել ենք, հավատով և նվիրումով լցված հաչցելու Ձերդ Սրբության օրհնությունը ու հայրական պատգամները: Թող Աստված անսասան պահի Լուսավորչահիմն Հայաստանյայց Եկեղեցին և երկար կյանք պարգևի Հայոց Հայրապետին»:

Ապա շնորհակալության և օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍԹԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
(1 հունվար 1990 թ.)

Նախ իմ գոհունակությունն եմ հայտնում և շնորհակալությունը՝ կատարված բոլոր բարի մաղթանքների համար: Ինձ համար հոգեկան մխիթարություն է մահ տեսնել, որ ձեր թիվը անած է և միաբաններ ու ուսանողներ շրջապատում եք ինձ: Դա հուսադրում է ինձ, որ այն բոլոր ծրագրերը, որ ունենք, որին ակնարկեց արդեն Սրբազան Հայրը, քաջ առ քաջ պետք է կարողանանք բավարար չափով իրագործել և պատրաստել հոգևոր ծառայողներ, կուսակրոն թե ամուսնացյալ, որպեսզի ծառայեն մեր հավատացյալ ժողովուրդին, որոնք այնքան հոգևոր խանդավառությամբ ապաստում են Աստուծո խոսքին և Եկեղեցու օգնությանը:


Երեկ երեկո բնականաբար ժամանակի մասին խորհրդակցություններ եղան, և բոլոր խոսողները լավ մտածումներ արտահայտեցին այդ առթիվ: Ես շեշտեցի և այսօր էլ ուզում եմ ընդգծել, թե ժամանակ հասկացությունը մեզ՝ հոգևորականներին համար՝ առավելապես բարոյական նշանակություն ունի: Կարևորը՝ այն չէ, թե ինչ է նշանակում ժամանակ: Ավելի կարևորը այն է, թե ինչպես ենք մենք օգտագործում այդ ժամանակը մեր կյանքի տևողության ընթացքին, ինչ գործեր ենք կատարում, ինչպես ենք արդարացնում մենք մեզ ժամանակի ընթացքում: Այս հարցին մենք պետք է պատասխան տանք մահ հավաքաբար անշուշտ, բայց այդ հարցին պետք է ամեն մեկս պատասխան տա իր խղճի առջև, իր գիտակցության առջև, որովհետև երբեք չմոռնանք, որ հոգևորականի առաքելությունը՝ հոգևոր բարոյական առաքելություն է՝ ամենից առաջ: Նաև ազգայինի հասկացությունը մեզ համար, Հայ Եկեղեցու համար, ամբողջապես արտացոլվում է մեր Եկեղեցու հոգևոր առաքելության մեջ: Մենք ազգից դուրս չենք, ազգը մեր Եկեղեցիի մեջ է: Հետևաբար, մեր ամենաառաջնահերթ առաքելությունն է մեր ժողովուրդի կյանքում քարոզել Աստուծո խոսքը և բարոյական կյանքի հրամայականներին հրապուրվելու կոչը: Մենք համոզված պետք է լինենք, որ բոլոր տեսակի դժբախտությունները մարդկային կյանքի մեջ, մինչև պատերազմները արյունահեղ, բոլոր տեսակի ազգամիջյան տագնապները, որ միշտ եղել են և հիմա էլ կան, բոլոր տեսակի դժբախտությունները և ողբերգությունները վերջիվերջո մեկ հիմնական պատճառ ունին՝ բարոյական գիտակցության պակասը: Հիսուս եղավ և մնաց մինչև այսօր Իշխանը Խաղաղության և Արեգակը Արդարության: Այս բարոյական հիմնական մտածումներից, սկզբունքներից մենք պետք չէ շեղվենք և տարվենք այլ և այլ գաղափարախոսություններով: Ուշադիր եղեք, չշփոթվեք,

շտարվեք ամեն տեսակի հոսանքներով: Հոգևոր կյանքի մակարդակի վրա լսում եմ, աղանդները շատանում են, հանդիպողը Քրիստոսի մասին է խոսում, առանց գիտնալու, թե ինչ է ասում, առանց հանգամանք ունենալու, առանց Աստուծո շնորհը ունենալու, առանց գիտակցություն ունենալու, թե ուր է գնում: Աղանդներ, աղանդավորներ տեսակ-տեսակ: Նույնիսկ մինչև բողոքիստական կամ կրիշնայական, նույնիսկ վերջերս էլ հեթանոսական, իբրև թե մեր արմատներն են դրանք: Մեր նման ազգի համար, մեր նման քրիստոնյա ժողովուրդի համար բոլորովին անհարմար են նման անկարգություններ: Մեր ժողովուրդը այսօրվա՝ երեկվա ժողովուրդը չէ, ոչ էլ մեր Եկեղեցին, երկու հազար տարվա հոգևին կազմակերպված ժողովուրդ ենք, մանավանդ քրիստոնեության շրջանից սկսյալ: Եվ քրիստոնեությունը համամարդկային կրոնք է և համամարդկային բարոյականի ամենամեծ բարձունքն է հանդիսանում համայն աշխարհի համար: Ինչպե՞ս մենք հրաժարվենք այդ մեր իսկական արմատներից, ճշմարիտ արմատներից, բարոյական արմատներից, մարդասիրական իդեալներից, արդարության և խաղաղության քրիստոնեական իդեալներից: Հետևաբար, ես կուզեի այսօր դիմել մանավանդ մեր երիտասարդներին, որոնք տակավին իմացական և հոգևոր կազմավորման ընթացքի մեջ են և երբեմն կարող են դյուրությամբ սալթաքել աջ կամ ձախ, որ զգույշ լինեն, հավատան Քրիստոսի Ավետարանին և մնան մեր Եկեղեցուն հավատարիմ և կարգապահական: Հոգևոր կարգապահությունը պետք է ամբողջապես պահպանվի բոլորի կողմից, դրանում է մեր Եկեղեցու հոգևոր ուժը և մեր կյանքի բարոյական գեղեցկությունը:

Թող Աստված անասան և միշտ ծաղկյալ պահի մեր Սուրբ Եկեղեցին, իր հավատավոր ժողովուրդով և հոգևոր սպասավորներով:

Թող Աստված անասան ու բարգավաճ պահի նաև մեր Մայր Հայրենիքը, մեր հայրենի պետությունը:


Թող նոր տարին լինի խաղաղության և արդարության տարի համայն մեր ազգի համար:





ԱՄԻՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ԿԱՌՄՈՐ ԽՆԶԻ
ՆԱԽՈՒԳԱԸ ՏԻՎԻՆ ՄԵՐՈՒՄ-ՊԻՆ, ՖԱՆՏԱՆԻՆ Ս. ԷՋՄԻԱՏԻ ՎԵՀԱՐԱՆՆՈՒՄ

(5 հունվար 1990 թ.)



ԻՏԱԼԻԱՅԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Սույն թվականի հունվարի 5-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին այցելեց Հայաստանում գտնվող Իտալիայի Կարմիր խաչի պատվիրակությունը՝ գլխավորությամբ «Միասին՝ հանուն խաղաղության» միջազգային ընկերակցության նախագահ Մարիա-Պիա Ֆանֆանիի: Պատվիրակության կազմում են նաև Իտալիայի Կարմիր խաչի փոխպրեզիդենտ, գեներալ Պաոլո Կապիևին, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ուրիշներ:


Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային կազմակերպության պատվիրակությունը ժամանել էր Հայաստան՝ իր հետ բերելով Ս. Ծննդյան նվերներ աղետի գոտու երեխաների համար:

Բարիգազատյան ջերմ խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: Այնուհետև գրույց ծավալվեց աղետի գոտու և նրա վերականգնման աշխատանքների մասին: Ինչպես երկրաշարժից հետո առաջին իսկ օրերից, տիկին Մարիա-Պիա Ֆանֆանին իր պատրաստակամությունը հայտնեց՝ շարունակելու օգնությունը Հայաստանին:

Անկեղծ և ջերմ գրույցից հետո իտալական պատվիրակությունը հրաժեշտ տվեց Վեհափառ Հայրապետին և լավագույն տպավորություններով մեկնեց Մայր Աթոռից:

Հաջորդ օրը, հունվարի 6-ին, Իտալիայի Կարմիր խաչի և Կարմիր մահիկի պատվիրակության անդամները մեկնելու են Սպիտակ՝ իրենց մասնակցությունը բերելու «Վիլաշո Իտալիանո» ավանի տարածքում իտալացիների կողմից կառուցված դպրոցի բացման հանդիսավոր արարողությանը:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երկուշաբթի.—Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի առթիվ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 5-ին, ուրբաթ.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերազնորի Տ. Ներսես արքեպս. Գոգարալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, շաբաթ.—Տօն Ծննդեան և Աստուածայայտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի բովանդակակից քարոզ խոսեց (տես էջ 3):

* * *

Հունվարի 7-ին, կիրակի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քին. Ֆրանկյանը:

* * *

Հունվարի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունվարի 13-ին, շաբաթ.—Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս.

պատարագ մատուցեց Մայր տաճարի մկրտարանի ծիսակատար Տ. Եղիշե ավագ քին. Բաղրամյանը:

* * *

Հունվարի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մեպոն վրդ. Չուլջյանը:

* * *

Հունվարի 17-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունվարի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսպալյանը (տես էջ 32):

* * *


Հունվարի 24-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:


* * *

Հունվարի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քին. Հարությունյանը:

* * *

Հունվարի 31-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:





ՆԵՐՄԵՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
 ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
 (21 հունվար 1990 թ.)

«Յանուն Հօր եւ Որդու եւ Հոգույն Արքայի, ամեն»:

«Կթա, Տէր, ի հոգիս մեր անջեցելոց»:

«Ով Տէր, գթա մեր անջեցյալների հոգիներին»:

Այսօր, հունվարի 21-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրահանգով Հայաստանյայց Եկեղեցւո կամարների տակ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ վասն հոգվոցն նահատակաց, վկայից, որոնք՝ ընկան հունվարի 15—19 օրերին Բաքվում, Ծախումյանում և Գետաշենում: Մեր հոգիները ցնցված են ի տես Ադրբեջանի ժողովրդական ճակատի «գորշ գայլերի» կատարած սուկայի սպանդի: Եվ տարվում ենք մտածելու, որ 1915 թվականին սկսված ցեղապանությունը դեռևս շարունակվում է: Կարծեք թե 20-րդ դարը հայ ժողովրդի վրա գործադրվող եղեռնի, արյունահեղության դարն է: Անցյալ շաբթվա օրերին, սիրելի հավատացյալներ, Ադրբեջանում, հատկապես Բաքվում, Ծախումյանում և Գետաշենում ավելի քան հարյուր (հիշտ թիվը Աստված գիտե) անմեղ հայեր, պարզապես հայ լինելու պատճառով զոհվեցին ժողովրդական ճակատի սանձարձակ ելուզակների ձեռքով: Նրանք դարձան հայ ժողովրդի վկաները և հայ ժողովրդի արդարության կանչը առ Աստված բարձրացրին իրենց նահատակությունը: Աստված ևս ասես ցնցվեց, իջավ և մարդկանց խիղճը շարժեց: Այդ իսկ պատճառով, երբ ժողովրդական ճակատի վայրագությունները գլեցին-անցան մարդկային մտածողության սահմանները, վրա

հասավ արդարությունը, խորհրդային բանակները իջան դեպի հարավ՝ ձգտելով խաղաղություն հաստատել Ադրբեջանի մեջ: Այդ իրադարձության հետևանքով ժողովրդական ճակատի մարդիկ ևս զոհվեցին: Իմ մտածումը այժմ թռչում-գնում է մոտ 90 տարի դեպի ետ՝ հիշատակելու համար Խրիմյան Հայրիկի հետ պատահած դեպքը, երբ համիդյան ջարդերից հետո Վանից եկող մի հայ քահանա ներկայացնում է Հայոց Հայրիկին Վեհարանում: Նա, հոգով, սրտով վշրված, ամբողջ իր ընտանիքը կորցրած, լացակոմած աչքերով Խրիմյան Հայրիկի առջև ծնկի է գալիս և ասում. «Հայրիկ, ես սգավոր եմ, եկել եմ, որ մխիթարես ինձ, որովհետև կորցրել եմ ամբողջ ընտանիքս, ոչ մի ժառանգ չունեմ և մնացել եմ անտեր ու անտիրական»: Խրիմյան Հայրիկը ոտքի է կանգնում և դիմելով քահանային՝ ասում է. «Ոտքի ել, քահանա հայր, դու քո ընտանիքն ես կորցրել, ես ամբողջ իմ ժողովուրդն եմ կորցրել, հաշվիր, թե քանի-քանի տասնյակներով մարդ է զոհված, բոլորն էլ իմ զավակները: Ես միթե քեզանից ավելի սգավոր չե՞մ: Հիմա ես ծնկի եմ գալու, և դու ինձ մխիթարության արոթք կարդաս»:

Սիրելի հավատացյալներ, մեր սրտերը, Հայոց Վեհափառ Հայրապետից սկսած, Հայ օրերին ցավով են լցված: Անցյալ շաբաթվա ընթացքում Մոսկվայում տեղի ունեցավ շրջակա միջավայրի մաքրության և կենսապահպանության հարցերին նվիրված մի կարևոր ժողով, որին ես ևս մասնակցում էի: Այնտեղ, բնական է, ժողովի մասնակիցներին մտահոգող ամենահրատապ հարցը Բաքվի, Ծախումյանի և Գետա-

շենի մեջ կատարվող աղետալի իրադարձությունների հարցն էր: Մի բանաստեղծ, արտասահմանից եկած, իր խոսքի մեջ հանկարծ պոռթկաց. «Մինչև ե՛րբ, մինչև ե՛րբ հայ ժողովուրդը ցեղասպանության զոհ պիտի դառնա, և արդարություն պիտի տեղի չունենա»: Կարծես Աստված լսեց նրա ձայնը: Հաջորդ օրը խորհրդային բանակները եկան Բաքու՝ ահտեղ կարգ ու կանոնը, խաղաղությունը վերահաստատելու համար:


Միլիտի եղբայրներ և քույրեր, մենք այսօր աղոթում ենք մեր նահատակների, մեր վկաների, մեր զոհված եղբայրների և քույրերի համար, մոմ ենք վառում, խունկ ենք ծխում, մեր աղերսն ենք բարձրացնում առ Աստված, որ մեր ձայնը լսի, ընդունի նրանց հոգիները խաղաղությամբ և իր թագավորության մեջ բնակեցնի մեր բոլոր զոհվածներին: Նաև մեր աղոթքն է, որ Աստված իր Սուրբ Հոգու միջոցով մխիթարություն պարգևի հայ ժողովրդին և բոլոր նրանց, որոնք իրենց կորցրած հարազատների կակիծն են ապրում այս օրերին: Բանավանդ մեր աղոթքը, սիրելի հավանացյալներ, սուսքում ենք առ Ամենա-

բարձրալը՝ խնդրելով, որ մարդկանց սրբուհի է իմացականության մեջ ծագեցնի արդարության, մարդասիրության, եղբայրության լույսը, որպեսզի մարդիկ կարողանան այս կյանքը վայելել իբրև եղբայրներ, ապրել իբրև հարազատներ միմյանց հետ: Խնկի և աղոթքի այս պահին մեր մաղթանքն է, որ Աստված հայ ժողովրդի ձայնը լսի, բոլոր փակ դռները բացվեն, բարացած սրտերը փափկեն, և հայ ժողովուրդը կարողանա իր արդար երազներն իրականացնել այս աշխարհի վրա:

Մեր ընդհանուր մաղթանքն է նաև, որ Աստված խաղաղ ու հանդարտ պահի մեր երկիրը, մեզ շնորհի իմաստություն, որպեսզի, ինչպես ժողովրդական առածն է ասում, հազար անգամ մտածենք և մեկ անգամ կտրենք, որպեսզի ինչ որ կտրենք, սխալ չլինի, և հետո դրա համար չզղջանք:

Թող Աստուծո խաղաղությունը իջնի մեր նահատակների հոգիների վրա, և Սուրբ Հոգին զա մեզ բոլորիս մխիթարելու և մեր կյանքը ապահով, խաղաղ նավահանգիստներ հասցնելու, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:





ՆՈՐԻՆ ՅԱԿՈՒԲԱՅ (ՇԱՄԱԽԵՑԻՈՅ)

ՏԱՂ ԵՒ ԴՐՈՒԱԳ Ի ՎԵՐԱՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,
ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ

Իմանալոյ լուսոյ մօրն համանման,
Վաշ, համանման, յորոյ անուն իսկ կազմեցար դու խորան,
Վաշ՝ դու խորան, վասնզի էջ ի քեզ բանն հայրական,
Վաշ, հայրական, ով Սուրբ Էջմիածին մայրդ տենչալի,
Վաշ՝ ցանկալի:

Յարացոյց ես և տիպ դրախտին փափկութեան,
Վաշ, փափկութեան, ի քեզ գոյ պտուղ կենաց և ջուր զովացման,
Վաշ, զովացման, որովք միշտ կեան որ ի քեզ իսկ հաւատան,
Վաշ՝ հաւատան, ով Սուրբ Էջմիածին դըրախտ պըտղալի,
Վաշ՝ ցանկալի:

Աղբերունակ պարտեզ յերկրիս Հայաստան,
Վաշ՝ Հայաստան, որով միշտ ոռոգես զորդիս հայկական,
Վաշ՝ հայկական, լաճիլ ի չարի Տեսուհըն մերոյ կատարման,
Վաշ՝ կատարման, ով Սուրբ Էջմիածին պարտեզ ջրալի,
Վաշ՝ ծաղկալի:

Կամար լուսապատար ի քեզ կայացեալ,
Վաշ՝ կայացեալ, որ և զձև շինուածոյ քոյ ուսուցեալ,
Վաշ՝ ուսուցեալ, ըստ այնմ Սուրբն Գրիգոր զքեզ կառուցեալ,
Վաշ՝ կառուցեալ, ով Սուրբ Էջմիածին տանար լուսալի,
Վաշ՝ բաղձալի:

Որախացիք հարսնըդ անախտ փեսային,
Վաշ՝ փեսային, որ էջ ի քեզ հանդերձ դասուքն երկնային,
Վաշ՝ երկնային, և ընդ անդոյդ զուգացեալ՝ արար բազմածին,
Վաշ՝ բազմածին, ով Սուրբ Էջմիածին հարսնըդ ցանկալի,
Վաշ՝ տարփալի:

Բարձրաբերձ աշտանակ յոսկոյ կեփագեայ,
 Վաշ՝ կեփագեայ, անաղօտ բորբոքմամբ լուսնայ եօթնակեայ,
 Վաշ՝ եօթնակեայ, յորս միշտ յուսափայլես զցեղս հայկազնեայ,
 Վաշ՝ հայկազնեայ, ով Սուրբ Էջմիածին դամբար յուսայի,
 Վաշ՝ ցանկալի:

Արդարև ես քատակ Նոյեան տապանին,
 Վաշ՝ տապանին, զի վրձնադիտ էդեր ազգիս մերային,
 Վաշ՝ մերային պահելով զոգիս մեր՝ յողխոյ դիւային,
 Վաշ՝ դիւային, ով Սուրբ Էջմիածին տապան կեանայի,
 Վաշ՝ փրկալի:

Յիջանելոյն ի քեզ խնդրեմք յուսայի,
 Վաշ՝ յուսայի, պահել ապատ զԱթոռոյ Հայոց պանծալի,
 Վաշ՝ պանծալի, հանդերձ հայրապետի (ե)ւ մանկամբք
 Վաշ՝ բերկրալի, ով Սուրբ Էջմիածին Աթոռ հրաշալի,
 Վաշ, պանծալի:

Մատենադարան ձեռ. Թի 8444, էջ՝ 428 ա—բ



ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Ծնորհակալ եմ քեզանից հավետ և երախտապարտ,
Որ իմ մեջ դեռևս մանուկ հասակից սերմանեցիր դու
Սերը ճշմարտին, երկյուղն Աստուծո,
Օրհնել ուսուցիր անհիծելու տեղ,
Աղոթքի կանգնել, որ երբ կամենա, հաղորդվեմ, խոսեմ
Իմ Արարչի հետ:
Սեր սերմանեցիր իմ մատաղ հոգում՝ փոխարեն քննի և ատելության
Ու փտահոությունն ներշնչեցիր ինձ փոխան կասկածի,
Օգնել ուսուցիր՝ խարդախ լինելու, գողանալու տեղ,
Գուց ու կարեկցանք՝ փոխան մախանքի,
Հույս ներշնչեցիր անհուսությունը դիմագրավելու:
Աղքատության մեջ ինքնասիրությամբ թրծեցիր դու մեզ,
Գոռոզության տեղ մեզ համեստություն ուսուցանեցիր,
Զոհաբերության ոգի տվեցիր փոխան անհագորդ,
Ընչաքաղցության,
Փորձության պահին՝ պատվասխնդրություն դու ներշնչեցիր:
Նեղության առաջ սովորեցրիր մեզ չընկրկել բնավ,
Բարկության պահին՝ լինել համբերող և անհիշաչար:
Իմ անձն կավիճն ձև ու կերպ տվիր առաքինական,
Այնպես, ինչպես դու ստացել էիր քո ծնողներից:
Ինձ դարձրիր անոթ վերին կոշունքի սպասարկության,
Վառեցիր իմ մեջ ջահը հավատի հանդեպ Արարչի և հայրենիքի՝
Սիրելու ազգն իմ, հարազատներն իմ, լույս ու աշխատանք:
Քեզ բյուր օրհնություն, գոհ եմ Տիրոջից, որ եղել եմ ես
Քո իսկ զավակը և քո միջոցով ծնվել եմ տանջված,
Բայց խաղաղասեր, բայց խաղաղարար իմ ազգի ծոցում:
Եվ ես որպես հայ, իմ ծնված օրից քեզ հետ և բազում
Ազգակիցների,
Բռնադատվել եմ ճաշակելու միշտ դառնություն ու վիշտ,
Դրանով էլ հենց արժանանալով մեծագույն պատվին՝
Դառնալու խոնարհ չարչարակիցը բյուր չարչարանաց
Հիսուս Քրիստոսի:

ՄԳՈՅ ՀԱՆԴԵՍ ԻՐԱԲԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՄԵՉ

Դեկտեմբեր 1989-ին Ուրբաթ: Այսօր առավել է տարեկիցին Մայր Հայրենի մէջ տեղի ունեցած երկրաշարժէն յետո՛ւ տասնեակ հազարաւոր հայորդի-ունք:

Ուսուցեալն ժամը 9.30 է: Պաղտատի պարտաւարձ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շէնքին լեւի-լեցուն է հայրենիքէն հեռու, ց եւ սգաւոր հայ քոյրերով եւ եղբայր-ով, որոնք եկած են իրենց սիրտի ա-ւան ու աղօթքը լղելու առ Աստուած, եւսի Տէրը լուսաւորէ անոնց արդար անմեղ հոգիները: Եկած են իրենց ուխ-տաւարտելու եւ միացնելու իրենց աղօթ-Պաղտատի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ շէնքու խորանէն բարձրացող օրհնա-խումակի միջոցով, Միածնատէջ Ար. Սե-ին սուգեւ ճնկաչօք աղօթող հայ հա-սանքաւոր աղօթքին ի միութարութիւն եւ արժատութիւն մեր ժողովուրդին:

Ուսուցեալն պատարագիչն է Ար. Էջմիածնէն անցած Մայր Աթոռի երիտասարդ միա-ճակատակի Ս. Մակար Աբեղայ Յով-նէտեանը, որը իր անդրանիկ պատա-ւը կը մատուցէ Իրաքի Թեմէն Անքու եւ այլու պիտի ծառայէ Պաղտատի ա-նձրուանիստ եկեղեցու մէջ: Պատա-ւը Հայր Սուրբը մէկ կողմէն տխուր, այն մէկ կողմէն ուրախ այս առիթնե-րաւոր պատշաճի իր արտի խօսքն ու ոգը կը լիկ իր հօտին:

Անուն Հօր եւ Որդու եւ Հոգույն Ար-մատեանք:

Ի որպէս առաւելան չարչարանքն տոսի ի մեզ, Առնապէս եւ ի ձեռն տոսի առաւել լիցի եւ միութարութի-ւնք» (Բ Կորնթ. Ա. 5):

Ապէս որ Բրիտանի չարչարանքնե-տաւարացան մեր մէջ, այնպէս ալ

Բրիտանի պիտի առաւելանայ մեր միա-թարութիւնք»:

Սիրելի հաւատաւոր քոյրեր եւ եղբայր-ներ,

7-ը Դեկտեմբերի 1988 թուական: Ահա մեր ժողովուրդի պատմութեան սեւ Էջե-րուն մէջ իր տեղը կը գրաւէ Անք վերքի, Անք սուգի, Անք արիւնի թիւ մը: Թուական մը մեր ժողովուրդի ճակատագրէն: Թուա-կան մը մեր ժողովուրդի այն բազում եւ դաժան օրերէն, որոնք երբ կ'արտասա-նենք ինքնաբերաբար, կամայ թէ ակամայ սարսուռ մը կանցնի մեր մարմինին մէ-ջէն եւ կը ստիպէ մեզի պահ մը կենալ, պահ մը զգաստանալ ու մտօրիլ եւ արցունքի կաթիլ մը թափել մեր սիրտերուն մէջ...:

Սիրելի հաւատացեալներ, այսօր մենք քոյրս հաւաքուած ենք այստեղ, այս սուրբ եւ աստուածաբան կամարներուն Անքին, իշխտակելու մինը աղ պահերէն: Ահա որ երկրաշարժէն զոհուած տասնեակ հազա-րաւոր անմեղ հայորդիներու տարեկիցը ոգեկոչելու եւ ի խորոց արտի թխած, ինչ-տես կ'ըսէր Նարեկացին, մեր աղօթքները լղելու առ բարձրեալն Աստուած՝ անոնց արդար հոգիները երկնային առատ ողոր-մութեանն ու խաղաղութեանը արժանի ը-նելու համար. «Յիշատակն Արդարոց Օրհ-նութեամբ Եղիցի»:

Սիրելի Հաւատացեալներ:

Ինչպէս գիտեք, քրիստոնէութիւնը իր ողջ էութեամբ եւ ըմբռնողութեամբ զօհա-բեռութեան կրօն է, իմաստայից եւ գի-տանական զոհաբերութեան. «Հովի քաջ զանձն իր ողբէ ի վերայ ոչխարացն» (Յով. Ժ 11): Այսպիսի զոհաբերութեան ախար օրինակը ծառայեց Առն ինքն՝ Բրիտանու, զոհեալ իր սրբազնակատար անձն մեր՝ մարդկանց իրկութեան հա-մար: Եւ բնական է, որ այնքան գիտակցուած զոհաբերութիւն իր ետեւէն կը բերէ լուսա-

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Ծնորհակալ եմ քեզանից հավետ և երախտապարտ,
Որ իմ մեջ դեռևս մանուկ հասակից սերմանեցիր դու
Սերը ճշմարտին, երկյուղն Աստուծո,
Օրհնել ուսուցիր անիծելու տեղ,
Աղոթքի կանգնել, որ երբ կամենա, հաղորդվեմ, խոսեմ
Իմ Արարչի հետ:

Սեր սերմանեցիր իմ մատաղ հոգում՝ փոխարեն քենի և ատելության
Ու վստահությունն ներշնչեցիր ինձ փոխան կասկածի,
Օգնել ուսուցիր՝ խարդախ լինելու, գողանալու տեղ,
Գութ ու կարեկցանք՝ փոխան մախանքի,
Հույս ներշնչեցիր անհուսությունը դիմագրավելու:
Աղքատության մեջ ինքնասիրությամբ թրծեցիր դու մեզ,
Գոռոզության տեղ մեզ համեստությունն ուսուցանեցիր,
Զոհաբերության ոգի տվեցիր փոխան անհագուրդ,
Ընչաքաղցության,

Փորձության պահին՝ պատվախնդրությունն դու ներշնչեցիր:

Նեղության առաջ սովորեցրիր մեզ չունկրկել բնավ,
Բարկության պահին՝ լինել համբերող և անհիշաչար:

Իմ անձն կավիճն ձև ու կերպ տվիր առաքինական,
Այնպես, ինչպես դու ստացել էիր քո ծնողներից:

Ինձ դարձրիր անոթ վերին կոշունքի սպասարկության,
Վառեցիր իմ մեջ ջահը հավատի հանդեպ Արարչի և հայրենիքի՝
Սիրելու ազգն իմ, հարազատներն իմ, լույս ու աշխատանք:

Քեզ բյուր օրհնությունն, գոհ եմ Տիրոջից, որ եղել եմ ես
Քո իսկ զավակը և քո միջոցով ծնվել եմ տանջված,
Բայց խաղաղասեր, բայց խաղաղարար իմ ազգի ծոցում:

Եվ ես որպես հայ, իմ ծնված օրից քեզ հետ և բազում
Ազգակիցների,
Բռնադատվել եմ ճաշակելու միշտ դատնությունն ու վիշտ,
Դրանով էլ հենց արժանանալով մեծագույն պատվին՝
Դառնալու խոնարհ չարչարակիցը բյուր չարչարանաց
Հիսուս Քրիստոսի:

ՍԳՈՅ ՀԱՆԴԷՍ ԻՐԱԳԻ ՀԱՅՈՑ ԹԷՄԻՆ ՄԷՋ

8 Դեկտեմբեր 1989-ին Ուրբաթ: Այսօր յիշատակն է տարելիցին Մայր Հայրենիքին մէջ տեղի ունեցած երկրաշարժէն զոհուած տասնեակ հազարաւոր հայորդիներուն:

Սուսուտեան ժամը 9.30 է: Պաղտատի առաջնորդանիստ Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին լեփ-լեցուն է հայրենիքէն հեռու, բայց եւ սգաւոր հայ քոյրերով եւ եղբայրներով, որոնք եկած են իրենց սիրտի աշերսն ու աղօթքը լելու առ Աստուած, րպէսզի Տէրը յուսաւորէ անոնց արդար ա անմեղ հոգիները: Եկած են իրենց ուխտը կատարելու եւ միացնելու իրենց աղօթքը Պաղտատի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ձկեղեցոյ խորանէն բարձրացող օրհնաներ խումկի միջոցով, Միածնաէջ Ար. Սելանին անջել ծնկաչօք աղօթող հայ հասարակացի աղօթքին ի մխիթարութիւն եւ պայծառութիւն մեր ժողովուրդին:

Օրուայ պատարագիչն է Ար. Էջմիածնէն եւմանած Մայր Աթոռի երիտասարդ միասն՝ Հոգեշնորհ Տ. Մակար Արեղայ Յովնանէտեանը, որը իր անդրանիկ պատարագը կը մատուցէ Իրաքի Թեմէն Աերս եւ ետ արտու պիտի ծառայէ Պաղտատի առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ: Պատարագիչ Հայր Սուրբը մէկ կողմէն տխուր, ակայն մէկ կողմէն ուրախ այս առիթնետով յատուր պատշաճի իր սրտի խօսքն ու արողը կը լլէ իր հօտին.

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Արդոյ. ամէն»:

«Չի որպէս առաւելան չարչարանքն իրաւոսի ի մեզ, Առնպէս եւ ի ձեռն իրաւոսի առաւել լիցի եւ մխիթարութիւն մեր» (Բ Կորնթ. Ա 5):

«Ինչպէս որ Բրիստոսի չարչարանքներ առատացան մեր մէջ, այնպէս ալ

Բրիստոսով պիտի առատանայ մեր մխիթարութիւնը»:

Սիրելի հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ,

7-ը Դեկտեմբերի 1988 թուական: Ահա մեր ժողովուրդի պատմութեան մեւ Էջերուն մէջ իր տեղը կը գրաւէ Աոր վերքի, Աոր սուգի, Աոր արիւնի թիւ մը: Թուական մը մեր ժողովուրդի ճակատագրէն: Թուական մը մեր ժողովուրդի այն բազում եւ դաժան օրերէն, որոնք երբ կ'արտասանենք ինքնաբերաբար, կամայ թէ ակամայ սարսուտ մը կանցնի մեր մարմինին մէջէն եւ կը ստիպէ մեզի պահ մը կենայ, պահ մը զգաստանայ ու մտօրիլ եւ արցունքի կաթիլ մը թափել մեր սիրտերուն մէջ...:

Սիրելի հաւատացեալներ, այսօր մենք բոլորս հաւաքուած ենք այստեղ, այս սուրբ եւ աստուածաբանկ կամարներուն Աերքեւ, յիշատակելու միւնը այդ պահերէն: Ահաւոր երկրաշարժէն զոհուած տասնեակ հազարաւոր անմեղ հայորդիներու տարելիցը ոգեկոչելու եւ ի խորոց սրտի բխած, ինչպէս կ'ըսէր Նարեկացին, մեր աղօթքները լելու առ բարձրեայն Աստուած՝ անոնց արդար հոգիները երկնային առատ ողորմութեանն ու խաղաղութեանը արժանի ընելու համար. «Յիշատակն Արդարոց Օրհնութեամբ Եղիցի»:

Սիրելի Հաւատացեալներ:

Ինչպէս գիտէք, քրիստոնէութիւնը իր ոոյ Էութեամբ եւ ըմբռնողութեամբ զօհաբեռութեան կրօն է, իմաստայից եւ գիտանաւուած զոհաբերութեան. «Հովիւ քաջ օանձն իւր դէ ի վերայ ոչխարացն» (Յով. Ժ 11): Այսպիսի զոհաբերութեան օխաւոր օրհնակը ծառայեց Աոյն ինքն՝ Բոհստոս, զոհեով իր սրբազնակատար անձն մեր՝ մարդկանցս իրկութեան համար: Եւ բնական է, որ ամէն գիտակցուած զոհաբերութիւն իր ետեւէն կը բերէ յուսա-

տր եւ պայծառիմաստ յարութիւնը: Որեմն դարձեալ մեր Տէրը Յիսուս Քրիստոս ի ապացոյց իր զոհաբերութեան, իմաստաւորութեան, յարեալ եւ անով իսկ փառաւորեց ողջ քրիստոնէութիւնը ցայսօր, հաստատելով քրիստոնէական այն մեծ նշանաբանը, որը կ'ըսէ. «Չկա յարութիւն առանց չարչարանաց» եւ կամ ալ զոհաբերութեան:

Եւ ահա, սիրելի հաւատաւոր ժողովուրդ:

Այս նոյնը կը վկայէ մեր ընտրած քարոզի բնաբանը, որ Մեծն Պօղոս առաքեալ կորնթացիներուն յղած իր նամակին մէջ կ'ըսէ. «Ինչպէս որ Քրիստոսի չարչարանքները առաւացան մեր մէջ, աչնպէս ալ Քրիստոսով պիտի առատանայ մեր միախորութիւնը» (Բ Կորնթ. Ա 5): Սակայն Քրիստոսի Աւետարանին ամեն մէկ խօսքը, գործը, հրաշքը եւ կամ առակը հասկնալու համար իսկապէս որ մենք մեր անձը պիտի զոհաբերենք, մենք մեր մարմինին վրան պէտք է զգանք անոր լուծը, որը քաղցր է եւ անուշ, որովհետեւ քրիստոնէութիւնը միայն ու միայն գործնական կատարողութեան կրօն է, եւ եթէ բարարարուինք միայն խօսքով, ըսելով թէ քրիստոնէական կրօնը այս է եւ կամ այն է, ապա ինչպէս Պօղոս առաքեալ պիտի ըսեր. «Ի զուր եմ քարոզութիւնք մեր եւ ի զուր եմ հաւատք ձեր» (Ա Կորնթ. ԺԵ 14):

Սիրելիներ, մեր ժողովուրդը բազում անգամներ զոհաբերած է իր անձը «Վասն հաւատոյ եւ հայրենեաց», որեմն աշխարհի զոհաբերութիւններէն ետք մենք երբէք ու երբէք իրաւունքը չունինք ընկճուելու եւ յուսահատուելու, որեւէ բնական աշխարհի ժամանակ, ի մասնաւորի Մայր Հայրենիքին մէջ տեղի ունեցած երկրաժարժէն, որովհետեւ մենք պիտի հաւատանք անոնց մօտալուս յարութեանը...

Եւ կը հաւատամ այս խօսքերուն, կը հաւատամ գիտակցօրէն ու ամենայն լրջութեամբ քանզի ահա միախորտած, երջանիկ եւ փառաւորուած կը զգամ ինձի այս պահուս, այս վայրկեանին, վասնզի այն ժողովուրդը, որմէ հոգւոյ եւ մարմնոյ սնունդը ստացած եմ, այն ժողովուրդը, որը տարիներ առաջ ինձի վստահեցաւ ըլլալու հովիւր իր Եկեղեցոյ հօտին, աշօր, այս Եկեղեցոյ մէջ, Իրաքեան այս հողին վրա, կանգնած է ունկնդրելու իր ընտրածի, իր համեստ հովիւի սիրտի խօսքը, սիրտի պատգամը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի զանգակներու օրհնաբեր դողանքը:

Սիրելի հարազատ ժողովուրդ մեր,

Այս առիթով, Քրիստոսի այս ամբողջութեան առջեւ, իրաքեան թեմիս բարեկամութեամբ Ս. Ասագ եպս. Ասատուրեան առջեւ, իմ հոգեւոր եղբայրներուս եւ վերջապէս ձեր առջեւ, սիրելի տացեալներ, կու գամ իմ ուխտը իմ խառտունը կատարելու, որ կը կոչուի «Մշակ ստանց ամօթոյ», զոհաբերութեամբ անձը հոգեպէս եւ մարմնապէս հարազատ իրաքեան հայ ժողովուրդին համար ի միախորութիւն եւ ի պատիւն թիւն մեր Եկեղեցոյ:

Սիրելի հաւատացեալներ, որեմն քոյրս համատեղ ալօթենք սու Ասատուրեան երկնային Տէրը հոգոյ եւ միտքի միախորութիւն եւ մտքի պատիւն պարգեւէ համայն մարդկութեան ռաւելապէս Հայաստանեայց Առաքել Մայր Եկեղեցոյ զաւակներուն, որ յաւատան եւ ի սիրտու աշխարհի:

«Մաղաղութեամբ քով, Քրիստոսի կիջ մեր, որ ի վեր է քան զամենայն եւ զքանս, ամբացո գնեց եւ ամբարձրեց յամենայն չարէ».

Որմէ ետք պատարագը կը շարունակուի ամենայն հարազատութեամբ:

Պատարագէն անմիջապէս ետ Ծափ Արծիւեանը հոգեկան բարձրութեամբ հաւատացեալ ժողովուրդներէն «Հայրենիքի Զայն» մէջ յոյս տեսած 14-ամեայ ստեղծուած ռաւել քան 10-ը գործողութիւններէն քով փրկուած՝ Ազգի Նազեանին յօդուածը, որն ակամայ կը շարժէ հաւատացեալներուն յուզական աշխարհը կատարող փոքրիկ Ազգի քրտած «Մայր Իմ Հայաստան» տեղծութեամբ՝ 15-ամեայ Սեդա եանի յուզաթաթախ արտասանութեամբ:

Սրտի խորին յուզումներով, Պատարագ «Կոմիտաս»-ի անուան երգերը Պրն. Կարապետ Քիշիշեանի վարորդութեամբ կը կատարէ «Ամենայն սիրտերը եւ ապա թեմիս բարեկամութեամբ գերաշնորհ Ս. Ասագ եպս. Ասատուրեանը, յոյսի եւ յոյսի արցունքով կ'ընթերցէ Ամենայն Հայոց Կարապետ Ս. Ս. Վազգէն Ա. Հայրապետի քարոզչական առիթով սոյն թուականի Դեկտեմբեր 10-ին պիտի արտասանուի Հայրենիքի Առաքելական Մայր Եկեղեցոյ թեմերէն ներս, ի մասնաւորի Ծիրանայ թեմէն եւ Ամենայն Հայոց Հայրապետի կողմէ: Զարոգը մեծ յուզումներով հաւատացեալ ժողովուրդի:

որը կարծեք հրաշքի պես եւ մէկ ակնթարթի մէջ հաւատք ու ներշնչանք կը պարգեւէ սգաւոր ժողովուրդին:

Քարոզէն ետք Սրբազան Հայրը, ժողովուրդին ի տեղեկութիւն, կը ներկայացնէ Վեհափառ Հայրապետի կողմէն մէկ օր առաջ դրկուած հեռագիրը, որտեղ Ամենայն Հայոց Հայրապետը կը հրահանգէ բոլոր եկեղեցական մարմիններուն, հոգետրականաց եւ աշխարհականաց դասուն եւ միւս բոլոր ազգային կազմակերպութիւններուն՝ նեցուկ ըլլալ Մայր Հայրենիքին,


Արցախեան աշխարհի մեր հայրենակիցներու պայքարին:

Ապա «Կոմիտաս» երգչախումբը կը կատարէ քանի մը ազգային-հայրենասիրական երգեր՝ «Կիլիկիա», «Հայրենիքիս հետ», «Նոր Երեւան» եւ այլն:

Հանդէսը աւարտելէ ետք կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն երկրաշարժի զոհուածներուն ի յիշատակ եւ սրբազան հօր արձակումով խոուներաւ ժողովուրդը կը մեկնի «Ի խաղաղութիւն»:

ՄԱԿԱՐ ԱԲԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ





ՀԱՅՐ ՊՈՂՈՍ ԼԵՎՈՆ ԶԵՔԻՅԱՆ

**ԵՂԻՇԵԻ ԵՐԿԸ ՈՐՊԵՍ ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

20-րդ դարում հայրաքանական և վաղ քրիստոնեական աստվածաբանությունը մի շարք ուսումնասիրությունների է արժանացել¹: Եկեղեցին մեկն է այն փրկագործական հաստատություններից, որոնց վերաբերում են այս աստվածաբանական ուսմունքները: Ներկա հոդվածը ևս մի փորձ է վերականգնելու քրիստոնեական ուսմունքի վաղ փուլերն իրենց գլխավոր առնձնահատկություններով և մանրամասներով հանդերձ. հենվելով հիմնականում հայկական եկեղեցու կարկառուն դեմքերից և հայ հին գրականության լավագույն արձակագիրներից մեկի՝ Եղիշե վարդապետի վկայության վրա²: Իհարկե, այսպի-

սի մի ուսումնասիրություն չի կարող հավակնել առարկայի սպառիչ հետազոտության: Իմ նպատակն է պարզապես հետազոտողների ուշադրությունը հրավիրել Եղիշեի աստվածաբանության մի քանի առնձնահատկությունների վրա, որ կարող է հիմք հանդիսանալ հետագա ուսումնասիրության համար: Այս առիթով պետք է նշել, որ թեև հայկական եկեղեցու աստվածաբանությունը և հոգևոր գիտությունը ունեն խորություն և ինքնատիպություն, սակայն դրանք սովորաբար չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը, որը սահմանափակվել է հիմնականում հունական և ատրական մշակույթի՝ որպես ողջ քրիստոնեական Արևելքի ներկայացուցիչների, ոլորտով:

¹ Խորհրդանշային աստվածաբանության ուսումնասիրության ամփոփումը տե՛ս R. Murray, *Recent Studies in Early Symbolic Theology*. *Heythrop Journal*, 6 (1965), 412-33.

² Եղիշեի մատենագիտությունը տե՛ս Հ. Անասյան, «Մատենագիտություն» (Եղիշեի վասն վարդանայ և հայոց պատերազմին, հրատ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1957, էջ 204-219): Այս մատենագիտության «Գրականություն» բաժինն ընդգրկում է Եղիշեի բոլոր երկերը, սակայն հրատարակությունների և թարգմանությունների բաժնում սահմանափակվում է Եղիշեի «Պատմությանը»: Հմտ. նաև մի շարք հետազոտություններ, որոնք նշված չեն այդ մատենագիտության մեջ. Բ. Համբլյան, «Արտաշատի ժողովքը և անոր մասնակցող եպիսկոպոսները», *Բազմավեպ*, 109 (1951), էջ 256-62, 110 (1952), էջ 4-10. **Ռույնի**՝ «Հայ եպիսկոպոսներու ինքնագլուխ ձեռնատվության մասին նկատողություն մը», *Բազմավեպ*, 110 (1952), էջ

149-152. **Մովսեսյան**, «Հայագիտական դիստոլություններ. Եղիշե», *Հասկ*, 35 (1966), էջ 277-78. **Ն. Ալիևյան**, **Պ. Տեր-Պողոսյան**, «Մատենագրական հետազոտություններ. Արրահամ Զենակացի Խոստովանող եպիսկոպոս Բզնունցաց», *Հանդես Ամսօրյա*, 84 (1970), էջ 386-404. **Վ. Կ. Չալոյան**, «Հայոց փիլիսոփայության պատմություն», Երևան, 1975, էջ 85-88. **R. W. Thomson**, «The Maccabees in Early Armenian Historiography», *Journal of Theological Studies*, n s. 26 (1975) pp. 335-37, 341. **Ե. Տեր-Մինասյան**, «Եղիշե», *Հայ մշակույթի նշանավոր գործիչներ*, 5-18-րդ դարեր, Երևան, 1976, էջ 56-69. **Լ. Տեր-Պետրոսյան**, Արրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը (Բնագրագիտական հետազոտություն), Երևան, 1976, էջ 59-60:

Եղիշեն, որը պատմիչ էր և ներքողագիր, մեկնիչ և աստվածաբան, իր հոշակը ձեռք է սեղել շնորհիվ «Վարդանի և հայոց պատերազմի մասին»³ երկի, որը նրա գլուխգործոցն է համարվում: Նրա, որպես հմուտ աստվածաբանի, արտեսությունն ամբողջովին բացահայտվել է այս գործում, քանի որ այն ոչ միայն պատմություն է, այլև պատմության աստվածաբանություն:

Այս աստվածաբանության մեջ կենտրոնական դիրք է գրավում Եկեղեցու էության պարզաբանումը, և Եղիշեի երկի հենց այս կողմին է նվիրված ներկա աշխատությունը: Պետք է ընդունել, որ նրա եկեղեցաբանությունն ավելի խորն է, քան վաղ հայկական եկեղեցու հարցերը քննող որե-վէ այդ հայ մատենագրիներ:

Սույն հոդվածի հիմնական աղբյուրը Եղիշեի պատմական երկն է, քանի որ այն շատ հարուստ եկեղեցաբանական տեղեկություններ է պարունակում: Բացի այդ

մենք փորձել ենք լրացնել այդ տեղեկությունները Եղիշեի մյուս երկերի՝ ճատերի, ներքողների և մեկնությունների ընձեռած նյութերով:

Ես այն համոզմունքն ունեմ, որ Եղիշեի ժողովածուի՝ իր հիմնական բաղադրամասերով նույն հեղինակին պատկանելու հանգամանքը լուրջ տարակուսանքներ չի կարող առաջացնել: Նույնը կարելի է ասել նրա գրական գործունեության ժամանակի մասին. մենք կարող ենք վստահորեն պնդել, որ այն ծավալվել էր 5-րդ դարի երկրորդ կեսին՝

Վարդանանց՝ Վարդանի և նրա կողմնակիցների, պայքարը, Եղիշեի պատկերացմամբ, պայքար է հաճում Եկեղեցու փառքի և ազատության պահպանման: Ըստ հեղինակի, Եկեղեցու պատկերն ու իրավիճակը ոչ միայն այս կամ այն պատմական իրադարձության դրոշմատեսան են հանդիսանում, այլև ա՛ն անկյունաքարն են կամ առանցքը, որ մեզ հնարավորություն է տալիս ընդհանրացնող հայացքով համաձայնեցնելու միմյանց հետ փրկագործական իրողությունների տարբեր կողմերը և Շրանց ներքին կապերը: Այստեղ պետք է շնորհակալ այն հանգամանքը, որ հայերի տեսանկյունից Վարդանանց պատերազմը կրոնական պատերազմ չէր բառին դասանում իմաստով, աչի՛նքն մի պատերազմ, որ մղում են կրոնական դավանանք հարկադրելու նպատակով, ինչ-

³ Հրատարակությունները և թարգմանությունները տե՛ս Աճապան «Մատենագիտություն»։ Եղիշեի երկերի ժողովածուն երկիցս հրատարակվել է Վենետիկում՝ «Եղիշե Վարդապետի Մատենագրությունը» (1838, 1859)։ Ես վկայակոչում եմ երկրորդ հրատարակությունը։ Մի մեկնողական բնույթի աշխատություն, որ չէր ներգրավվել նշված ժողովածուի մեջ, ավելի ուշ հրատարակել են, թարգմանությամբ հանդերձ, Ն. Ակիմյանը և Ս. Կոչյանը՝ Հարցմունք և պատասխանիք ի Գիրք ծննդոց Եղիշե Վարդապետի արարեալ — Ellisée Vardapet, Questionset Réponses sur la Genèse. PO, XX, fasc. 1 (Վիեննա, 1924)։ Եղիշեի «Արարածոց» մեկնությունը, որից հատվածներ են պահպանվել, և որ հիշատակվում է ուշ հեղինակների կողմից, դուռնա չի հայտնաբերվել. տե՛ս Ն. Ակիմյան, «Եղիշե վարդապետ Կողբացի, Կյանքն և գրական գործունեությունը», Հանդես Ամսօրյա, 65 (1951), էջ 1—3։ Գոյություն ունի այս հարցին վերաբերող մի չհրատարակված ուսումնասիրություն՝ Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնություն» աշխատությունը (Երևան, 1945), որ հիշատակվում է Ս. Արևշատյանի մոտ՝ «Պատմիչի երկերի հայերեն թարգմանության ժամանակը», Բանբեր Մատենադարանի 10 (1971), էջ 12, ծան. 10։ Մարդու հոգուն նվիրված մի փիլիսոփայական-աստվածաբանական աշխատության ծավալուն հատվածներ են պահպանվել 981 թ. մի ձեռագրում (Երևանի Մատենադարանի № 2679, երբեմնի Էջմիածնի՝ № 202. հմմտ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, 1, Երևան, 1965, էջ 853)։ Այս հատվածները մտել են Վենետիկյան ժողովածուի մեջ (էջ 369—76) Վենետիկի Միխայելյան միաբանության № 209 ձեռագրից, որն արտազրկված է Էջմիածնի ձեռագրից։

⁴ Ամբողջ ժողովածուին հատուկ են պնդված անհատական ոճական առանձնահատկություններ և մտքեր, որ դժվար կլինեին այլ կերպ բացատրել դրանք։ Սա, իհարկե ընդհանուր դիտողություն է, և այն կարող է չտարածվել Եղիշեի ժողովածուի որևէ առանձին երկի վրա։ Ինչ վերաբերում է նրա մատենագրական ժառանգության թվագրմանը, այս հարցի շուրջը շատ է գրվել։ Դարիս ստաջին տասնամյակներում որոշ քննադատներ Եղիշեի գործը տեղադրում էին ավելի ուշ՝ 6-րդ կամ 7-րդ դարերում, համարելով, որ այն կախում ունի Ղազար Փարպեցուց։ Սակայն բնագրերի ավելի մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանրապես, Եղիշեն փաստերի ավելի խոր իմացություն է ցուցաբերում, և նրա հաղորդած տեղեկություններն ավելի լավ են համապատասխանում 440—470-ական թվականների Հայաստանի քաղաքական և եկեղեցական իրավիճակին. տե՛ս մասնատիրապետ Ե. Տեր-Մինասյանի՝ Եղիշեի Վարդանանց պատմության աշխարհաբար թարգմանության ներածությունը (Երևան, 1946), էջ 14—92, և Բ. Համելյանի վերը վկայակոչված երկու հոդվածները։ Այս հեղինակների առաջ քաշած փաստարկներին կարելի էր ավելացնել և ուրիշներ։

պես դա անում էին պարսիկները: Հայերը կուլում էին լոկ իրենց կրոնական անկախությունը և ազգային ինքնությունը՝ կալվածական կայսրության սպանալիքից պաշտպանելու համար: Հայերի պաշարի՝ պարսիկներին ցույց տված նրանց դիմադրության տրամաբանական արդյունքը կուլի դաշտում նահատակվելն էր: Այս առումով շատ կարևոր է «Պատմության» 5-րդ գլխի վերջը. Եկեղեցին ի հայտ է գալիս այստեղ իր բուն դերում, որպես Եղիշեի կողմից պատմական իրադարձությունը քրիստոնեական իմաստով ընկալելու կենտրոն: Եղիշեն նկարագրում է պատերազմի նախօրեի վերջնական պատրաստությունները: Իրադարձությունները տեղի են ունենում հոգևոր վերելքի մթնոլորտում: Հայկական զորքի հրամանատարի՝ Վարդանի, և ապստամբության ոգին մարմնավորող Ղևոնդ երեցի ճաներից հետո, «սեղան կանգնեցնելով, ամենասուրբ խորհուրդը կատարեցին, պատրաստեցին նաև ավազան, և եթե զորքի բազմության մեջ չմկրտված մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին. և առավոտյան սուրբ հաղորդություն ընդունեցին և այնպես լուսազգեստ դարձան, ինչպես տերունական մեծ սուրբ զատիկն»⁵: Գլուխն ավարտվում է մի վեհասպան՝ օրհնաբանությամբ. «Եվ զորքի ամբողջ բազմությունը մեծ զվարճությամբ և սաստիկ ուրախությամբ աղաղակեցին և սասցին. «Թո՛ղ մեր մահը արդարների մահվան հետ հավասարվի և մեր արյան թափվելը՝ սուրբ մարտիրոսների արյան հետ. թո՛ղ Աստծուն հաճելի լինի մեր կամավոր զոհաբերությունը և իր եկեղեցին թող հեթանոսների ձեռքը չըմատնի»⁶:

Այս խոսքերը սերմ են և հակիրճ, սակայն հենց նրանք են կազմում Եղիշեի պատմության կորիզը: Այն ամբողջությամբ վերցրած ոչ այլ ինչ է, եթե ոչ նույն՝ Եկեղեցու պաշտպանության հիմնական գաղափարի զարգացումը: Վերջինս ամեն անգամ նակատագրական պահերին վերականգնում է Եղիշեի գրչի տակ: Այսպես, օրհնակ, երբ հայ նախարարներին, որոնք միևնույն պատերազմի բռնկվելը գնա-

ցել էին պարսկական արքունիք, ձերբակալում են և բանտարկում, նրանք աղաղակում են, հիշեցով Աբրահամի զոհաբերությունը. «ընդունի՛ր, Տե՛ր, մեր այս կամավոր նվերը և մի՛ թույլ տա, որ այս անօրեն իշխանը քո եկեղեցին ծաղրածանակի ենթարկի»⁷: Նմանապես, երբ պարսկական մի զորամաս, դավաճան Վասակի ընկերակցությամբ, շրջապատել էր ամրոցում քահանաների հետ միասին ապաստանած հայոց մի գունդ, ամրոցի ներսում գտնվող մարդիկ աղաղակեցին և սասցին. «Ընդունի՛ր, Տե՛ր, մեր այս կամավոր նվերը և միասին և սուսքնացած է եկեղեցու սուրբ ուխտը, մեզ արժանի արեցիր այս երկնավոր կոչումին: Թո՛ղ մեր մահը հավասարվի քաջ նահատակների մահվանը... և տիրոջը հաճելի լինեն իր եկեղեցիները՝ այն բազմաթիվ կամավոր զոհերով, որոնք բարձրանում են այս սուրբ սեղանի վրա»⁸: Եվ պատմիչը շարունակում է. «Այս ասելով՝ տեղնուտեղը նահատակվեցին երկու հարյուր տասներեք հոգին»⁹:

Եղիշեն՝ նկարագրելով այն սահմանափակումները, որոնք պարսից արքա Հազկերտ երկրորդը պարտադրում է հայերին, և այն տառապանքները, որոնց ենթարկում է նրանց, այս գործողությունների նպատակն արտահայտում է մի պարզ նախադասությամբ. «որպեսզի եկեղեցու փառքը նսեմացնեն»¹⁰: Այնչին, հայերը հանդուրժում են ամեն տեսակի նյութական և տրնտեսական ճնշում, քանի դեռ «ոչ ոք հայտնի կերպով ձեռք չէր տվել եկեղեցուն»¹¹: Եկեղեցու այդ կենտրոնական նշանակությանը միջոված հատվածներ Եղիշեի մոտ շատ կան¹²:

Իսկ այժմ հիմնական գծերով քննենք, թե ինչպես է Եղիշեն պատկերացնում Եկեղեցու իրականությունը, որ փաստորեն նրա աստվածաբանական մտքի և հատկապես՝ պատմության աստվածաբանության կենտրոնն է հանդիսանում:

⁵ Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1958, էջ 104 (114): Հետագայի ծանոթագրություններում վկայակոչվում է սույն թարգմանությունը: Փակագծերում նշվում է Ե. Տեր-Մինասյանի քննական հրատարակության (Երևան 1957) համապատասխան էջը:

⁶ Նույն տեղում:

⁷ II, 48 (49):

⁸ VI, 112 (123):

⁹ Նույն տեղում:

¹⁰ II, 27 (23),

¹¹ Նույն տեղում:

¹² Բացի այն հատվածներից, որոնք մեջբերվելու են հոդվածում, տե՛ս հետևյալները. հեղինակի խոսքն ուղղված Դավիթ Մամիկոնյան երեցին, էջ 10 (5), I, 17 (10), II, 49 (50), III, 65, 72, 73 (70, 77, 79), V, 109 (121), VI, 115, 119 (127, 132), VII, 138, 167, (154, 188):

Եկեղեցու հոգևոր ընկալումը

Առաջին հերթին պետք է հատկապես ընդգծել այն հանգամանքը, որ Եկեղեցու հոգևոր Էությունը սերտորեն կապված է եկեղեցու՝ նյութական կառույցի հետ: Այնքան սերտ է այդ երկուսի միջև եղած կապը, որ նրանք հաճախ նույն ստորագրալի ենթական են: Օրինակ. «Պատրաստ ենք հալածվելու և մեռնելու և ամեն տեսակ նեղությունն ու չարչարանք կրելու այն սուրբ եկեղեցիների համար, որ ավանդեցին մեզ մեր նախահայրերը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստյան գործությամբ, որով նորից ծնվեցինք... Որովհետև մեզ ճանաչում ենք ... մայր՝ առաքելական կաթողիկե եկեղեցին»¹³:

Այս խոսքերն այնքան ավելի կարևոր են, որքանով որ այս եկեղեցիները նախնիներից ժառանգած լինելու պատկերացումը ստիպում է այս մարդկանց խորանալու հավատի հոգևոր աշխարհի և հոգևոր Եկեղեցին ստեղծող քրիստոնեական շնորհի գիտակցության մեջ:

Ծառ բուսականալից է այդ իմաստով հետևյալ հատվածը, ուր հայ նախարարներն իրենց հավատի շատագույությունն են անում Հազկերտի առաջ. «Մի՛, թագավոր, այլևս մի՛ ասի մեզ այդ բանը, որով հետև եկեղեցին մարդու շինածը չէ և ոչ էլ արեգակի տվածը, որի մասին դու թյուրիմացաբար կարծում ես, թե աստված է... եկեղեցիները ոչ թագավորի պարզև են, ոչ նարտարարվեստների գործ, ոչ իմաստունների գյուտ, ոչ զինվորների քաջության ավար, և ոչ էլ դևերի ստապատիր խաբեություն, այլ ինչ էլ որ ասելու լինես երկնավորներիցս, վեհ բաներից թե վատթարներից, ոչ մի տեղ նրանցից ամենևին եկեղեցի չի ստեղծվի: Այլ մեծ Աստծու շնորհն է այն, որ տվել է ոչ թե մարդկանցից որևէ մեկին, այլ բոլոր բանական ազգերին, որոնց վիճակված է այս արեգակի ներքո բնակվել: Նրա հիմքը դրված է հաստատուն վեմի վրա. ոչ ներքևիները կարող են այն շարժել և ոչ վերևիները սասանեցնել: Իսկ ինչ որ երկինքն ու երկիրը չեն կարող խախտել, թող մարդկանցից ոչ ոք չխորխուս հաղթել նրան»¹⁴:

Սա Եկեղեցու աստվածալին, երկնալին, կամ մասնագիտական տերմինով ասած, «գերբնական» էության մի հոշակապ նկարագրությունն է: Սակայն անդրադառնանք մեր առջև դրված խնդրին: «Եկեղեցի»

հասկացության կիրառության մեջ անցումը եզակիից հոգևակի թվին և կրկին եզակիին, որ հեղինակի կողմից առարկայի երկակի ընկալման լեզվական արտահայտությունն է, մատնաշում է սերտ կապը Եկեղեցու՝ որպես հոգևոր էության» և եկեղեցիների՝ որպես նյութական կառույցների միջև: Իհարկե, «եկեղեցիներ» հոգևակին, որպես այդպիսին, կարող է նշանակել և տեղական համայնքները: Եվ, իմ կարծիքով, այս իմաստը պետք չէ բացառել: Կարելի է նույնիսկ ասել, որ բառի հոգևակի կիրառության մեջ անկա է որոշ չափով գիտակցված երկիմաստություն: Առավել ևս, Եղիշեի «Պատմության» ամբողջ շարադրանքից և եկեղեցու կառույցների բազմաթիվ անմիջական հիշատակություններից ելնելով՝ պետք է ընդունել, որ դրանք հիմնականում վերաբերում են վերջիններիս: Միայն կիներ կարծել որ «եկեղեցի» բառի եզակի և հոգևակի թվով՝ հոգևոր և նյութական իմաստով, կիրառությունը, գրական ոճի հարց է: Ընդհակառակը, մենք անընդհատ զարգացում ենք դիտում, ավելի խորը և ներքին էությունը մոտենալու իմաստով: Կարելի է ասել, որ այդ երկուսի հարաբերությունը նման է խորհրդանշանի, կամ արտաքին և շոշափելի նշանի հարաբերությանը իր համապատասխան անտեսանելի և հոգևոր էությունը: Այս ենթադրությունը մենք կարող ենք ամրապնդել մեջբերված հատվածի մանրագնին վերլուծությամբ: Փաստորեն, առաջին նախադասությունը, որ նման է դուրսի հաստատման, դիտում է Եկեղեցին հենց որպես հոգևոր էություն: Այս արքիմատիկ հարաբերությունն արևուն հետևում անաբանվում է նյութական եկեղեցիների որոշակի պատկերով: Հատվածի շոտոնակության մեջ նորից հատնվում է հոգևոր Եկեղեցու գաղափարը, որն այժմ ավելի հասկանալի է իր տիեզերական լույսով և հզորությամբ հանդերձ, քանի որ նրա խոտհողանիչն են հանդիսանում բազմաթիվ նյութական կառույցներն, ինչպես նաև տեղական համայնքները: Աստուսանկյունից մեծառուն հետաքրքրություն է ներկայացնում եզակի թվով կիրառված «եկեղեցի» բառի երկիմաստությունը, որ հատվածի միջին մասում տատանվում է նյութական և հոգևորի միջև, և նրա հետագա անցումը դեպի գուտ հոգևոր բնագավառը¹⁵:

¹⁵ Ահա մի այլ կարևոր անցում «եկեղեցի» բառի կիրառության մեջ հոգևակիից եզակի թվին, «նյութական կառույց» նշանակությունից դեպի «հոգևոր համայնք» նշանակությունը. «Պատրաստ ենք

¹³ III, 63 (67):
¹⁴ II, 53, (46):

Եկեղեցու նյութական ընկալումը

Եկեղեցու կառույցը այն արտոնյալ վայրն է, որտեղ իրենց լիարժեք արտահայտությունն են գտնում քրիստոնեական խորհուրդները և քրիստոնեական կյանքը: Այդ են մատնանշում այն բոլոր բազմաթիվ հատվածները, որոնք վերաբերում են եկեղեցիներին, նրանց վեճ փայլին ու շուքին, աշխարհիկ իշխանությունից նրանց ազատ լինելուն, քրիստոնյաներին միավորելու և նրանց միջև իսկական, ողջերին ու հանգուցյալներին միավորող միաբանությունն մատուցելու դերին: Սկսած արքեպիսկոպոսի ուղղորդելի վախճանը, Եղիշեն նշում է. «Նրա անունը չհիշվեց արքեպիսկոպոսի, և նա չհիշատակվեց եկեղեցում սուրբ սեղանի առաջ»¹⁶: Այս խոսքերը Եղիշեի տեսանկյունից շատ լուրջ իմաստ են պարունակում: Եկեղեցում, սուրբ սեղանի առաջ չհիշվել, նշանակում է գրկվել հավերժական երանությունից: Եթե մարդ հոգևոր միաբանության մեջ է գտնվում Եկեղեցու, հավատացյալների համայնքի հետ, դա նրա՝ արքեպիսկոպոսի միաբանության նշանն է:

Եկեղեցու շինության դերի և կարևորության գաղափարը ավելի խորն է լուսաբանված երկու հատվածներում, որոնցում կառույցի խորհրդանշական գործությունը նվիրական իմաստ է ստանում: Երրորդ գլխում բերվում է պարսիկ մի մոզայեի մանր, որի մեջ, անկասկած, արտահայտվել են և Եղիշեի սեփական մտքերը. «...թեպետ փակեց պարսից թագավորը ու կնքեց եկեղեցիների դռներն ամբողջ Պարսից աշխարհում, բայց նրանք ամեն տուն եկեղեցի դարձրին, և ամեն տեղ իրենց

պաշտամունքն էին կատարում, և ամեն մեկն իր անձը վկայարան [martyrium—Պ. Լ. Ջ.] էր համարում, և մարդկեղեն շինվածքն ավելի լավ էին համարում, քան հողեղեցին»¹⁷: Ավելի նշանակալից է մյուս հատվածը: Այս անգամ խոսքը պատկանում է իրեն՝ հեղինակին. «Նրանց մորմունքներն ու երգերը սաղմունքներն էին, իսկ կառույցը ուրախությունը՝ սուրբ գրքերի ընթերցումը: Ամեն մարդ ինքն իր մեջ եկեղեցի էր՝ և նույն ինքը քահանա. յուրաքանչյուր մարմին սուրբ սեղան էր, և նրանց հոգիները՝ ընդունելի զոհաբերություն»¹⁸:

Այս հատվածները շատ կարևոր են, քանի որ նրանցում ամենից բյուրեղացած կերպով է արտահայտվել եկեղեցու՝ որպես կառույցի և Եկեղեցու՝ որպես հոգևոր էության հարաբերությունը: Փաստորեն առաջին հատվածի վերջին խոսքերը ակնհայտ են դարձնում այն հանգամանքը, որ եկեղեցու իսկական էությունը կարելի է գտնել միայն հոգևոր բնագավառում: Դա այն իսկական էությունն է, որ քրիստոնեական իմաստ և նվիրական արժեք է հաղորդում նյութական կառույցին: Այս ներքին իրականությունը, որը ձև է տալիս շրջափակի իրականությանը, ինչպես պարզվում է մասնավորապես երկրորդ հատվածից, յուրաքանչյուր հավատացյալի գիտակցված սրբազան զոհն է, որի շնորհիվ նա իր տեղն է գտնում Քրիստոսի քահանայության մեջ:

Ամփոփելով մենք կարող ենք ասել, որ յուրաքանչյուր հավատացյալի ներսում գտնվող հոգևոր տաճարը իսկապես կառուցվում է շնորհիվ իր զոհաբերության և նվիրատվության, որ նա կատարում է որպես այդ զոհերն ու նվերները մատուցող քահանա: Այս ներքին իմաստի նյութական խորհրդանշան են հանդիսանում քրիստոնեական համայնքի եկեղեցիների շինվածքները:

Եկեղեցին և հասարակությունը

Մենք քննեցինք Եղիշեի եկեղեցու ընկալումը ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր իմաստով. սակայն մենք դիտել ենք այս հոգևոր արժեքի միայն զոհաբերական և քահանայական արտահայտությունները, առանց անդրադառնալու Եկեղեցուն հասարակության և համայնքի առումով: Այդպիսի մի ավելի լայն պատկեր

հալածվելու և մեռնելու և ամեն տեսակ նեղություն ու չարչարանք կրելու՝ այն սուրբ եկեղեցիների համար, որ ալանդեցին մեզ մեր նախնայերը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան գործյամբ, որով նորից ծնվեցինք...» (III, 63): Բնագրում երկու հարաբերական դերանուններն էլ պետք է հասկանալ որպես հոգնակի, և նրանց լրիվ զուգահեռությունը, ցույց է տալիս, որ նրանք երկուսն էլ վերաբերում են «սուրբ եկեղեցիներին», եթե բացտեսնք երկրորդ դերանվան՝ «Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան գործյամբ» արտահայտության նետ կապի հնարավորությունը. «Պատրաստ ենք ի հալածանա... վաճ սուրբ եկեղեցուց, գոր ալանդեցին հարքն մեր առաջին գործյամբ գալլստեան Տեռան մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերստին ծնար ի մի լոյս հաւատոյն մկրտութեամբ ի Քրիստոս Յիսուս» (էջ 67): Տե՛ս նաև ծան. 13, 19:

¹⁶ VI, 126 (140):

¹⁷ III, 57—58 (60—61):

¹⁸ VI, 113 (125). Բնմտ. նաև Ի չարչարանք Տեռան, Եղիշեի մատնագրությունը, էջ 245:

ստանալու համար մենք այժմ կրնանք մի շարք նոր թեմաներ, որոնք բացահայտում են եկեղեցու մի քանի նոր իմաստները կամ գործառնությունները:

Մայրություն

Եկեղեցին հանդես է գալիս մոր դերում. Եղիշեն հիմնավոր կերպով զարգացնում է այս թեման: Նրա «Պատմության» երրորդ գլխում բազմությունն աղաղակում է. «Պատրիարս եկեղեցիում... սուրբ եկեղեցիների համար, որով նորից ծնվեցինք մի հավատի հուսով, մկրտվելով Հիսուս Քրիստոսի անունով... Որովհետև մեզ հայր ենք ճանաչում սուրբ ավետարանը և մայր՝ սուրբեղական կաթողիկե եկեղեցին. թող ոչ ոք իբրև չար անջրպետ մեզ ընկնելով՝ մեզ սրանից չբաժանի»¹⁹:

Այս գաղափարն ավելի ընդգծված է 7-րդ գլխում, որտեղ խոսքը եկեղեցու միասնության մասին է. «Քանի որ մեր մայր եկեղեցին մեկ է, որ երկնեց մեզ, և մեկ է մեր հայր Սուրբ Հոգին, որ ծնեց մեզ, ինչո՞ւ պետք է մի հոր և մի մոր գավակները երկպառակտված լինեն և ոչ թե միաբան»²⁰:

Այս ծագումնաբանության տարբեր արտահայտությունները՝ Սուրբ Հոգուց ծնված լինելը, Ավետարանի ծննդական գորությունը, մկրտության ավագանի նվիրական ազդեցությունը, որդեգրության շնորհը, և եկեղեցուն պատկանելու համար Քրիստոսի հետ միավորումը, այս բոլորը ի մի են բերված մի ընդարձակ պատկերում, երբ Եղիշեն նկարագրում է Վասակի ապրտամբությունը: Այս փաստը չպետք է զարմանալի թվա մեզ: Եղիշեն այնքան է ազդված դավաճանությունից, որ Վասակի կերպարն իր ամբողջովին բացասական էությունը «Պատմության» մեջ նույնիսկ ավելի կարևոր տեղ է գրավում, քան հերոս Վարդանին. և Եղիշեի լավագույն էջերի թվին են պատկանում այն հատվածները, որոնցում նա ողբում է դավաճանի ողբերգական ճակատագիրը: Ահա Վասակի ապատամբության նկարագրությունը. «...նա իր կամքով է իր անձը ջուկել և անջատել սուրբ եկեղեցուց, հեռացել և օտարացել Քրիստոսի սիրուց: Որովհետև նա մոռացության էր տվել Աստծու Որդու գալուստը և չհիշեց Սուրբ Ավետարանի քարոզությունը, ոչ սպասնալիքներից և ոչ էլ ավետիսով մխիթարվեց: Ուրացավ այն ավա-

զանը, որ հղացավ նրան, և չհիշեց ընկալույ Սուրբ Հոգին, որ ծնեց նրան: Անարգեց այն պատկան մարմինը, որով սրբվեց, և ոտնահարեց այն կենդանի արյունը, որով մեղքերի քալություն ստացավ: Զնջեց որդեգրության գիրը և իր ձեռքով խորտակվեց մատանու հաստատուն կնիքը, դուրս եկավ երանելիների թվից և շատերին ապատամբեցրեց իր հետ»²¹:

Եկեղեցու այս մայրական կերպարն, այնուամենայնիվ, նրա ծնողական դերի արտահայտություններից միայն մեկն է, Եկեղեցին, որ կյանք է տալիս նոր գավակների, հենց այս փաստի շնորհիվ, սերում է, իր անդամներով և իր ներքին էությունը հանդերձ, նույն աստվածային գորությունից: Այսպիսով, Եկեղեցու մայրությունը էսպես առնչակցվում է նրա զավակ լինելու հանգամանքին: Այս աստվածային գորության միջնորդներն են (այն գորությունից, որի շնորհիվ Եկեղեցին միևնույն ժամանակ և՛ մայր է, և՛ դուստր) «հարք հոգեկիրք», այսինքն Առաքյալները, Մարգարեները, ճշմարիտ հովիվները, որոնք մարդկանց արտերում սերմանում են Աստծո քանը և հավատքը²²: Սրանում է Եկեղեցու արտառոց բնությունը, որ միևնույն գործողության շնորհիվ նա դառնում է մայր և դուստր, ծնող և ծնված:

Ուխտ

Եկեղեցու էությունը բնութագրելու համար Եղիշեի օգտագործած մյուս հիմնական պատկերն արտահայտվում է «ուխտ» բառով, որն իրականում շատ բարդ տերմին է, քանի որ օժտված է տարբեր իմաստներով: Իր հիմնական առումով «ուխտ» բառ Հայկազյան բառարանի, նշանակում է «խոստումն հառատումն, խօսք հառատարիմ իբր երդմամբ, չափ, առաջադրութիւն, դաշն»²³: Անկասկած, Եղիշեն կիրառում է այս բառն իր առաջնային իմաստով, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում. «...նրան էլ [Վահանին—Պ. Լ. Զ.] դեսպան ողարկեցին Հոների երկիրը... նրանց հետ բանակցելու և դաշն

¹⁹ III, 63 (67):
²⁰ VI, 152 (170):

²¹ VI, 83—84 (91). հմմտ. նույնպես Յերեմուն Տեանի Աշակերտայ, «Եղիշեի Մատենագրությունը», էջ 312, Ի Քարոզութիւն Առաքելոց, նույն տեղում, էջ 354:
²² Ի շարչարանն Տեանի, էջ 241. հմմտ. նույնպես Ի Քարոզութիւն Առաքելոց, նույն տեղում:
²³ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վեհափյ, 1937:

«ուխտ» կնքելու, որ հաստատ մնան այդ միաբանության վրա»²⁴:

Հետագայում, դասական և ետդասական գրաբարում, «ուխտ» բառը ստանում է երկրորդային՝ «կոտր» նշանակությունը: Գծվար չէ պատկերացնել, ինչպես է առաջ եկել այդ իմաստը: Փաստորեն, «ուխտ»-ը, բառիս վերը նշված իրավական կամ բարոյական տեսանկյունից, հոգևորականության վիճակի համար էական երևույթ է. արանով էլ կարելի է բացատրել նրա կիրառության անցումը բարոյաբարության հանրապետական նշանակությունից դեպի հասարակական-եկեղեցական ոլորտին պատկանող նրա լրացուցիչ իմաստը: Վերջինս էլ հենց շատ հաճախ է կիրառվել Եղիշեի կողմից²⁵:

«Ուխտ եկեղեցու» արտահայտությունը Եղիշեի մոտ համարյա տեխնիկական տերմին է, որ նշանակում է «հոգևորականություն»: Առավել կամ նվազ հաճախակաությամբ կարելի է հանդիպել «ուխտ»-ով կազմված և նույն իմաստն արտահայտող բառակապակցությունների, ինչպես, օրինակ, «ուխտ քահանայութեան»²⁶:

Նման արտահայտություններ սույա են Ագաթանգեղոսի մոտ, ինչպես, օրինակ, «ուխտ քահանայութեան սրբոյ եկեղեցու» և «ուխտ սրբոյ եկեղեցու քահանայութեան», յուրաքանչյուր՝ մեկական անգամ²⁷: Այստեղ կարևոր է այս արտահայտությունների բացակայությունը Սբ. Գրիգոր Լուսավորչի Վարքի վաղ խմբագրության մեջ (որ թարգմանություն էր հունարենից, և մեզ է հասել միայն հայերենից թարգմանված հունարեն տարբերակով), այն մասերում, որոնց համապատասխանն սույա է պահպանված հայերեն խմբագրության մեջ²⁸: Մենք կարող ենք եզրակացնել, որ խնդրո առարկա արտահայտությունները ներմուծվել են, և բացառված չէ, որ Եղիշեի ազդեցությամբ, 5-րդ դարի վերջին, Ագաթանգեղոսի վերջնական խմբագրման ընթացքում²⁹:

«Ուխտ եկեղեցու» և «ուխտի մանկունք (եկեղեցու)» բնույթի արտահայտությունների «հոգևորականություն» նշանակությանը հաճախ կարելի է հանդիպել դասական շրջանում թարգմանված կանոնների ժողովածուներում, ինչպես նաև ավելի ուշ ծիսական և կանոնական բնագրերում³⁰: «Ուխտաւոր» և «ուխտական» ածանցյալ տերմինները նույնպես հաճախակի են հանդիպում նույն կանոնական գրականության մեջ «հոգևորականություն», ինչպես նաև «վանականներ» կամ «կուսակրոններ» նշանակությամբ: Այս ածանցավոր ձևերը չկան Եղիշեի մոտ³¹: Այնուամենայնիվ, նրանց իմաստային կապը վերը նշված արտահայտությունների հետ ակնհայտ է: Վաղ գրականության մեջ «ուխտաւոր» բառը, բացի կանոնական բնագրերից, կարելի է գտնել Եզնիկի մոտ «վանական» կամ «կուսակրոն» նշանակությամբ³², ինչպես նաև Ափրահատի ճանաչի (ճառ 8) թարգմանության մեջ, որ հրատարակված է Հակոբ Մծբնացու անվան տակ³³, և Սբ. Բարսեղի դեռևս չհրատարակված³⁴ վանական կանոններում (Գիրք հարցողաց կամ հարցմանց)³⁵: Եղիշեից առաջ մենք գտնում ենք «ուխտական» բառը Կյուրեղ Երուսաղեմացու մոտ, հունարեն *ἐκκλησιαστικός* բառի դիմաց³⁶: Այնուհանդերձ, որքան որ մեր գիտելիքները թույլ են տալիս մեզ պնդելու, Եղիշեին, հավանաբար, առաջին հեղինակն է, կանո-

²⁴ III, 72 (78):
²⁵ Օրինակ՝ II, 27 (23), III, 56, 58, 59 (59, 62, 63), IV, 85 (92):
²⁶ III, 52 (54):
²⁷ Հմմտ. Հայկական համալսարան, 4, Ագաթանգեղոս (1909), Երևան, 1973, էջ 355,
²⁸ Հմմտ. G. Garitte. Documents pour l'étude du livre d'Agathange, ST, CXXVII (Vatican, 1946, հ. 1. քննարկը, §148, p. 92)
²⁹ Հմմտ. P. Ananian. La data e le circostanze della consecrazione di S. Gregorio Illuminatore. — Le Muséon, 74 (1961), pp. 317—24.

³⁰ Տե՛ս Կանոնագիրք հայոց, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1971:
³¹ «Պատմության» համար մենք ստուգել ենք ըստ՝ Հայկական համալսարանի, 5, Եղիշեի վաստի վարդապետի և Հայոց պատերազմին, (Երևան, 1957), 1972:
³² Հմմտ. Հայկական համալսարան, 1, Եզնիկ, Եղծ աղանդոց (Վեներտիկ, 1826), Երևան, 1972, էջ 710:
³³ Հրատարակությունները հետևյալներն են՝ Սրբոյ իօրն մերոյ Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսի ճառք. cum praefatione, notis et d'ssertatione de Accellis quae omnia nunc primum in lucem prodant (Komae, 1756). Գիրք, որ կոչի Զգօն արարեալ սրբոյ Յակոբայ... հայրապետին Մծբին քաղաքի, Կոստանդնուպոլիս, 1824:
³⁴ Գրականությունը տե՛ս Հ. Աճառյան, Հայկական մատենագիտություն, 2, Երևան, 1976, էջ 1361—63,
³⁵ Տես Նոր քաղցիրը Հայկական լեզուի:
³⁶ Երանելույն կիրոյի հայրապետի Երուսաղեմայ Կոչումն ընծայութեան, 15 (Վիեննա, 1832), էջ 309, PG XXXIII, 877: Catechesis, XV, VII,

նական գրականությունից զատ, որ օգտագործում է «ուխտ եկեղեցույ» արտահայտությունը «հոգևորականություն» իմաստով:

Այս բոլոր արտահայտությունները, և առաջին հերթին՝ «ուխտ եկեղեցույ», ինչպես նաև «ուխտի մանկունք», հուդայա-ասորական ծագում ունեն: Արդեն Աստվածաշնչում կան ադորփնակ արտահայտություններ, ինչպես՝ b^cney nabb^crit (Եզեկ. Լ, 5) «որդիք ուխտին», b^crit hakk^c-hunnāb—«ուխտ քահանայութեան» (Նեեմ. ԺԳ, 29), b^crit hallēwī—«ուխտ Ղեկայ» (Մադաք. Բ, 8): Նման արտահայտություններ հաճախ հանդիպում են վաղ ասորական միջավայրում, որ b^cney կամ b^cnat Qyāmā «ուխտի (դաշինքի) որդիներ կամ դուստրեր» սովորական բառեր են անամուսնությանը կամ կուսակրոն և ճրգնավոր կյանքին իրենց նվիրած մարդկանց համար³⁷:

Այսպիսի արտահայտություններից անցումը 5-րդ դարի հայկական կանոնական և ճգնափորությանը վերաբերող տերմինաբանությանը առաջինների բնական շարունակությունը պետք է համարել: Սակայն ասորական և հայկական ավանդությունները տարբերվում են միմյանցից: Այսպես, ասորական միջավայրում Qyāmā առաջին հերթին նշանակում է, և բացառված չէ, որ հետեսական ազդեցության շնորհիվ, իրենց անամուսնությանը նվիրած հոգևորականներին³⁸, իսկ հայերեն «ուխտ» բառի հիմնական կիրառությունը վերաբերում է Եկեղեցու քահանայապետությունը, անկախ հոգևորականների՝ անամուսնության վիճակին պատկանելուց: Մենք այս բանի պարզ վկայությունն ունենք Առաքելական կանոններում. «Կարգեցին առաքելայքն և եղին հաստատութեամբ եթէ որ ի կարգէ պաշտօնէից և յուխտէ եկեղեցույ, և կամեացի կուսան լինել բարոյ գործոյ ցանկալ»³⁹:

«Ուխտ» բառի այս կիրառություններից բացի, որոնք հատկանշական են ոչ միայն Եղիշեի համար, մենք մի քանի անգամ

հանդիպում ենք նրա մոտ մի երրորդ կարևոր իմաստի, որը ստացվել է բառիս հասարակական-եկեղեցական լրացուցիչ իմաստի լայնացման ճանապարհով: Այս տեսանկյունից Եկեղեցին կամ քրիստոնեական համայնքն ամբողջությամբ ուխտ է: Իհարկե, ճիշտ է, որ «ուխտ եկեղեցույ» արտահայտությունը համարյա տեխնիկական տերմին է Եղիշեի մոտ, «կղեր» նշանակությամբ, ինչքան մեզ հայտնի է, այն հազվադեպ է օգտագործվում այլ կապակցությամբ: Սակայն դիտենք հետևյալ օրինակները.

1. Արտաշատում Միհրներսեսի նամակին պատասխանելու համար հավաքված եպիսկոպոսների անունները թվարկելուց հետո Եղիշեն ասում է. «Այս բոլոր եպիսկոպոսները և բազմաթիվ քորեպիսկոպոսներ և պատվական երեցներ զանազան տեղերից եկեղեցու սուրբ ուխտի հետ միասին (հանդերձ սուրբ ուխտի եկեղեցույ)»⁴⁰:

2. Հայերը, լսելով Աղվանից երկրում պարսիկների գործած անօրենությունների մասին, «արձակեցին (պատգամավորներին) ...որպեսզի... թույլ չտան իրենց եկեղեցու սուրբ ուխտին դիպչելու»⁴¹:

3. Երրորդ գլխի վերնագրում, ինչպես երևում է և երկի առաջաբանից կամ ընծայականից, Եղիշեն դիմում է Դավիթ Մամիկոնյան երեցին: Չնայած մենք վրստահ չենք, որ առաջաբանի այս մասի մեզ հասած խմբագրությունն արտահայտում է Եղիշեի բնագիրը⁴², ամենայն հավանականությամբ կարելի է ենթադրել, որ եթե ինչ-որ փոփոխություններ եղել են, նրանք պետք է վերաբերեին վերջին երեք գլուխների վերնագրերին: Այսպիսով, հավանաբար, Եղիշեի գրչին է պատկանում երրորդ գլխի վերնագիրը՝ «Միաբանութիւն ուխտին եկեղեցույ»⁴³: Այստեղից կարելի է եզրակացնել, որ «ուխտ եկեղեցույ» այստեղ նշանակում է ամբողջ Եկեղեցին կամ ավելի շուտ հայ քրիստոնյաների ողջ համայնքը, որոնք ստանձնել են իրենց հավատի պաշտպանության գործը: Այս հանգամանքն ակնհայտ է դառնում և ողջ գլխի պատմական բովանդակությունից: Հեղինակի միտքը ներկայացնենք հետևյալ հատվածով. «Այնուհետև տերը ծառայից ավելի չէր երևում, և ոչ էլ փափուկ մեծա-

³⁷ St' u R. Murray, „Recent Studies“, 424f. Idem. Symbols of Church and Kingdem. A Study in early Syriae Tradition (Cambridge, 1977), 12—17, 29f.

³⁸ St' u ծան. 37:

³⁹ Canones Apostolici, ed. H. Ghedighian, in: Fonti, Series II, fasc. XXI; Collectio Canonum Ecclesiae Armenae, I (Venice, 1941); Canones Apostolici primi, cen. 32. p. 26; Կանոնագիրք հայոց, Բ. Ա, էջ 46:

⁴⁰ II 31 (28):

⁴¹ III 66 (71):

⁴² Հմտ. Ե. Տեր-Մինասյան, Եղիշեի «Պատմության» բնական հրատարակության առաջաբանը:

⁴³ 9 (3), III 52 (54):

ցած ազատը՝ աստուայազ գեղջուկից, և ոչ էլ մեկը մյուսից ավելի պակաս քաջության մեջ: Սրեւսուն հոծար սիրուն ունեին բուրն էլ՝ տղամարդ և կին, ծնր և տղա, և Քրիստոսի անունով բոլոր միաբանվածները: Որվոհետև առ հասարակ բոլորն էլ միևնույն զենքով զհնկորվեցին և Քրիստոսի հավատի պատվիրանի միևնույն գրանր հագան, նշմարության միևնույն գոտիով ամրացրին իրենց մեջքերը, թե տղամարդիկ, և թե կանայք»⁴⁴: Այսպիսով, եթե ընդունենք, որ այս գլխի վերնագիրը պատկանում է Եղիշեին, «ուխտ եկեղեցույ» անկախված վերաբերում է ամբողջ Եկեղեցուն:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ վերը նշված բոլոր հատվածներում «ուխտ եկեղեցույ» արտահայտությունը, ամենայն հավանականությամբ, նշանակում է հավատացյալների համայնքը որպես աղայիսին: Նույն նշանակությամբ առնվազն շորս անգամ «Դատմության» մեջ Եղիշեն օգտագործում է «ուխտ քրիստոնէութեան» արտահայտությունը⁴⁵: Ավելին, առնվազն մեկ անգամ մենք գտնում ենք «ուխտ քրիստոնէից» արտահայտությունը⁴⁶: Բոլոր այս դեպքերում, և առավել վատահ դա կարող ենք պնդել III, 68 (73)-ի համար, «ուխտ» նշանակում է ոչ այնքան բարոյաիրավական գործողությունը որպես աղայիսին, այլ որևէ նվիրական խոսքի, երգման կամ դաշինքի շնորհիվ սուսչացած միաձույլ և կոտ կազմակերպություն. այլ խոսքով ասած՝ «դաշինքի մարդիկ»: «Ուխտ քրիստոնէութեան» կամ «քրիստոնէից» հենց իրենք քրիստոնյաներն են, որոնք միավորված և համախմբված են սուրբ խոսքով, իրենց օծմամբ, Տիրոջ հետ իրենց դաշինքով: Նույն իմաստով է օգտագործում Եղիշեն «ուխտ հայոց»⁴⁷ արտահայտությունը, որն ուղղակիորեն մատնանշում է իրենց կրոնին հավատարիմ հայերին, և առավելայես՝ կուլելու և մաքանելու գնով նրան հավատարմությունը պահելու նրանց պատրաստակամությունը: Վերջինիս նման է կիրառվում «ուխտ առաքինութեան» արտահայտությունը⁴⁸, որում «առաքինութեան» վերացականը հավանաբար փոխարինում է «առաքինեաց» թանձրացականին, ինչպես դա հնարավոր

է դասական հայերենում, «առաքինության համայնք» կամ «առաքինների համայնք»՝ որպես կոտ, խիստ միավորված կազմակերպություն, նշանակությամբ:

Այսպիսով, «ուխտ քրիստոնէութեան» տիպի արտահայտությունների, ինչպես և «ուխտ եկեղեցույ» արտահայտության հասարակական-եկեղեցական կիրառությունը ծագում է «ուխտ»-ից, որպես բարոյաիրավական համացություն: Իհարկե, այն յուրահատուկ պատմական հանգամանքները, որոնց պայմաններում Եղիշեն գրել է իր երկը, կարևոր են բացատրելու համար, թե ինչու է նա դիտում ողջ քրիստոնէական համայնքը որպես «ուխտ»: Այս առիթով մենք կարող ենք հիշել ասորական Չյամթ-ի գաղափարի ներքին կապը ճգնավորի կյանքում մղվող Արբազան պատերազմի հետ⁴⁹: Մեր կարծիքով, երկու գաղափարական կառուցվածքների աչպիսի համադրումը տեղին է և հնարավոր: Փաստորեն, հեղինակը տարբեր առիթներով ընդգծում է հավատացյալ հայերի «ուխտը», աչպիսեք՝ պատերազմից սուսչ նրանց հանդիսավոր խոստումը⁵⁰: Այս պատմական նախադրյալները, որ կարող էին ոգեշնչել Եղիշեին ողջ քրիստոնէական համայնքը «ուխտ» համարելու, չեն բացառում, որ նա կարող էր ուրիշ, ավելի խորը պատճառներ ունենալ այդպես ընկալելու քրիստոնէական համայնքը: Փաստորեն, հոգևորականությունը ուխտ է կազմում սուրբ խոսքի միջոցով Տիրոջը նվիրագործված լինելու շնորհիվ. նույն եղանակով քրիստոնյաները ուխտ են կազմում իրենց Մկրտության սուրբ և հանդիսավոր խոստման շնորհիվ: Հոգ չէ, որ այս հարաբերությունը արտահայտված չէ Եղիշեի մոտ պարզորոշ կերպով: Մենք բավական փաստեր ունենք աչպիսի եզրակացություն անելու համար: Մենք արդեն նշել ենք, որ նա տարբեր առիթներով ընդգծում է հավատացյալ հայերի հանդիսավոր խոստումը և աղ իսկ պատճառով նա կարող է խոսել «Հայոց ուխտ»-ի՝ որպես հավատացյալ հայերի մի կոտ կազմակերպության մասին: Այսուհետև մենք կարող ենք, հետևելով Եղիշեի եկեղեցաբանությանը և կրոնական ուսմունքին, «ուխտ քրիստոնէութեան» արտահայտության հիմքը տեսնել մկրտության և բաշխիքի մեջ:

Հավանաբար, Եղիշեի կողմից Եկեղեցին՝ ուխտի իմաստով ըմբռնելու համար

⁴⁴ III 62 (67):
⁴⁵ III 68, 73 (73, 78), VI 114 (126), VII 167 (187):
⁴⁶ I 14 (7):
⁴⁷ III 69 (75), IV 83, 86 (90, 93):
⁴⁸ IV 87 (95):

⁴⁹ Հմմտ. Murray, Symbols of Church, 16f.
⁵⁰ Օր.՝ III 62, 68, 75 (66, 73 82):

հնարավոր է մի վաղ քրիստոնեական արահետ գտնել նախնական ասորական ավանդության մեջ, որը, սակայն, դեռու լիովին մեկնաբանված չէ: Մենք ի նկատի ունենք վաղ ասորի հեղինակների այն հատվածները, որոնցում Չյճոմ-ի գաղափարը կարծես տարածվում է մկրտվածների ողջ համայնքի վրա⁵¹:

Կարող ենք եզրակացնել, որ Եկեղեցու հասարակական կացության աճանակարելիոր կողմերից մեկը «ոխտն» է: Եկեղեցին ուխտ է կազմում, առաջին հերթին, իր պաշտոնյաների նկատմամբ: Բայց Եկեղեցին ուխտ է կազմում նաև իր բոլոր անդամների բազմության նկատմամբ: Պաշտոնյաները և հավատացյալները կապված են միմյանց հետ այնպիսի ամուր, անքակտելի պարտավորությամբ, ինչպիսին ուխտըն է, մարդկանց Աստծու հետ և միմյանց միջև ամենաարբազան կապը: Եկեղեցին իր բուն էությունը Աստծու և մարդկանց և Քրիստոսի հավատացյալների՝ միմյանց միջև այս դաշինքի մարմնավորումն է:


Այս համառոտ ակնարկի նպատակն էր ներկայացնել Եղիշեի կողմից Եկեղեցու ըմբռնման հիմնական, առանձնահատկությունները: Եկեղեցին խորապես հոգևոր էություն է, աստվածային՝ իր ծագումով, իր հիմքերով և իր նպատակով: Իր գործունեության տեսանկյունից այն մայր է, որ ծնում է մարդկանց հավերժական

կյանքի համար, իսկ իր ընկալող էության մեջ այն Աստծու զավակների և Քրիստոսի եղբայրների համայնք է: Ինչպես իր գործող, այնպես էլ ընկալող արտահայտություններում այն ուխտ է, մի կուռ միություն, որ միավորված է Քրիստոսի հավատի և սիրո ամուր կապերով, տոգորված և սնված է սրբազան կյանքով: Իր բնությամբ հասարակական կազմակերպություն լինելով, Եկեղեցին իր առանձին անդամներով հանդերձ, մի անբաժանելի ամբողջություն է: Յուրաքանչյուր քրիստոնյայի մեջ արտահայտվում և իրականանում է շնորհված կյանքը և Աստծու փառաբանությունը: Վերջապես, Եկեղեցու հոգևոր էությունը, ինչպես հասարակական, այնպես և անձնական կողմերով, խորհրդանշական արտահայտություն է գտնում (որ մի իսկական ազդու և իրապատում խորհրդանիշ է) եկեղեցու կառույցի մեջ, հավատացյալների ժողովի այդ արտոնչալ վայրում*:

* Սույն հոդվածը նախապես լույս է տեսել անգլերեն լեզվով. տե՛ս Boghos Levon Zek'yan, Elise as Witness of the Ecclesiology of the Early Armentan Church.—In: „East of Byzantium: Syria and Armenta in the Formative Period“, Dumbarton Oaks Symposium 1980, Dumbarton Oaks, 1982, p. 187—197 Հայերեն թարգմանությունը կատարել է Մաշտոցյան Մատենադարանի գիտական աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Մուրադյանը:

⁵¹ Հմմտ. Murray, Symbols of Church, 14f.





ԷԶՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ 1000 ՏԱՐԻ

ԱՐՏԱԾԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Ձեռագիրը ամեն մի ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի ամենաթանկագին հուշարձանն է, որովհետև առավել շատ հետքեր է պահպանում անցյալի քաղաքակրթություններից: Այն բարդ և բազմադիմի հուշարձան է, զանազան գիտությունների, արվեստների, արհեստների և հրմտությունների միագումարության սրգամիք, որոշակի ձևով, գրչությանը, բովանդակությանը, համապատասխան գեղարվեստական հարդարանքով, հիշատակարաններով և գոյատևածն իր յուրահատկություններով: Ի տարբերություն մշակույթի կարծրանյութ հուշարձանների (հողի տակ թե վրա), որոնց վրայով ժամանակն ինքն է անցնում, փափկանյութ ձեռագրերը իրենք են անցնում ժամանակի և տարածության միջով և ավելի շատ կորցնում են (եթե բոլորովին չեն կորչում), քան ձեռք բերում՝ նորոգմամբ և հիշատակարանների տեսքով: Այս ճանապարհով, նրանք նոր շերտեր են ավելացնում եղածի վրա, վերամարմնավորվում, որպես բարդ հուշարձան: Ուսումնասիրողը զգուշությամբ պետք է քացահայտի կուտակված շերտերը, դրանցից «ազատի» և վերստեղծի ձեռագրի

նախնական վիճակը, որից հետո միայն ըստ ամենայնի ուսումնասիրի ամբողջական հուշարձանը, եթե նույնիսկ այդ պահին հետաքրքրում է նրա տարրերից կամ բաղադրիչներից մեկը: Այս եղանակով միայն լիակատար պատկերացում կարելի է կազմել և միջնադարյան հուշարձանի և այն ստեղծող բնագավառի՝ գրչության արվեստի մասին, և ճիշտ գնահատել հուշարձանի նշանակությունը ժողովրդի պատմության ու մշակույթի մեջ:

Ամեն մի ձեռագիր ոչ միայն անցյալի և իր ժամանակի մտածողությունն ու պատմությունն ամբարող հուշարձան է, այլ նաև իր սպրած տարիների, անցած դժվար ճանապարհի կենդանի վկան:

Այդպես են մանավանդ հայերեն ձեռագրերը, որոնցից շատերը այսօր միակ հայխոս վկան են իրենց ճննդավալը գրչության կենտրոնի՝ երբեմնի ծաղկած հայրենիքի, քարգավառ մշակութային կենտրոնի, վանքի, գյուղի, քաղաքի, որոնք հիմա դարձել են խրված Հայրենիք, կործանված վանք, ավերված գյուղ՝ անշունչ, անառն: Ըստ ձեռագրեր մանակից են եղել հաջողությունների փառաբա-

նության, կառուցումների նավակատիքի, կնունքի, պատկի, գավազանատվության: Եղել են նաև ավերածությունների ակամատեն, եղեռնագործությունների զոհ, կրել գերության տառապանքը, կորուստների ցավը, հոշոտվել, հաշմվել, կազմահան ու թերթակորույս քաղել դարերի միջով և էջերում պահած գանձը հասցրել մեր օրերը: Հայերեն ձեռագրերը բաժանել են իրենց ստեղծող ժողովրդի ճակատագիրը, որի ասպնույցն է նաև ձեռագրական սփյուռը:

«Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ծառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են: Եվ ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր Հայրենիքում», գրել է Գարեգին կթղ. Հովսեփյանը: Հիրավի, ձեռագրական փթիխարի կորուստներից հետո մեզ հասած ավելի քան երեսուն հազար ձեռագրերի ամենամեծ հավաքածուն սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն է, տասնմեկ հազար ամբողջական ձեռագրերով և երեք հազար պատասխկներով ու հմայիկներով: Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի մատենադարանի հազարանոց հավաքածուի հետ միասին այն կազմում է աշխարհի հայերեն ձեռագրերի՝ «մեր ազգային ամենամեծ հարստության» մոտավորապես կեսը:

*
* *

Մինչև տասներորդ դարը գրության թվականով հայերեն ութ ավետարան ունենք (այդքան էլ՝ թվականն անհայտ): Առաջին երկուսը՝ Մլքե թագուհու՝ 862 թ. (Վեներտիկ № 1144/86) և Լազարյան՝ 887 թ. (Մատենադարան № 6200) իններորդ դարից են, մնացած վեցը՝ տասներորդ դարում են գրված. երկուսը Հայաստանի սահմաններից դուրս են գտնվում՝ Թարգմանչաձ 966 թ. (Բայթինոր-ԱՄՆ), Ծորղուրթի՝ 974 թ. (Վրաստան), մյուս չորսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում (Աշոտ Հայոց Սպարապետի՝ 909 թ. (№ 6202), Սանասարյան՝ 985 թ. (№ 7735), Աքանչեղագործ՝ 988 թ. (№ 8906) և Էջմիածնի՝ 989 թ. (№ 2374): Այս մարգարտաշարի ամենաերիտասարդ շարիտղան Էջմիածնի ավետարանն է, որի հազարամյակը լրանում է այս տարի¹:

¹ Այն Ա. Էջմիածնի Մայր Աթոռի մատենադարան է մոծվել Նախիջևանի գավառի Ծամբիժորի Մաղարյա Ա. Ստեփանու Նախավկա վանքից,

Էջմիածնի ավետարանը հայերեն բոլոր ձեռագրերից տարբերվում է փղոսկրյա կազմով (որի պատճառով կոչվում է նաև «Էջմիածնի փղոսկրյա կազմով ավետարան») և զույգ էջերը նկարազարդ երկու թերթերով, որոնք պատկանել են ավելի հին մատյանի: Նախորդների համեմատությամբ աչքի է ընկնում «չստոյգ եւ ի հին արինակաց» ընդօրինակված լինելով, գրատեսակների բազմազանությամբ, գեղարվեստական զարդարվածությամբ և դրանց շերտերով, ավարտուն հիշատակարանով, ամբողջականությամբ և լավ պահվածությամբ:

Այս հատկանիշների համար ձեռագիրը դեռևս միջնադարում ընդօրինակվել է որպես «ընտիր և ստոյգ» օրինակ, կոչվել «Մաղարդայի Ա. Նախավկայի նշանավոր ատետարան», իսկ Էջմիածնի անդախոյվելուց հետո՝ «Էջմիածնի ատետարան», միակը Սուրբ Աթոռի մատենադարանի հազարավոր ձեռագրերից, որ կրում է «Էջմիածնի» մականունը: Էջմիածնում ձեռագիրն արդեն գրավում է հայագետների ու արվեստաբանների ուշադրությունը: Մ. Բրոսսեն, ապա Դ. Ծահնագարյանը տալիս են ձեռագրի նկարագրությունը², արվեստին անդրադառնում են Ա. Ոսկարովը, Վ. Ստասուլը, 1891 թ. Յ. Սորժիգովսկին ստանձին մենագրություն է նվիրում Էջմիածնի ավետարանին³, իսկ Ֆ. Մակկերը Փարիզում 1920 թ. հրատարակում է լուսատիպ մանախանությունը⁴: Հետագայում ձե-

¹Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի 1847 թ. ապրիլի 17-ի կոնդակով, մատենադարանապետ Հովհաննես Ծահապոնյանի ջանքերով և Մակար վրդ. Պետրոսյանի ձեռամբ (Ա. Սեդրակյան, Յովհաննես Ծահապոնյանցի կենսագրությունը, Ս. Պետրոսյան, 1898 թ., էջ 127, 179),

² «Մայր ցուցակ մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի (կազմեց՝ Դանիել Ծահնագարյան), ծախիւք Յակոբայ վարժապետ Կարենեանց», Թիֆլիս, 1863, էջ 16: 222 համարի տակ կարդում ենք. «Աւետարան, երկաթագիր, մեծագիր, փղոսկրեայ կազմի, գրեալ ի մագաղաթի ի ստոյգ և ի հին օրինակաց, ի վաչելումն տեսուն Ստեփաննոսի՝ շինողի և նորգողի Նորավանք անուանեալ, ի տերութեան Աթաբակ Աշակցին, ի հայրապետութեան Գրիգորի: Գործերորդի Վահրամն գնեալ ընծայեալ է ի Մաղարդավանս Արքայն Ստեփաննոսի Նախավկայի, ի Յովհաննիսէ, ի թոխն Հայոց ՆԼԸ (989) ըստ թուոյ Հռոմոց ՉեւԸ, յիսնայելական բոնակալութենէն ՉԼԹ, ի սկիզբն ի վերջն, գտանի յիշատակարան»:

³ J. Strzygowski, Das Et-chm'adzin—Ewangeliar.—Wien, 1891: (Թարգմանություն, Վիեննա, 1892 թ.):

նագրին անդրադառնում են Վ. Լագարկը, Լ. Կուրնուվոն, Ս. Տեր-Ներսեսյանը⁴ և ուրիշներ:

Ձեռագիր հուշարձանի ուսումնասիրության հիմնական աղբյուրը ինքը ձեռագիրն է՝ ձևով, գրանդություն, գրով, բովանդակությամբ, մանրանկարչությամբ, կազմով ու հիշատակարաններով:

Հիշատակարանները, որ գրվում են ձեռագիրը գրվելուց հետո և նրա գոյատևման ընթացքում, դառնում են ձեռագրի ստեղծման և ղեկերումների պատմությունը. տեղեկություններ են հաղորդում ոչ միայն ձեռագրի գրչության հանգամանքների, այլև ժամանակի կարևոր իրադարձությունների մասին:

Ոչ բոլոր ձեռագրերն են, որ ունեն հիշատակարաններ. հնագույնները չեն ունեցել, իսկ հետագայում գրվածների մեծ մասը ժամանակի ընթացքում կորցրել է դրանք, որովհետև հիշատակարանները տեղավորված են լինում ձեռագրի վերջում: Էջմիածնի ավետարանը, քարեքայտաբար, պահպանել է իր հիշատակարանը: Ուստի սկսենք նրանից: Հիշատակարանը գրված է ստացողի՝ Ստեփաննոսի անունից, Հովհաննես գրչի ձեռքով, ուր նախ փառաբանվում է վանքի հիմնարկողը և միաբանության հաստատողը, Սյունյաց Հայկազյան իշխանական տոհմից, Ստեփանոս կրոնավորը, որն իր հորեղբայրն էր, և որի աշակերտներից մեկն է եղել ինքը: Նրա մասին կարդում ենք. «...գոր ես իմն պապաւոր և հարազատ, մաքրութեամբ մարմնոյ և խաչակիր նահատակութեամբ թողեալ զհայրենական զքթելութիւնն քանոն կրանից միանձնաց եղեալ, յերկրի զանմարմնոցն բերեալ արիւնակ՝ ճոցին եղել հաղորդ, թողլով երկրի իւրայոցս աշակերտելոց արիւնակ զնացից կենաց պողոտային եւ սանդուղս ի Վերին Միովն, զանուանեալ նորս վանս՝ հիմնարկեալ ի առաջվայարան նոյնանուն իւր Արթոյ Նախավկային Ստեփաննոսի»⁵:

Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը ավելի հանգամանորեն է պատ-

մում իրողությունը: Վանքի հիմնադիր Ստեփաննոսի հարը՝ Գևորգը, Սիսական իշխանական տոհմից էր: Ամուսնանում է, իշխանական ունենում, հետո թողնում է աշխարհակալ կյանքը և հոգևորական է դառնում: Ծառայում է Մաշտոց Եղիսարացու մոտ, նրանից հետո տեղափոխվում է Երից վանք, որտեղ և մահանում է ու թաղվում:

Գևորգի որդի Ստեփաննոսին մանկուց ուսման են տալիս աստվածային ձեռքերի մոտ: Նա կատարելության է հասնում գիտականորեն ու գործնականորեն և կոչվում քահանայական աստիճանի: Ապա փափագելով աստվածային մի գործի՝ կամենում է եկեղեցի շինել և այնտեղ կրոնավորների միաբանություն ու սպասավորների դասեր հաստատել... Կատարի վանքի հակառակ կողմը... Հրահատ իշխանի օժանդակությամբ եկեղեցի է կառուցում, ավելացնում եկեղեցական զավիթներ, արահներ ու կրոնավորների բնակարաններ: Նավակատիքի է հրավիրում Սյունյաց եպիսկոպոս Տեր Հակոբին, որը սահմանում է միաբանություն և շրջակա բոլոր վայրերը որպես կազմաք հասկացնում եկեղեցուն: Վանքի դիմաց հիմնում են բորոտանոցներ... և այսպես ամեն տեսակ հարմարանքներով և կարգ ու կանոնի հաստատումով վանքը ծաղկեցրեց հայոց երեք հարյուր ութսուն հինգ (936 թ.) թվականին: Այս իրողությունը հաստատվում է վերջերս գտնված վիմարձանագրությամբ⁶:

Հիշատակարանում Նորավանքի տեղը նշված չէ: Օրբելյանը այն հիշում է նախ հատվածի վերնագրում «Բղեն գավառի Նորավանքի կառուցման մասին» (Վասն շինութեան Նորավանքից որ ի գաւառիս Բղենոյ), ապա՝ շարադրանքում. «Կատարի վանքի հակառակ կողմը, մի շատ գեղեցիկ ու վայելուչ տեղ է գտնվում երկու ձորերի միջև հարթ մի լեռնաբազկի վրա»⁷:

Իր վանական նորահիմն հաստատությունում «ինքը՝ երանելի, մարդկանց մեջ

⁴ F. Macler, L'Evangile Arménien, édition photographique du manuscrit № 229 de la bibliothèque d'Etchmiadzine, Paris, 1920.

⁵ Ս. Տեր-Ներսեսյան, Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը (զբրված 1933 թ.) նույնի, 7-րդ դարի հայկական մանրանկարչությունը և Էջմիածնի ավետարանի մանրանկարները («Հայ արվեստը միջնադարում», Երևան, 1975, էջ 31—55 և 56—68):

⁶ Մատենադարան, ձեռ. № 2874, էջ 880ա:

⁷ Սո. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 221:

⁸ Ս. Բարխուդարյան, «Էջմիածնի ավետարանի» գրչության վայրը», «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 47:

⁹ Սո. Օրբելյան, նույն տեղում: Կատարի վանքը գտնվում է արևմտյան Բաղքի (Աճառան) Բեխ գյուղի դիմաց, Բղեն գավառը՝ Տաթևից հյուսիս-արևելք, Որոտան գետի աջ կողմում: Երբեմն Տաթևն էլ է մտնում այդ գավառի մեջ («Գիվան հայ վիմագրության» պ. 2, Երևան, 1960, էջ 42:

անհամեմատելի Ստեփանոսն էլ, առաքինացան վարքով շատ տարիներ ապրելով ու հրեշտակակրոն առաքինությամբ անմարմիններին մարմին բերելով և կյանքը պարզելով նրանց՝ մեռավ 970 թ.¹⁰։

Նորավանքի հիմնարկությունից առաջ վերակառուցվել էր Սյունյաց միտրոպոլիտությանն ենդ և անշուք աթոռ Տաթևը։ 895 թ. հիմքն է դրվում Տաթևի նոր՝ Պողոս-Պետրոս առաքելոց եկեղեցու և կից շինությունների, որոնք ավարտվում են տասնմեկ տարի անց, 906 թվականին։ Այդ ժամանակ Տաթևը «բոլոր վանքերից նշանավոր էր ոչ միայն շինություններով, այլև փայլում էր շուրջ հինգ հարյուր միաբանների կրոնավորական դասերով։ Լի էր խորաքնին փիլիսոփաներով, երաժիշտ երգիչներով, ճոխ էր վարժարանը վարդապետական կրթությամբ։ Կային նաև անհամեմատելի արվեստավոր նկարիչներ ու գրիչներ»¹¹։

Ստեփանոս կրոնավորը Նորավանքը հիմնելիս, անշուշտ, աչքի առաջ ուներ միտրոպոլիտ Տեր-Հովհաննեսի կառուցած Տաթևի վանական միաբանության օրինակը, որին հետևելով հիմնեց իր կրոնավորանոցը և, ի տարբերություն Հին Տաթևի, այն անվանեց «Նորս վանս» նույնափսի դպրոցով, աշակերտներով, նկարիչներով ու գրիչներով։

Նորահիմն Նորավանքի դպրոցի աշակերտներից էր նրա հիմնադիր և առաջին առաջնորդ Ստեփանոսի եղբորորդի Ստեփանոսը։ Սա փոխարինում է իր հորեղբորը և պատվիրում մի ավետարան Նորավանքի արդեն իր դպրոցի աշակերտների ընթերցանության համար։ «Իսկ ես՝ յետին եւ ամենամուսատ Ստեփանոս մողորական կրանատր և անարժան քահանայ, նորին աշակերտ եւ եղբարորդի ոչ ըստ նորին արինակի, այլ լուծ մեղուցեալ, որ թեւէտ եւ ըստ սին եւ սնոտի խաբկանաց կենգալոս Համբագեա գոյ ասէին գիս, այլ եւ ըստ ճշմարտութեանն, որում եւն վկայեմ հեճ աննշան եւ վատթար եւ ետին քան զամենամ մարդիկ՝ ըստ շատ գործոց եւ անողորալ գնացից իմոց, սակարն քրիստոնեալ գոյ եւ գինք արեան մեծին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ուրանամ գիս։

Եւ արդ մեծաւ տարիմամբ ցանկացալ գոեւ զվսամափայլ չորեքծագեան հոգեւորոյխ տոսս սրբոց ավետարանացս ի օսարդ գերարփի վայելչութեան եկեղեցոյ,

ի սմա պարելոց մանկանց Նոր Սիովնի... որք ընթեռնուք զսա... յիշման արժանի արասչիք զտարժանեալ մեղաք զհոգի իս»¹²։

Ստ. Օրբելյանը Ստեփանոս քահանայի մասին գրում է. «Աշուհեսն Նորավանքի միաբանության առաջնորդությունն ստանձնեց» նույն Ստեփանոսի եղբորորդի Քրիստափորը՝ այդ սուրբ հոր աշակերտը՝ ամբողջովին նմանվելով իր ուսուցչին»¹³։ Այստեղ, հավանաբար, Քրիստափոր անունը շփոթված է Ստեփանոսի հետ։

Ինչպես տեսնում ենք, Էջմիածնի ավետարանի գրչության կենտրոնի հիմնադիր Ստեփանոսը և նրա եղբորորդի Ստեփանոսը՝ ավետարանի ստացողը, Հայկազուն իշխանական տան ժառանգներից են, որոնք 9—10-րդ դարերում ժառանգաբար իշխում էին Սյունիքի հյուսիս-արևմտյան մասի Գեղամա ծովի շուրջը գտնվող շորշանների վրա¹⁴։ Այսպիսով Սյունյաց Հայկազուն իշխանական տոհմի ներկայացուցիչները միտրոպոլիտական աթոռ Տաթևի վարդապետարանից ոչ հեռու, նույն գավառում հիմնում են Նորավանքի եղբայրանոցը՝ դպրանոցով, որտեղ նույնպես եղել են «անհամեմատելի արվեստավոր նկարիչներ ու գրիչներ», ինչպես Տաթևում։

Վկա՝ Էջմիածնի ավետարանը։



Էջմիածնի ավետարանը կազմված է 29,5×34,6 սմ մեծության մագաղաթյա շատ լավ մշակված հաստ թերթերից, բացառությամբ մի քանիսի, որոնք մատղաշ անասունի մորթուց են պատրաստված և շատ նուրբ են։ Սրանք հաճախ թանաքը ծծում են և հաջորդ էջը տեղ-տեղ անգրել է մնում, իսկ 227թ էջը ամբողջությամբ է անգրել։ Յուրաքանչյուր ութ (կամ չորս իրար կից) թերթերից կազմված է պրակը։ Պրակի առաջին թերթի ա էջի վերին լուսանցքի կենտրոնում նշանակված է պրականիչը՝ երկաթագրով։ Պրակները նշանակված են հալոց այբուբենի հերթականությամբ և ոչ նրանց թվային արժեքով, ուստի ձեռագիրն ունի Ա.—Բ (28) պրակ, որն հավասար է 224 (28×8) թերթի։ Ա. պրակից սկսվում է Մատթեոսի ավետարանը։

¹² Մատենադարան, ձև. № 2874, էջ 230ա—230բ։

¹³ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 222։

¹⁴ Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 52, 53։ Հմմտ. Դիվան հայ վիճաբանության, պր. 2-րդ, էջ 41—44։

¹⁰ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 222։
¹¹ Նույն տեղում, էջ 22—28։

նը: Ա պրակին նախորդում է ութ թերթա-
նոց մի պրակ ևս, որը հնում սովորաբար
չէր պրակակալվում, որովհետև այն ավե-
տարանից դուրս էր: Այն պարունակում է
Եվսեբիոսի՝ Կարախանոսին ուղղված
Թողթը, նրա կազմած համաքարքառը,
ինչպես նաև տերունական նկարներ: Ու-
տի ունենք 224+8=232 թերթ կամ 29 պը-
րակ: Այս եղել է ձեռագրի սկզբնական
թերթաքանակը: Վերջին 232-րդ թերթը,
ինչպես երևում է, անգրել է եղել, և անջա-
տել են: Երբ ձեռագրի մեջ երկու նկարա-
զարդ թերթ է մուծվել, բնականաբար, ձե-
ռագիրն ավելացել է երկու թերթով, որոնք
մուծված են վերջին Ռ-րդ պրակի մեջտե-
ղում, և որի պատճառով ութ թերթանոց
պրակը դարձել է տասը թերթանոց, և թեր-
թաքանակն էլ հասել (232+2=)234-ի:
Ինչպես նշեցինք, վերջին պրակի վերջին
թերթը չկա. ուստի այժմ վերջին պրակը
տասի փոխարեն ունի 9 թերթ, և ձեռագրի
թերթերի իրական քանակը (234-1=) 233
է: Սակայն վերջին թերթի վրա գրված է 232
(մի թերթով պակաս): Թյուրիմացությունը
Էջմիածնում ձեռագրի թերթերը մատիտով
համարակալողից է գալիս, որը 155 հա-
մարը գրելուց հետո, 156-ը հաջորդի վրա
դնելու փոխարեն, նշանակում է նրանից
հետո եկող թերթի վրա և մի թերթ մնում
է չհամարակալված¹⁵:

Ավետարանի հիմնական գիրք երկայթա-
գիրն է՝ երկայուն գրությամբ: Գրադաշտի
մեծությունը 23,4×9 սմ է, միջնադասնոց-
քո՝ 2,2, վերինը՝ 3,5, արմատինը՝ 2,5, կող-
քի լուսանցքը՝ 6,8, իսկ ստորինը՝ 8,7 սմ,
որը ցրվացանկը գրելու համար է, և ունի
6 նեղ տողեր: Յուրաքանչյուր էջ ունի 20
տող, որոնք, ինչպես և պունագծերը, ար-
ված են ճնշումով:

Ձեռագրի առաջին թերթի գույգ էջերը
(1ա, 1բ) գրադեցնում են Կարախանոսին
ուղղված Եվսեբիոս Կեսարացու Թողթը
գրված շքեղ խորաններում, աղյուսակ
գրով: Հաջորդ յոթ խորաններում (2ա—
5ա) տեղավորված են համաքարքառի
տասը (Ա.—Ժ) կանոնները: 5բ-ում տաղա-
վառիկն է՝ յոթս պուններով: Յա խորանում
Քրիստոսի նկարն է՝ Պողոս-Պետրոս ա-
ռաօյակների հետ. 6բ—7ա խորաններում
ավետարանիչներն են՝ գույգ-գույգ կանգ-
նած, ռազված մատանները ձախ ձեռքե-
րում, 7բ-ում՝ Աստվածամայրը Մանկան
հետ. 8ա-ում՝ Առարհամի զոհաբերությու-

¹⁵ Թերթախամարները չխախտելու համար այդ
թերթերն ունեն այսպիսի էջակալում. 155 (ա, բ),
156ա, 156բ, 156գ, 156դ: Նշանակում է՝ 156ա—
156բ էջերը բաց մնացած թերթինն են:

նը: Տբ-ն անգրել էջ է եղել, ուր հետագա-
յում ձեռագրի գնման հիշատակարանն է
գրված:

Զա-ի վերին լուսանցքում մանրագիր
ավետարան ըստ Մատթեոսի: Լուսանցքի
կենտրոնում Ա պրականիշն է՝ գրված վըր-
ծիմով: Հավանաբար նկարչի գործն է, որ
նույնպես ցույց է տալիս, թե նկարիչն ու
գրիչը միասին են աշխատել նույն վայ-
րում:

Մատթեոսի ավետարանն ավարտվում է
71բ էջում: Մարկոսի ավետարանն զբա-
ղեցնում է 72ա—111բ 2-րդ պունակը: Դու-
կասի ավետարանը՝ 111բ—2-րդ պունակ—
176բ:

Յովհաննոս ավետարանը՝ 177ա—222ա,
որին հետևում է՝ «Փառք Սուրբ Երրորդու-
թեան յախտենս առեմ», «Յովհաննես գրե-
ցի սղաչեմ յիշել զիս», հիշատակագրու-
թունները, որոնցով էջն ավարտվում է:

Հաջորդ էջն անգրել է թանաքը ծծելու
պատճառով: Այս թերթով կհավում է պրա-
կը¹⁶:

Մյուս թերթը սկսվում է «Հիշատակա-
րան» մանրագիր խորագիր ունեցող գըլ-
խավոր հիշատակարանով: Հիշատակա-
րանները սովորաբար սկսվում են
«Փառք»-ով, բայց այստեղ «Փառք» չկա:
Բանն այն է, որ «Փառք» արդեն գրվել էր
ձեռագրի վերջում¹⁷: «Փառք»-ով փառա-
բանվում էր Սուրբ Երրորդությունը, որ
ևստողություն էր տվել գրչին կամ հեղի-
նակին ձեռագիրը կամ ստեղծագործությու-
նը ավարտելու: Հետագայում այն դառնում
է ձեռագրի Հիշատակարանի սկիզբ, ուր
դարձյալ փառաբանվում է Սուրբ Երրոր-
դությունը ավարտի հասնելու հնարավո-
րությունն տալու համար:

Հիշատակարանին (230ա—231ա) հա-
ջորդում է «Աւետարանացոցը» կամ «Տա-
նագոցը» ստանց խորագրի (էջ 231ա—
232բ): Սրանցով ավարտվում է ձեռագի-
րը:

¹⁶ Այստեղ հետագայում մուծվել են մանրակար-
ված գույգ թերթերը՝ փրկված 6-րդ դարում ստեղծ-
ված ձեռագրից, որոնք կրում են 228, 229 թերթա-
համարները:

¹⁷ Հնագույն ձեռագրերը հիշատակարան չէին ու-
նենում: Նրանք ավարտվում էին «Փառքի» մի նա-
խադասությամբ: Առաջին գրիչները չէին համար-
ձակվում իրենց անունը դրոշմել Ա. Գրքում: Այդ-
պես է վարվել նաև Մեսրոպ Մաշտոցը, որի ար-
տագրած ձեռագրի մասին կարդում ենք. «առեկն
տանդությունէ գրեալ ձեռամբ արքայն Մաստրովայ
վարդապետի և թարգմանչի» (ձեռ. № 10434, էջ
287ա):



Էջմիածնի ավետարանն ունի Եվսեբիոս Կեսարացու համաբարբառն ու հատածուները: Առաջինը տեղավորված է սկզբում, գեղեցիկ նկարազարդված խորանների մեջ, երկրորդը՝ բնագրի լուսանցքներում: «Թիք» կամ «գլուխք»-ը նշանակված են գլուխների դիմաց, լուսանցքում, մանրագրով, յուրաքանչյուր ավետարանինը առանձին, հերթական համարակարգով: Ստորին լուսանցքում յուրաքանչյուր էջի համաբարբառն է՝ դարձյալ մանրագրով, որոնք կոչվում են «ցրուացանկք»:

«Աւետարանք գլխաւորքը»-ը (երբեմն՝ «նշանագիրք», «ընթերցումք») սկսվում են մեծ գլխագրով, որի դիմաց դրվում է բաժանարարը՝ մոտավորապես կրկնակի պատվանշանի ձևով: Սրանք հետագայում փոխարինվում են լուսանցազարդերով, իսկ գլխագրերը՝ զարդարերով: «Տունք»-ը սկսվում են նոր տողից, գրության տառերից մի քիչ մեծ գրերով և ավարտվում ավարտանշաններով: Վերջապես՝ «Վկայութիւնք»-ը, որոնք Հին Կտակարանից բաղվածքներ են: Սրանց տողերի դիմաց, լուսանցքում, դրվում են տգրկիկներ կամ ստորակետի նշաններ:

Մեր ձեռագրերում վկայությունները հերթական համարներով նշված են միայն Վեհափառի ավետարանում, (պահպանվել են վկ. Ա.—վկ. ԺԱ. համարները)¹⁸:

Հովհաննես գրիչը ձեռագիրը գրելով ստույգ և հին օրինակներից, պահպանել է ընդօրինակության հնագույն ձևը, այսինքն՝ «Տեսր ընդ տետրի, թուղթ ընդ թղթի, տող ընդ տողի, էջ ընդ էջի և այլ ամենայն որպիսութեան արհեստն՝ որպես նոյնն»¹⁹ ինչպես կարդում ենք ընտիր օրինակից արտագրված ձեռագրի մի հիշատակարանում և շատ ակնառու տեսնում Վեհափառի և մյուս հնագույն ավետարաններում²⁰:

Պահպանված են գաղափար-օրինակի լուսանցազրույունները, որոնց մի մասն առնված է շրջանակների մեջ, մյուսը՝ ոչ: Այս ապացույց է, որ գրիչն օգտագործել է մեկից ավելի օրինակ, և լուսանցազրույունների տարբեր ձևերը դրա հետևանքն են²¹:

Հովհաննես գրիչը վարժ և հմուտ արվեստավոր է եղել: Ամբողջ ավետարանը գրել է շատ կանոնավոր երկաթագրով, միագիծ տողի վրա (և ոչ զուգ տողերի միջև), հավասար բարձրությամբ, առանց բառանշատման, բացի բացատներից և կետերի տեղերից: Տողագծերը միմյանցից 1 սմ հեռավորություն ունեն: Ավելի մեծ երկաթագրով է գրել տնագլուխները, որոնք սկսվում են նոր տողից: Սրանցից մեծ են ընթերցվածների կամ գլխավոր ավետարանների երկաթագրերը, իսկ ավետարանների սկզբնատառերը իսկապես գլխագրեր են, զարդարիմ նմանվող: Ինչպես այս վերջին, այնպես էլ ընթերցվածների գլխագրերը որոշ ռճավորում ունեն. մի կամ երկու ծալերից գծված են շատ նուրբ արմավեհիկներ: Սրանցով, նաև ավետարանների վերնագրերն ու ավարտագրերը շրջափակող գծիկներով ավարտվում է Հովհաննես գրիչ կատարած զարդարանքը: Թվերի կամ գլուխների համարների, ցրվացանկի, սրբազրույունների, ինչպես նաև Ավետարանացույցի գրության համար գրիչն օգտագործել է և՛ աղյուսակ գի, և՛ բոլորագիր, և՛ շղագիր. փաստորեն այն բոլոր օրատեսակները, որ ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Այս տեսակետից Էջմիածնի ավետարանը բոլոր գրատեսակների 10-րդ դարում ու նրանից առաջ օտոժածված լինելու լավագույն փաստերից է:

Հովհաննես գրիչն օգտագործում է գույգ կետ, որպես ավատակետ, երբեմն էլ նրան և գետով տգրկիկ՝ հորիզոնական, մի կետ, որ դրվում է տողի մեջտեղում կամ մեռևում, որպես վերնակետ, նաև ստորակետ: Բացականչական նշանը դրվում է

¹⁸ Ա. Մաթևոսյան, Վեհափառի ավետարանը, «Էջմիածին», 1978, Ե, էջ 34—48:

¹⁹ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Մխիթարեան մատենադարանին, ի Վանեսիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 784:

²⁰ Որ Հովհաննես գրիչն այդպես է ընդօրինակել, երևում է ամեն մի էջից, որ պլոնակի շրջանակներում շնեղավորված տողի ավելացրած տառերը ոչ թե տեղափոխվում են հաջորդ տող, այլ՝ նույն տողի շարունակություն են դառնում լուսանցքում փոքրացած կամ տողից վեր՝ տողամիջում:

²¹ Ինչպես հայտնի է, հետագայում այդ լուսանցազրույունները մոծվում են բնագրում, փոփոխություններ են տեղի ունենում ստոգանության ու կետադրության նշանակման մեջ: Սակայն գաղափար-օրինակի նշանակությունը միշտ մնում է գերադասելի: Դրանցից հետագայում սրբագրում են ձեռագրեր: Հայտնի են Սաղմոսարանի՝ Սարկավագի, այսպե Հովհաննես Գառնեցու և Վարդան Արեվիցու սրբազրույունները, Ավետարանի՝ Գրիգոր Մուրղանցու, Աստվածաշնչի՝ Գևորգ Սկևազու և այլ սրբազրույուններ:

բացականշվող վաճկի համապատասխան գրի վրա, իսկ պատվագրված բառերում՝ պատվի վրա: Ի նախդիրի վրա դրվում է երկու կետ, ուրիշի խոսքի դիմաց՝ տգրկիկ: Այս վերջինը օգտագործվում է մասնախաղը ցույց տալու և սրբագրությունը նշելու համար:

Գրություններից երկուսն է, որ Հովհաննեսն օգտագործել է տարբեր լայնության մի քանի գրիչներ՝ էջն ավարտելու համար: Դա շատ ցայտուն երևում է մասնավորապես Ավետարանացուցի գրության մեջ:

Ավետարանացույցը կամ Տոնացույցը ծիսական գրականության երկերից է, ուր նշված են տոները և տոնական ծիսակատարությունները: Էջմիածնի ավետարանում պահպանվածը հնագույն մտյուն է, որին նրանից առաջ եղած ավետարաններում չենք հանդիպել²²:

Ձեռագրի առաջին արժանիքը, ինչպես նշվում է հիշատակարանում, «չստույգ և ի հին լարիմակաց» արտագրված լինելն է:

Սուրբ Մեսրոպ թարգմանչի «ձեռամբ գրեալ» ավետարանն ընդօրինակում էին «մանաւանդ վասն ստուգութեան և ընտրութեան բանի, եւ հրամանի, եւ տնհատի, եւ ամենայն արուեստի»²³: Այդպիսին էր վերաբերումընքն մասնաճակատի ընդօրինակածի նկատմամբ («ի ստույգ եւ լընտիր գաղափարէ Սրբոյն Սահակայ թարգմանչի»)՝ Արանք էին ավետարանի ընտիր և ստույգ օրինակները մինչև 10-րդ դարը:

Ինչպես ցույց տվեց Էջմիածնի ավետարանի մասնակի համեմատությունը Մեսրոպ Մաշտոցի գաղափարից ընդօրինակված ավետարանի հետ, դրանք համաձայն են միմյանց, ուրեմն նույն շտապիդին են պատկանում:

1427 թվականին գրիչ Գրիգոր Արծկեցին ավարտում է մի ավետարան «ի գաւառոս Ծամբի ձորոյ, ի մենաստանիս՝ որ մակաւնուամբ Մաղարդայ վանք կոչի... ի լաւ և լընտիր արիմակէ...»

Ահա և մի սրբագրություն (ոչ թե ընդօրինակություն) Մաղարդա վանքի ստույգ օրինակից, որ կատարվել է 1636 թվականին:

Սյունյաց Արիստակես բարունապետը հոնակոթ գողտում մի ավետարան է գրել տալիս Մաղարդա վանքին նվիրելու համար: Պարզվում է, որ այն սխալաշատ է, այնպես որ «վասն սխալութեան տրաւ ոչ արժանի համարեցաք կոչել զանուն գծողին»²⁴, գրում է հիշատակագիրը և շարունակում. «Եւ ես... Աստուածատուր... իրիցուկ ծառայ Արիստակես վարդապետի, և հրամանաւ տրիցն բազում և խիստ աշխատութեամբ սրբագրեցի զաս»: Դրանից հետո միայն նվիրում են ձեռագիրը Մաղարդա վանքին... «Եւ Արիստակես վարդապետս ետու լիշատակ գտորք Աւետարանս Ծամբա ձորոյ ի դռնն Ս. Աստուածածնին... Ս. Ստեփանոս Նախավկային...»²⁵:

Սույն ձեռագիրը (Մատենադարան, № 2656) համեմատեցինք Էջմիածնի ավետարանի հետ, իսկ վերջինս՝ Մեսրոպյան գաղափարից կատարված ընդօրինակության հետ:

Համեմատությունից պարզվեց նախ, որ Էջմիածնի ավետարանը իսկապես ընդօրինակված է Մեսրոպյան ստույգ և հին օրինակի շտապիդներից, կամ այն եղել է գաղափարներից մեկը²⁷, և այսպե՛ս որ Աստվածատուրը հոնակոթում գրված ավետարանը «բազում և խիստ աշխատութեամբ» սրբագրել է Էջմիածնի ավետարանի հետ համեմատելով²⁸:

Այս ցույց է տալիս վերջապես, որ հղեն Նորավանքի, հիրավի, եղել է գրչության արվեստի մի հզոր կենտրոն՝ հարուստ մատենադարանով, առաջնակարգ

²² Ցուցակում նշվում են տոնը, համապատասխան ավետարանի անունը (մանրագիր), կատարված քաղվածքի սկիզբն ու վերջը:

Սկիզբը. 281բ, «ի տասներորդ ժամու ելանն ի հովանոցն եւ ընթեռնու: (Սովորական մեծության գիր) ավետարան ըստ Ղուկայ (մանրագիր). Եւ հովիպ էին ի տեղոջ վերջին (մանրագիր). Որպէս եւ պատմեցաւ նոցա»:

²³ Մատենադարան, ձ. № 10434, էջ 286բ:

²⁴ Մատենադարան, ձ. № 6764, էջ 20ա:

²⁵ Գրչի անունը, որ հիշվում էր 225բ էջում, ջրնշել են:

²⁶ Մատենադարան, ձև. № 2656, էջ 288ա, 225բ:

²⁷ Ձեռագիրը երբեմն արտագրում կամ սրբագրում էին մի քանի օրինակից: Ավագ գրիչը հիշում է Սահակին, «զի շնորհեաց մեզ օրինակ ընտիր... գՄամուկն... որ կրկին այլ արիմակ, որ ստոյգեցաք, գՎարապետ քահանայն, որ միտ արիմակ այլ շնորհեաց, որ կոչի Մուրղանցի... Յորժամ աւարտումն հասաւ, նոքա գերիս ընտիր և անուանի ատետարանքս և ստոյգեցաք որ մին շտապեղաք էին գրած» (Մատենադարան, ձև. № 280, էջ 284բ, 1810 թ.):

²⁸ Հանի որ Մեսրոպյան (10434) և Էջմիածնի (2874) օրինակները նույն շտապիդից են, քաղվածքը բերում ենք մեկ անգամ, որի սկզբում դնում № 10434, իսկ վերջում՝ 2874 ձեռագրերի էջերը:

գրիչներով և նկարիչներով, որտեղ ոչ միայն տարբեր ստույգ և հին օրինակների համեմատությամբ ձեռագիրը ընդօրինակելու, այլև ճշգրիտ համարաբառ և սքանչելի նկարաշար կազմելու և վարպետորեն կատարելու հնարավորություն են ունեցել:

* * *

Էջմիածնի ավետարանը 10-րդ դարից մեզ հայտնի հայերեն ամենափաստափոխ նկարազարդված ձեռագիրն է, որի ծաղկողի անունը հայտնի չէ: Հովհաննես գրիչը ավետարանի նկարիչը չէ: Բանն այն է, որ խորանների գիրը շատ տարբեր է գրչի գործածած բոլոր գրատեսակներից: Ակզբի պրակը, որի բոլոր թերթերի երկու երեսներն էլ նկարազարդ են (բացի վերջին էջից), իսկ 1ա, 5ա էջերը մաս գիր ունեն, ուրիշ արվեստագետի գործ է:

Հովհաննեսի մոտ աղյուսակ գրի տարբերը սուր կամ բույթ անկյան տակ են միանում միմյանց՝ հորիզոնական նորբե-

րով: Տարբեր գրություն ունեն Ա. Յ. Ջ. Հ գրերը: Ծաղկողը օգտագործում է աղյուսակ գրի մի տարատեսակ, երբ երկար և կարճ մասնիկները ոչ թե հորիզոնական նորբերով ուղիղ անկյան տակ են միանում իրար, այլ հորիզոնական նորբերի ծայրերի փոքր կորույթով: Արանք նույնպես տարբերվում են երկաթագրից նրանով, որ երկաթագրի նորբը ամբողջովին կոր է: Ծաղկողն օգտագործում է միայն մի կես, Հովհաննեսի բազմակենսության դիմաց:

Ծաղկողը կամ նկարիչը ձեռագրի վրա գրչի հետ աշխատել է միաժամանակ: Նրա վրձնից են պատկանում սկզբի ութ թերթերի խորանները, նկարները, գրությունները և թերևս մաս ամբողջ ձեռագրի արականիչ տատերը, որոնք երկաթագիր են և գրված են վրձինով՝ յուրաքանչյուր պրակի առաջին թերթի ա էջի վերին լու-

Քաղվածքում ընդգծեցինք այն բառերը, որոնք բացակայում են Բոնակոթի ավետարանում, և Աստվածատուրն ինքն է մուծել կա՛մ տողամիջում, կա՛մ լուսանցքում, կամ էլ քերել-ջնջելով սրբագրել է:

- ձ. № 10484, № 2874, 1069 թ. 989 թ.
- 249ա Բագում ինչ ունիմ վասն ձեր խառնել
- 262ա Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեացի արտաքս
- 261բ վասն իմ ինչ 206բ եկն (լուսանցք.) եղև
- 261բ Հայր փառատրեա զանուն քո (լուս) գորդի
- Աստ. ցնա Յիսուս լուսեցելոյն 208բ
- 263 չէ ինչ պիտո, բայց զի գոտս
- 264ա լուսնայցէ, բանգի ամենեկին սուրբ է, եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամենեկին
- 267ա Պարհե 211ա
- 267ա Բանն իմ գոր 211ա
- 271բ Զայս առակաք 214բ խառնեցայ
- 274ա Եւ Յողայի ստեպ 217ա ընդ իր զգունդն

- ձ. № 2657, 1636 թ.
- 251ա բագում ինչ ունիմ խառնել
- 264ա Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ ընկեացի արտաքս:
- 264ա վասն իմ ինչ եղև
- 263բ Հայր փառատրեա գորդի քո
- 265բ Աստ. ցնա Յիսուս լուսեցելոյն չէ ինչ պիտո բայց զի գոտսն լուսնայցէ, այլ ոչ ամենեկին:
- 269ա Պանեացէ. (եց-ն քերել է թողել է պահէ) զբանն զիմ գոր (գ-երը քերել և թողել է բանն իմ գոր)
- 273ա Զայս խառնեցայ
- 275ա Եւ Յողայի ստեպ զգունդն. (և այլն):

ասնցքում: Պրականիչերի շուրջ եղած գունավոր շրջանակները հետագայում են արված, ընթերցվածների շրջանագարդերի հետ միաժամանակ, ուրիշ ծաղկողի կողմից, ամենայն հավանականությամբ ԺԲ դարում:

Ձեռագրի առաջին թերթի զույգ էջերը զբաղեցնում է Եվսեբիոս Կեսարացու թուղթը՝ ուղղված Կարպիանոսին (1ա, բ): Օքել խորանի մեջ գրադաշտում գեղեցիկ աղյուսակ գրով և մուգ թանաքով շարադրված է նամակը. Ամուլն Աղեկսանդրացու... առանց խորագրի և զբաղեցնում է 29 (+2 տող քերված): Մյուս էջում շարունակությունն է՝ նույն գրով, բաց դեղնավուն թանաքով և զբաղեցնում է 22 տող. ուստի տատերը մի փոքր մեծ են: Պարզվում է, որ թղթի գրիչ-նկարողը առաջին երեսը նույնպես դեղնավուն թանաքով է գրել, բայց սխալ է թույլ տվել (հավանաբար մի քանի տող կրկնել է), ուրի պատճառով ամբողջ գրադաշտը քերել է, ապա վերնագիրը գրել խորանի վերևում, էջի վերին լուսանցքում, մի տողի վրա՝ «Եւսեբիոս Կարպիանոսի սիրելույ եղբար ի տէր ողջուն» (աժմ եզրը ստորնձած կտորի տակ ծածկված է): Իսկ նամակը գրել է խորանի մեջ՝ քերածի վրա և թանաքով, ավելի խիտ և համեմատաբար մանր գրով, այնպես որ ներքևից երկու տող մնացել է ազատ, անկրկնագիր: Փաստորեն այս էջը մեզ հայտնի ամենահին կրկնագիրն է հայերեն ձեռագրերի մեջ:

Հացորդ հինգ էջերում համաբարբառի խորաններն են, որոնցում տեղավորված են Ա.—Ժ կանոնները: Մեզ հայտնի թվագիր հնագույն համաբարբառն է սա, որ հասել է մեզ ամբողջությամբ և արժանացել յուրջ ուսումնասիրության՝ համարվելով համաբարբառի հնագույն և ինքնատիպ նմուշներից մեկը²⁹:

Կանոնների խորանը եզրափակում է չորս սյուններից կազմված շքեղ տաղավառիկը: Խոյակների վրա հանգչում է կորած և կտուրր, որին պատկանում է երկրագունդը՝ խաչո վրան:

Ուսումնասիրելով Էջմիածնի ավետարանի գաղղանկարված կամարները, Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ աղպիսիք կան և՛ հայնական, և՛ բյուզանդական ձեռագրերում և ունեն օարդանկարման մի ընդհանուր ձև. որը նմանվում է Ռաբուլաի ավետարանում կիրառվածին: Էջմիածնի

ավետարանի մանրանկարները նմանվում են ոչ միայն 9-րդ և 10-րդ դարերի հայկական, այլ և նույն ժամանակաշրջանի բյուզանդական ձեռագրերին... ուրեմն նրանցում երևում են ոչ թե 6-րդ դարի սիրիական մանրանկարներին բնորոշ գծեր, այլ՝ 9-րդ և 10-րդ դարերի հայկական ու բյուզանդական ձեռագրերին հատուկ նկարագիրը³⁰:

Էջմիածնի ավետարանի մանրանկարները կազմում են ամբողջական մի նկարաշար: Ամենից առաջ պատկերված է Քրիստոսը՝ բազմած գահին, երկու սրբերի միջև, որոնք թերևս Պետրոսն ու Պողոսն են: Հետևում են ավետարանիչների, Տիրամոր ու Մանուկի և, ի վերջո, Իսահակի զոհաբերության նկարները: Այսպիսով նկարների շարքն սկսվում է ֆիգուրներով. նախ՝ գրքի հերոսները, որ Քրիստոսն է, ապա՝ գալիս են հեղինակները, այսինքն՝ ավետարանիչները:

Բուն նկարագրողումը ի հատ է գալիս հաջորդ երկու մանրանկարներում, որոնք ամփոփում են գրքի բովանդակությունն ու խորհրդանշում քրիստոնեական կրոնի և ուսմունքի հիմնական երկու սկզբունքները՝ «Աղոթող Տիրամայրը մանուկ Հիսուսի հետ», որպես մարդկության խորհրդանշան, և «Իսահակի զոհաբերությունը», իբրև խաչելության և փրկության խորհրդանշան:

Էջմիածնի ավետարանի պատմողական, պատմական բնույթի նկարաշարը Ս. Տեր-Ներսեսյանը համարում է խորհրդանշական նկարագրողում, որը պետք է Հայաստանում լայն ճանաչում գտած լինել ավելի վաղ, քան 10-րդ դարը: «Այն հանգամանքը, որ նա շարունակել է օգտագործել Հայաստանում, նրա արվեստի հնամենի էությանը համապատասխանող մի հատկանիշ է... որ Էջմիածնի ավետարանի մանրանկարները ոչ թե արտատվող նմուշներ են, այլ, ընդհակառակը, լիովին համապատասխանում են Հայաստանի նկարչական այն ժամանակաշրջանի ժառանգությանը»³¹:

²⁹ Ս. Տեր-Ներսեսյան, Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը, «Հայ արվեստը միջնադարում», Երևան, 1975, էջ 34: Հեղինակը նույն տեղում ծանոթագրում է. «Սույն բացատրության համար պարտական ենք պրն. Գ. Միլլեին: Տաղավառիկը, հավանաբար, նույնպես նույն գաղափարի հետ է առնչվում, այն թերևս ներկայացրել է սրբավայրը, որտեղ կատարվում է զոհաբերությունը»:

³¹ Նույն տեղում, էջ 49, 51,

²⁹ Carl Nordenfalk, Die Spätantiken Kanonalafeln, Textband, Göttenborg, 1938:

Օիշտ է նկատում Ա. Տեր-Ներսեսյանը, որ մոտավորապես 11—12-րդ դարերից սկսած, հայկական ձեռագրերում ավետարանի տեքստը կանոնավորապես բաժանվում էր գլուխների, ընդ որում յուրաքանչյուրն ունենում էր զարդագիր սկզբնատառ, իսկ հարակից լուսանցքում նկարված էր լինում գլխի համարը ցույց տվող մի զարդանկար: Էջմիածնի ավետարանում զարդանկարների անկանոնությունից ու զարդագիր սկզբնատառերի բացակայությունից ելնելով՝ հեղինակը գտնում է, որ ձեռագրի ընդօրինակության ժամանակ տեքստը գլուխների բաժանված չի եղել: «Մեզ հայտնի չէ,— գրում է նա,— թե հայերեն ձեռագիր ավետարանները երբ են ծիսական օգտագործման նպատակով ենթարկվել նման մասնատումների: Հնագույն շրջանի մի քանի ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 10-րդ դարում այն դեռևս սովորույթ չէր դարձել»³²: Վկայակոչել է Լազարյան, Միքեթազուրի և Բրիտանական թանգարանի 10-րդ դարի ավետարանները:

Նկատենք, սակայն, որ «Ավետարանի տեքստը կանոնավորապես բաժանված էր գլուխների» Եվսեբիոս Կեսարացու ձեռքով, և դրանք նշանակվում էին լուսանցքում բաժանարարներով: Լազարյան ավետարանը նույնպես այդպիսի նշանակումներ ունի, որոնք երևում են նաև լուսատիպ նմանահանության մեջ³³: Հետագայում է դրվել լուսանցքների զարդանկարը այդ բաժանարարի տեղում, նրա վրա, կամ նրա մոտ: Այդպես է նաև Էջմիածնի ավետարանում. շրջանակները և նրանց մեջ գրված թվերը ԺԱ կամ հաջորդ դարից են և Հովհաննեսին չեն պատկանում, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Տեր-Ներսեսյանը: Բայց բաժանարարներով նշված են գլխավոր ավետարանները Հովհաննես գրչի ձեռքով. նրան են պատկանում ինչպես գլխահամարները, այնպես էլ ցրվացանկի գրությունները, որոնք գրված են տարբեր գրիչ-գործիքներով: Այդ նույն գրերով է գրված Տոնացույցը խառն կամ շղագրով, որից հետո էլ Հովհաննեսը գրել է վերջին հիշատակագրությունը՝ երկաթագրով, ապա առ կազմվում և հանձնվում է Բղենո Նորավանքին «ի վայելումն մանկանց Նոր Սիոնի»:

³² Ա. Տեր-Ներսեսյան, Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը, «Հայ արվեստը միջնադարում», Երևան, 1975, էջ 34:

³³ Անտարան, լուսատիպ նմանահանություն, Մոսկվա, 1899, էջ... 211ա, 214ա, 222ա, 223ա, 224ա, 226ա, 227 ...



Մի քանի խոսք գույգ թերթերի մասին. ինչպես ասացինք, այժմ դրանք, որպես միմյանց կից թերթեր, գտնվում են ձեռագրի վերջին պրակի մեջտեղում (228, 229 թերթ): Հնարավոր է, որ դրանք միմյանց հաջորդող թերթեր են եղել, ինչպես երևում է նկարների բովանդակությունից, բայց իրար կից չեն եղել, այլպես դրանք կրկին կից դարձնելու հարկ չէր լինի: Բանն այն է, որ 4—5 առ լայնություն ունեցող կաշվի երկու կողմերին թելով ամուր կարելով թերթերը՝ կցել են միմյանց և ծալելով կարել պրակի մեջտեղում: Այդուհանդերձ, դրանք դարձյալ փոքր են բուն ձեռագրի թերթերից: Մեջտեղի կաշին և՛ մշակմամբ, և՛ տեսքով տարբերվում է թերթերից: Այս թերթերի բնութեանն է նվիրված Սիրարիի Տեր-Ներսեսյանի «7-րդ դարի հայկական մանրանկարչությունը և Էջմիածնի ավետարանի մանրանկարները» ուսումնասիրությունը³⁴: Վերջին երեսուն տարիներին կատարված աշխատանքները, ինչպես և հուշարձանների ու գրական սկզբնաղբյուրների առավել ուշադիր ուսումնասիրությունն հեղինակին բերել են այն համոզման, որ դեռևս շատ վաղ ժամանակներում հայկական եկեղեցիները զարդարված են եղել կրոնական թեմաներ պատկերող որմնանկարներով³⁵: Այնուհետև, քննելով այդ որմնանկարներն ու սկզբնաղբյուրները, գիտնականը եզրակացնում է. «Անտարակույս անհրաժեշտ է հայերին վերագրել այս բարձրորակ մանրանկարները ու հավաստել, որ դեռ վաղ ժամանակներից նկարազարդման մի ավետարան Հայաստանում ունեցել է հանճարեղ մշակում»:

Նշված մանրանկարների ստեղծած հետաքրքրությունը դուրս է գալիս տեղական կամ ազգային շրջանակներից, որովհետև դրանք վկայում են ավետարանի նկարազարդման մի այնպիսի տիպի մասին, որից այլ նմուշ չի պահպանվել³⁶:

Ինչպես տեսանք, Էջմիածնի ավետարանից, որպես ստույգ և ընտիր օրինակից, ընդօրինակություններ և սրբագրություններ են կատարել Մաղարդա վանքում: Բայց ընդօրինակության արժանի է համարվել ոչ միայն ավետարանի բնագի-

³⁴ Սիրարիի Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, էջ 56—63:

³⁵ Նույն տեղում, էջ 56:

³⁶ Նույն տեղում, էջ 58:

րը, այլև՝ ակարները... որմերի վրա, որպես որմնաքանդակներ:

Ավետարանը գրվելուց յոթանասուներեք տարի անց, 1063 թ., կառուցվում են այժմ կիսականգուն հուշարձաններ, որոնք, «բացի ճարտարապետական ինքնատիպ և բարձրարվեստ գործ լինելուց, իրենց զարդաքանդակների առատությամբ և վարպետության արվեստի մեծարժեք նմուշներ են: Դրանցից առանձնապես հետաքրքիր և ձեռագրի մանրանկարների հետ ստավել առնչություն ունեցողները սրբաքանդակներ են», գրում է Ս. Բարխուդարյանը³⁷: Ապա, համեմատելով քանդակներն ու ավետարանի մանրանկարները, նա նկատում է շատ սերտ կապ և նմանություն ոչ միայն նրանց ընդհանուր, կրոնական բովանդակության, այլև պոեմների դասավորության, քանդակների և մանրանկարների ֆոների ճարտարապետական և օրնամենտալ ձևավորման, ֆիգուրների մանրամասների անհամաչափության, դիմազծերի ստնության և գրեթե անշարժության մեջ: Երկու դեպքում էլ ֆիգուրների մանրամասները—մատներ, եղունգ-

ներ, մազեր, նույնպես և զգեստների մանրամասներ—մշակված են թծախնդրությամբ, իսկ ձեռագրի մանրամասների ֆոնի պայտաձև կամարներով խորանները, միևնույն կոմպոզիցիայի զուգ ֆիգուրները զուգ խորանների մեջ դնելը, հարդարանքի մեջ մեանդրի զանազան այլաձևությունների օգտագործումը սերտորեն առնչվում են թե՛ բարձրաքանդակներին, թե՛ հուշարձանի մուտքերի կամարներին և թե՛ նրանց շրջանակները զարդարող մեանդրի վերին աստիճանի վարպետորեն քանդակված և այլաձև օրինակներին:


«Ընդհանուր առմամբ,— եզրակացնում է հեղինակը,— հուշարձանի պատկերաքանդակները գրաֆիկ ու գրքահին են և մանրանկարից օրինակված լինելու տպավորություն են թողնում»³⁸:

Իսկ հետագայում մուծված թեթյեթից Մոզերի երկրպագությունն նկարից արտաներված է հենց էջմիածնի ավետարանի 10ա էջի ստորին լուսանցքում ԺԲ դարի մի նկարչի ձեռքով: Այդ ժամանակ են կատարված մյուս լուսանցազարդերն ու լուսանցանկարները:

(Ծարունակելի)

³⁷ Ս. Բարխուդարյան, «Էջմիածնի ավետարանի» գրչության վայրը, «Բաներ Մատենադարանի», Երևան, № 4, 1958, էջ 48:

³⁸ Նույն տեղում, էջ 58—59:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1990 г.)

1. Проповедь Католикоса всех армян Вазгена I на Святое Рождество в Кафедральном соборе св. Эчмиадзина, 6 января 1990 г. (стр. 3—4).

2. Обмен приветственными телеграммами и посланиями в связи с Новогодним и Рождественскими праздниками между Католикосом всех армян Вазгеном I и духовными архипастырями сестер-Церквей (стр. 5—7).

3. Поздравительные послания Католикоса всех армян Вазгена I трем преосвященным престолом, предстоятелям церковных епархий и церковным общинам Армянской Апостольской Церкви по случаю Нового Года и Святого Рождества (стр. 8—9).

4. Обмен телеграммами между Католикосом всех армян Вазгеном I и высокопоставленными государственными лицами по случаю Нового Года (стр. 10—13).

5. Телеграмма Католикоса всех армян Вазгена I Его Святейшеству Пимену Патриарху Московскому и всея Руси Православной Русской Церкви по случаю пожертвования в Фонд помощи русским беженцам из г. Баку, 10 января 1990 г. (стр. 14).

6. Приветственное послание Католикоса всех армян Вазгена I архиепископу Гюту Нагашяну по случаю переоткрытия армянской церкви в Амстердаме, 14 ноября 1989 г. (стр. 15).

7. Торжественная церемония переоткрытия армянской церкви в Амстердаме, 26 ноября 1989 г. (стр. 16—17).

8. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата о помощи, поступающей на имя Католикосата из-за рубежа и о ее распределении

пострадавшим от землетрясения, 12 января 1990 г. (стр. 18—19).

9. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата, по постановлению Верховного Духовного Совета св. Эчмиадзина об исполнении финансовых взносов ряду Фондам помощи, 25 января 1990 г. (стр. 20).

10. Новогоднее торжество в Первопрестольном Эчмиадзине, 31 декабря 1989 г. (стр. 21—28).

11. Посещение делегации Красного Креста Италии в Первопрестольный Эчмиадзин, 5 января 1990 г. (стр. 29).

12. Церковная хроника Первопрестольного Эчмиадзина за январь месяц (стр. 30—31).

13. Проповедь архиепископа Нерсеса Позапалана в Кафедральном соборе св. Эчмиадзина, 21 января 1990 г. (стр. 32—33).


14. Песнь Католикоса Акопа Шамахеци, (1759—1763), посвященная св. Эчмиадзину (стр. 34—35).

15. Нерсес Ванакан—Слово заслуги (стихотворение)—(стр. 36).

16. Иеромонах Макара Ованнисян—Траурная церемония в армянской епархии Ирака, посвященная памяти десяткам тысяч погибших армянских сыновей вследствие землетрясения в Армении, 8 декабря 1989 г. (стр. 37—39).

17. Отец Погос Левон Зекиян—Сочинение Египца как раннее свидетельство церковнологии Армянской Церкви (исследование)—(стр. 40—49).

18. Арташес Матевосян—Эчмиадзинское евангелие (исследование)—(стр. 50—60).



„ETCHMIADZIN“
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1990)

1. The sermon of Holy Christmas of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 6-th January 1990 (pp. 3—4).

2. The congratulatory cables and letters exchanged between His Holiness Vavken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the sister churches, on the occasion of the New Year and Holy Christmas (pp. 5—7).

3. The congratulatory letter of His Holiness written to the three hierarchical Sees of the Armenian Church, all diocesan prelates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (pp. 8—9).

4. Exchange of cables between His Holiness and of state high rank personalities of Armenian SSR, on the occasion of the New Year (pp. 10—13).

5. The cable of His Holiness Vasken I to His Holiness Patriarch Pimen of the Russian Church on the occasion of donation that the Armenian Church has given to the Fund of Russian Fugitives from Baku, 10th January 1990 (p. 14).

6. Message of greeting and blessing of His Holiness to His Grace Archbishop Kude Naccashian on the occasion of the reopening of the Armenian Church of Amsterdam, 14-th November 1989 (p. 15).

7. The solemn ceremony of the reopening of Amsterdam's Armenian Church, 26-th November 1989 (pp. 16—17).

8. Communiqué of the Mother See's Chancellory about the received monetary aid in the name of

Holy Etchmiadzin's Catholicosate, for the benefit of the distressed people from the earthquake of Armenia, 12-th January 1990 (pp. 18—19).

9. Communiqué of the Mother See's Chancellory about monetary allocations for a few relief funds by the decision of the Supreme Spiritual Council, 25-th January 1990 (p. 20).

10. New Year festivity in the Holy See, 31-st December 1989 (pp. 21—28).

11. The visit of Italy's Red Cross delegation to Holy See, 5-th January 1990 (p. 29).

12. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of the church festivities in the Holy See during the month of January 1990 (pp. 30—31).

13. Sermon of Archbishop Nerses Bozabalian in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 21-st January 1990 (pp. 32—33).


14. The hymn of Catholicos Hakob Shamakhelzy devoted to Holy Etchmiadzin (pp. 34—35).

15. Nerses Vanakan—Word of gratitude (poetry)—(p. 36).

16. Reverend Makar Hovhannissian—Commemoration in the Armenian diocese of Iraq devoted to the memory of thousands of Armenians sacrificed during the earthquake of Armenia, 8-th December 1989 (pp. 37—39).

17. Reverend Poghos Levon Zekian—The work of historian Yeghisheh as an ecclesiological testimony of the beginning of Middle Ages' (study)—(pp. 40—49).

18. Artaches Mathevossian—The Gospel of Etchmiadzin (study)—(pp. 50—60).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1990)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1990 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la naissance de notre Seigneur Jésus-Christ (pp. 3—4).

2. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pp. 5—7).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion des saintes fêtes de Noël et du Nouvel An (pp. 8—9).

4. Echange de télégrammes entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat de la RSS d'Arménie à l'occasion du Jour de l'An (pp. 10—13).

5. Télégramme de Sa Sainteté adressé le 10 janvier 1990 à Sa Sainteté Pimen, patriarche de l'Eglise orthodoxe russe, à l'occasion de la donation que l'Eglise arménienne a faite au Fonds d'Assistance des Rescapés Russes de Bakou (p. 14).

6. Message de bénédiction de Sa Sainteté adressé le 14 novembre 1989 à Monseigneur Kude Naccachian, délégué patriarcal pour l'Europe Occidentale et prélat des Arméniens de Paris, à l'occasion de la réouverture de l'église arménienne d'Amsterdam (p. 15).

7. Cérémonie solennelle de la réouverture de l'église arménienne d'Amsterdam (26 novembre 1989)—(pp. 16—17).

8. Communiqué du 12 janvier 1990 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant l'aide financière que le Catholicoscat d'Etchmiadzine a reçue en faveur des sinistrés du tremblement de terre survenu en Arménie le 7 décembre 1988 (pp. 18—19).

9. Communiqué du 25 janvier 1990 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant les dons que le Catholicoscat de Saint-Etchmiadzine a faits aux différents Fonds d'Assistance sur la décision du Conseil Suprême Spirituel (p. 20).

10. Festivités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées au Nouvel An (31 décembre 1989)—(pp. 21—28).

11. La délégation de la Croix-Rouge d'Italie en visite au Saint-Siège d'Etchmiadzine (5 janvier 1990)—(p. 29).

12. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1990 (pp. 30—31).

13. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 21 janvier 1990 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 32—33).

14. L'hymne du catholicos Hakob Chamakhétsi (1759—1763) dédiée à Saint-Etchmiadzine (pp. 34—35).

15. Nersès Vanakan—«Paroles de reconnaissance» (poème)—(p. 36).

16. Père Makar Hovhannissian—Commémoration en Iraq des dizaines de milliers d'Arméniens, victimes du tremblement de terre survenu en Arménie (8 décembre 1989)—(pp. 37—39).

17. Père Poghos Lévon Zékian—L'ouvrage de l'historien Yéghiché comme témoignage de l'ecclésiologie de l'Eglise arménienne du haut moyen-âge (étude)—(pp. 40—49).

18. Artachès Mathévossian—«L'évangile d'Etchmiadzine» (étude)—(pp. 50—60).

Խմբագիր՝ ԵՐՎԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ